ՔԵՆԵԹ Է. ՀԵԳԻՆ

ՀՈԳԵՎՈՐ ԱՃ

ՀՈԳԵՎՈՐ ԱԾ

ՔԵՆԵԹ Է. ՀԵԳԻՆ

ՀՈԳԵՎՈՐ ԱԾ

Growing Up Spiritually, Kenneth E. Hagin

Copyright Kenneth Hagin Ministries, Inc.,
Post Office Box 50126,
Tulsa, Oklahoma, 74150-0126
www.rhema.org
www.rhema.eu

«Հոգևոր աճ», Քենեթ Է. Հեգին
Թարգմանված է անգլերենից, 2020թ.

Հեղինակային իրավունքները պատկանում են «Kenneth Hagin Ministries, Inc.»-ին,
Փ/Ա 50126,
Թալսա, Օկլահոմա, 74150-0126
www.rhema.org
www.rhema.eu

Բոլոր իրավունքները պաշտպանված են: Այս գրքի ոչ մի մասը չի կարող օգտագործվել կամ կրկնօրինակվել ցանկացած կերպով՝ առանց գրավոր թույլտվության:

Աստվածաշնչյան մեջբերումները հայերեն Աստվածաշունչ մատյան «Արարատ» թարգմանությունից են, եթե չկան այլ նշումներ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ

ՄԱՍ I

1. ՈՐՈՇԵԼ ՁԵՐ ՀՈԳԵՎՈՐ ԱՃԸ 1
2. ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆ 5
3. ԵՐԵԽԱՅՈՒԹՅՈՒՆ 23
4. ՀԱՍՈՒՆՈՒԹՅՈՒՆ 40

ՄԱՍ II

5. ՎԱՐՎԵԼ ՁԵՐ ՀՈՐ ՀԵՏ 57
6. ՎԱՐՎԵԼ ՍԻՐՈՎ 78

ՄԱՍ III

7. ԳԻՏԵԼԻՔ ՍՏԱՆԱԼ 93

ՄԱՍ IV

8. ԻՆՉՊԻՍԻ՞ ՄԱՐԴ ԵՔ ԴՈՒՔ 119
9. ՇՆՉԱՎՈՐ ՄԱՐԴ 121
10. ՄԱՐՄՆԱՎՈՐ ՄԱՐԴ 130
11. ՀՈԳԵՎՈՐ ՄԱՐԴ 145

ՄԱՍ V

12. ՃԻՇՏ ՍՆՆԴԱԿԱՐԳ 162
13. ԽՐԱԽՈՒՍԱԿԱՆ ԽՈՍՔ 181

ՆԱԽԱԲԱՆ

Աճն ընթացք է:

Այս գրքում մենք կխոսենք *հոգևոր աճի* մասին: Մեր դասերը, որոնք, միգուցե, կապակցված չթվան, կօգնեն ձեզ հոգևորապես աճել:

Նախևառաջ, դրանք կօգնեն որոշել ձեր ներկա վիճակը և հասկանալ, թե որ հոգևոր փուլում եք: Իսկ երբ որոշեք ձեր ներկա *հոգևոր* վիճակը, դրանք կօգնեն ձեզ աճել դեպի հաջորդ փուլը:

ՄԱՍ I

Գլուխ 1

ՈՐՈՇԵԼ ՁԵՐ ՀՈԳԵՎՈՐ ԱՃԸ

«(Քրիստոսը) վեր ելավ բարձրը, գերի առավ գերությունը և մարդկանց պարգևներ տվեց... Եվ Նա մի քանիսին տվեց առաքյալներ լինելու, մի քանիսին՝ մարգարեներ, մի քանիսին՝ ավետարանիչներ, մի քանիսին՝ հովիվներ և վարդապետներ, սրբերի կատարելության համար, պաշտոնի գործի համար, Քրիստոսի մարմնի շինության համար, մինչև որ ամենքս հասնենք հավատքի և Աստծո Որդուն ճանաչելու միությանը և կատարյալ մարդ լինենք՝ Քրիստոսի կատարյալ հասակի չափով, որ

այլևս երեխա չլինենք՝ երերված ու տատանված վարդապետության ամեն քամուց մարդկանց խաբեբայությամբ, որ մոլորեցնեն խաբեբայության խորամանկությամբ: Բայց ճշմարիտ լինելով սիրո մեջ՝ աճենք Նրանում ամեն բանով, որ է գլուխը՝ Քրիստոսը»:

- Եփեսացիների 4.8,11-15

Ակնհայտ է, որ Պողոսը չէր համարում, որ Եփեսոսի եկեղեցին արդեն հասունացել էր: Դուք նկատեցի՞ք, որ նա գրում է. *«Բայց ճշմարիտ լինելով սիրո մեջ՝ ԱՃԵՆՔ...»:*

Եվ նույնպես «Մինչև որ ամենքս հասնենք հավատքի և Աստծո Որդուն ճանաչելու միությանը և ԿԱՏԱՐՅԱԼ ՄԱՐԴ ԼԻՆԵՆՔ»:

Մեր աստվածաշնչյան թարգմանության մեջ գրված է *«կատարյալ»* բառը: Կարծում եմ՝ այս բառի պատճառով մենք հստակ չենք ընկալում այս խոսքի իրական իմաստը: Աստվածաշնչի անգլերեն *«Մոֆֆաթի թարգմանության»* մեջ գրված է՝ «հասնել հասունության»: Անգլերեն *«Ընդլայնված թարգմանության»* մեջ գրված է՝ *«որպեսզի [մենք հասնենք] իրական հասուն տղամարդկության»:* Պողոսը խոսում է հոգևորապես տղամարդ կամ հասուն մարդ դառնալու մասին. *«Որ այլևս երեխա չլինենք»:* Նա խոսում է հոգևորապես աճելու, հոգևոր հասունության հասնելու և հոգևորապես լիովին հասուն տղամարդ դառնալու մասին:

Աստված ցանկանում է, որ մենք աճենք:

Եվ Աստվածաշունչը սովորեցնում է, որ կա զարմանալի նմանություն հոգևոր և ֆիզիկական աճի միջև: Այն խոսում է հոգևոր աճի առնվազն երեք փուլերի մասին, որոնք համապատասխանում են ֆիզիկական աճի երեք փուլերին: Դրանք են մանկությունը, երեխայությունը և հասունությունը:

Մենք կդիտարկենք այս փուլերը ճիշտ այս հերթականությամբ՝ առանձնացնելով որոշ ենթաբաժանումներ, և դուք կտեսնեք, որ ֆիզիկական աճի յուրաքանչյուր փուլին հատուկ հատկանիշներից մի քանիսը նույնպես վերաբերում է համապատասխան հոգևոր փուլերին:

Եվ ես հավատում եմ, որ այս կերպով մենք կորոշենք մեր հոգևոր աճը:

Գլուխ 2

ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆ

> *«Նորածին երեխաների (կամ՝ մանուկների) պես ցանկացեք այն բանավոր (կամ՝ Խոսքի) անխարդախ կաթին, որ նրանով աճեք»:*
>
> - Ա Պետրոս 2.2

Առաջին Պետրոսի այս խոսքում Աստվածաշունչն անվանում է քրիստոնյաներին *«նորածին մանուկներ»:* Բնականորեն և ֆիզիկապես, ոչ ոք չի ծնվում լիովին հասուն: Մարդիկ ծնվում են որպես մանուկներ և մեծանում են: Նմանապես, ոչ ոք չի ծնվում որպես լիովին հասուն քրիստոնյա: Դուք ծնվում եք որպես հոգևոր մանուկ, իսկ հետո մեծանում եք:

Միայն այս փաստի հիման վրա կարելի է մի ամբողջ քարոզ պատրաստել: Մենք հաշվետու

ենք լինելու այն հոգևոր մանուկների համար, որոնք ծնվել են Աստծո ընտանիքի մեջ՝ ապաշխարելով մեր եկեղեցիների խորանների առջև:

Մոտավորապես 12 տարի ես եկեղեցու հովիվ եմ եղել և կարող եմ ասել, որ մանուկներից շատ բան չի կարելի սպասել, քանի որ նրանք չեն կարող շատ բան անել իրենց համար: Նրանց պետք է օգնեն այլ մարդիկ:

Շատ հաճախ, եթե կիրակի երեկոյան փրկված մարդն ինչ-որ սխալ է գործում մինչև չորեքշաբթի երեկո, բոլորը եկեղեցում իմանում են այդ մասին և աղմուկ են բարձրացնում այդ պատճառով: Նրանք ակնկալում են, որ մինչև չորեքշաբթի երեկո կամ հաջորդ կիրակի այդ մարդը պետք է վարեր նույնպիսի օրինակելի քրիստոնեական կյանք, ինչպիսին իրենք են վարում, այնինչ պահանջվել են տարիներ, որ իրենք այդպիսին դառնան:

Մի քանի տարի առաջ ես երկու շաբաթ տևող հավաքույթներ անցկացրի մի ծառայողի համար: Այդ հավաքույթները պետք է ավելի երկարատև լինեին, բայց ես ընդհատեցի:

Մարդիկ հաճախում էին: Դահլիճում 800 տեղ կար, և ամեն երեկո այն լեցուն էր: Մարդիկ արձագանքում էին: Իրականում, մենք չէինք անցկացնում ավետարանչական ծառայություններ. ես հիմնականում սովորեցնում էի և աղոթում էի հիվանդների

համար: Այնուամենայնիվ, շաբաթ երեկոյան, երբ սկսեցի փրկության կոչով, 33 մարդ առաջ եկավ՝ փրկություն ընդունելու համար:

Նրանք կանգնեցին բեմի երկայնքով: Ես աղոթեցի նրանց համար և առաջնորդեցի աղոթքի մեջ: Դրանից հետո ուղարկեցի նրանց աղոթքի սենյակ, որտեղ այլ մարդիկ էին աղոթելու նրանց համար, և շարունակեցի ծառայել հիվանդներին:

Այդ ծառայությունը տպավորվեց իմ մեջ այն բանով, որ փրկության համար առաջ եկած 33 մարդկանց մեծ մասը 25-32 տարեկան երիտասարդ ամուսնացած զույգեր էին: Ես իմացա, որ նրանցից ոչ ոք քրիստոնյա չէր եղել և չէր անդամակցել որևէ եկեղեցու: Ծառայությունից հետո հարցրի հովվին այդ երիտասարդների մասին:

- Այդ 33-ից ոչ ոք նահանջած չէր, - ասաց Նա: - Բոլորն էլ մեղավորներ էին, որոնք առաջ էին եկել՝ փրկվելու համար:

Դա անսովոր էր: Ես հարցրի, թե արդյո՞ք նա ճանաչում էր նրանցից որևէ մեկին:

- Ես չեմ ճանաչում ոչ ոքին, - պատասխանեց նա: - Նրանք երբեք չեն եղել իմ եկեղեցում:

- Դուք վերցրի՞ք նրանց հեռախոսահամարները կամ հասցեները, - հարցրի նրան:

- Եղբա՛յր, - ասաց նա, - կարծում եմ՝ եթե նրանք

ինչ-որ բան ստացան, ապա կվերադառնան: Չպետք է անհանգստանալ նրանց մասին:

- Վաղը երեկոյան ես կավարտեմ այս հավաքույթները, - ասացի ես:

Մարդիկ ծնվում են որպես մանուկներ: Նրանք հոգատարության կարիք ունեն: Նրանք երբեք չէին եղել այդ եկեղեցում: Նրանք նախկինում երբեք չէին լսել Ամբողջ Ավետարանի քարոզումը: Նրանց հետ անհրաժեշտ էր կապ պահպանել, աղոթել նրանց համար, զրուցել և աշխատել նրանց հետ: Նրանք նորածին մանուկներ էին:

Այն բանից հետո, երբ մի հայտնի բժշկող ավետարանիչ հավաքույթներ էր անցկացնում մի քաղաքում, մի հովիվ, որն այդ հավաքույթների կազմակերպիչներից էր, ասաց ինձ.

- Ես երբե՛ք չեմ մասնակցելու քաղաքային ավետարանչությունների կազմակերպմանը: Երբե՛ք:

- Ինչո՞ւ, - հարցրի ես:

- Դրա արդյունքում իմ եկեղեցում ոչ մի մարդ չավելացավ, - պատասխանեց նա: - Ոչ ոք: Ոչ մի անդամ: Ես ոչ մի օգուտ չստացա դրանից:

- Իսկապե՞ս:

- Այո՛:

- Դու ստացա՞ր քարտեր ապաշխարության համար

առաջ եկած մարդկանց տվյալներով, - հարցրի նրան:

- Իհա՛րկե, - պատասխանեց նա, - նրանք տվեցին ինձ քարտեր, բայց այդ մարդկանցից ոչ ոք այդպես էլ չեկավ:

Նույն քաղաքում ես զրուցում էի մեկ այլ հովվի հետ միևնույն հավաքույթների մասին, և նա ասաց.

- Այդ հավաքույթների շնորհիվ մենք 29 նոր անդամ ունեցանք: Երանի՜ այդ ավետարանիչը վերադառնար:

- Ինչպե՞ս դա եղավ, - հարցրի ես: - Ինչպե՞ս եղավ, որ նրանք եկան քո եկեղեցի:

- Նրանք ոչինչ չգիտեին մեր եկեղեցու մասին, - պատասխանեց նա: - Ես ստացա նրանց կողմից լրացված քարտերը և այցելեցի նրանց: Ես չհորդորեցի նրանց գալ հենց մեր եկեղեցի, բայց պնդեցի, որ նրանք գտնեին Ամբողջ Ավետարանը քարոզող լավ եկեղեցի և սկսեին իրենց ընթացքն Աստծո հետ: Եվ նրանցից ոմանք եկան մեր եկեղեցի:

Մենք պատասխանատու ենք մանուկների համար: Մանուկները չգիտեն: Մանուկները չեն կարող ոչինչ անել իրենց համար: Բնական աշխարհում նորածին մանուկը չի կարող շատ բան անել: Նա դեռ չի կարող քայլել: Նա չի կարող հագնվել: Իրականում, նա ոչինչ չի անում իր համար: Նա միայն սնվում է, և այն էլ՝ միայն կաթով: Վերստին ծնված մարդիկ հոգևոր

մանուկներ են, և եթե նրանք ստանան Խոսքի անխարդախ կաթը, նրանք կաճեն:

Անմեղություն

Այն, ինչով նորածինը գրավում է մարդկանց, նրա անմեղությունն է: Մարդիկ «փոքրիկ անմեղ արարած» են անվանում նրանց: Ոչ ոք չի մտածում նորածնի անցյալի մասին. նա չունի անցյալ:

Գիտե՞ք, եթե դուք նորածին մանուկ եք Քրիստոսում, դուք չունեք անցյալ: Միգուցե դուք սատանայի պես չար եք եղել: Միգուցե դուք եղել եք ամենավատ մեղավորը, որը երբևէ ապրել է այս աշխարհում: Բայց անկախ ձեր անցյալից, երբ դուք վերստին ծնվեցիք, դարձաք նոր մարդ Քրիստոս Հիսուսում, և դուք այլևս չունեք անցյալ: Աստված նայում է ձեզ՝ որպես անմեղ մանկան:

Բ ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻ 5.17

«Ուրեմն, եթե մեկը Քրիստոսում է, նոր ստեղծված է. հներն անցան, ահա ամեն բան նոր եղավ»:

Թեև անմեղությունը պատկանում է քրիստոնեության մանկական փուլին, սա այն հատկանիշն է, որից մենք երբեք չպետք է մեծանանք: Մենք պետք է պահպանենք անմեղության վիճակն այն պարզ պատճառով, որ եթե այդպես չվարվենք, մենք կընկնենք սատանայի դատապարտության ներքո և կպարտվենք հոգևոր կյանքում:

Նորադարձը պարզ է, լի է հավատքով, պատրաստ է և կամենում է սովորել: Մենք մշտապես պետք է պահպանենք ուսանելի լինելու վիճակը: Այնուամենայնիվ, երբեմն, երբ մեծանում ենք, մենք դառնում ենք «ամենագետ», որին ոչ ոք ոչինչ չի կարող սովորեցնել: Նման մարդկանց ոչ ոք չի կարող օգնել, և Աստված՝ նույնպես:

Մի անգամ այն եկեղեցիներից մեկում, որը ես հովվում էի, մի խումբ տղամարդիկ հավաքվել էին դահլիճի ետնամասում երեկոյան ծառայության ավարտից հետո: Ես մոտեցա՝ նրանց ողջունելու համար, և նրանց հետ գտնվող սարկավագներից մեկն ասաց.

- Եղբա՛յր Հեգին, ի՞նչ եք մտածում այս մասին, - և նա նշեց մի աստվածաշնչյան թեմա:

Հետագայում ես իմացա, որ նա արեց դա միտումնավոր, որպեսզի ընդգրկեր ինձ իրենց քննարկման մեջ:

- Չգիտեմ, թե ինչ կերպով է ձեր զրույցն ընթացել մինչև այս պահը, - ասացի ես, - չգիտեմ, կարո՞ղ եմ ճիշտ կերպով պատասխանել այդ հարցին:

Այդ խմբից մի մարդ, որին այդ սարկավագն իսկապես ուզում էր օգնել, անմիջապես ասաց.

- Ես կասեմ ձեզ. թե՛ դուք, թե՛ ցանկացած մարդ ոչինչ չի կարող ասել ինձ այդ աստվածաշնչյան թեմայի վերաբերյալ: Ես գիտեմ այն ամենը, ինչ կարելի

է իմանալ այդ մասին: Ես գիտեմ ամեն ինչ այդ մասին:

- Եթե այդպես է, - ասացի ես, - դու գիտես ավելին, քան ես: Եվ դու գիտես ավելին, քան ցանկացած մարդ, գիտես ավելին, քան ցանկացած քարոզիչ, որին երբևէ հանդիպել եմ, կամ, որի մասին լսել եմ:

- Ես ամեն ինչ գիտեմ այդ մասին, - ասաց նա: - Ոչ ոք չի կարող ոչ մի նոր բան ասել ինձ այդ մասին:

Ճիշտն ասած, այդ մարդն ամենամեծ մանուկն էր ամբողջ եկեղեցում: Միանշանակ, նա ամեն ինչ չգիտեր այդ թեմայի մասին:

Եղե՛ք անմեղ, ուսանելի և բաց Աստծո և մարդկանց հանդեպ:

Անտեղյակություն

Մեր երկու երեխաներն արդեն մեծացել են և ունեն իրենց ընտանիքները: Հետևելով մեր երեխաներին և թոռներին՝ ես գիտեմ, որ մանուկների կարծիքով՝ իրենք կարող են բերանը դնել այն, ինչին հասնում է իրենց ձեռքը:

Նորածինն իր բերանն է դնում իր ձեռքը: Մի քիչ մեծանալով՝ նա սովորում է չորեքթաթ քայլել, և եթե պտուտակ է գտնում, դնում է բերանը, եթե գդալ է գտնում, դնում է բերանը, և եթե սարդ է տեսնում, դնում է բերանը:

Մանուկները ոչինչ չգիտեն նման բաների մասին: Նրանք չգիտեն, թե ինչ է կարելի դնել բերանը, և

ինչ՝ ոչ: Եղել են դեպքեր, երբ մանուկները մահացել են այդ պատճառով: Նրանց ձեռքում ինչ-որ թունավոր բան է հայտնվել, որը և դարձել է նրանց մահվան պատճառը:

Ես գիտեմ այդպիսի դեպք, երբ 14 ամսեկան փոքրիկը, չորեքթաթ քայլելով, վերցրել էր փչացած ուտելիքի մնացորդը, որը, հավանաբար, գցել էր ավելի մեծ երեխաներից մեկը: Մինչև հիվանդանոց հասցնելը նա մահացել էր: Դիահերձումը ցույց էր տվել, որ պատճառը փչացած ուտելիքն էր: Ծնողները տուն էին վերադարձել և գտել էին այդ ուտելիքի մնացած մասը այն սենյակի հատակին, որը նրանք հազվադեպ էին օգտագործում: Այդ փոքրիկը չգիտեր, որ չպետք է ուտեր դա. նա անտեղյակ էր դրա հետևանքից:

Ի՞նչ եմ ցանկանում ասել. նույնը ճշմարիտ է հոգևոր առումով: Մենք պետք է հետևենք, թե ինչ է մտնում մեր հոգևոր բերանը: Մենք պետք է զգուշորեն ընտրենք, թե ինչ ենք մենք կարդում՝ նույն կերպով, ինչպես որ ընտրում ենք մեր նյութական կերակուրը: Հաճախ քրիստոնյաներն անմտածված կլանում են թունավոր վարդապետություններ, և եթե նրանք ընդունում են այդ վարդապետությունները, դրանք հոգևորապես թունավորում են նրանց, թալանում են նրանց հոգևոր կյանքը և կործանում են նրանց վկայությունը:

Տարիներ առաջ մի հարանվանական եկեղեցու ծառայող լցվում է Սուրբ Հոգով և ունենում զարմանալի հանդիպում Աստծո հետ: Կարող եմ համարձակ ասել, որ ոչ մի եկեղեցում ես չգիտեի նրանից ավելի արդյունավետ հոգիներ շահող մարդու: Նա անզուգական էր: Նա փրկության էր բերում այնպիսի մարդկանց, որոնց ոչ ոք չէր կարողանում փրկության բերել: Իմ կարծիքով, եթե Ամերիկայի 12 լավագույն քարոզիչները քարոզեին և փրկության կոչ անեին մարդկանց, իսկ հետո նա բեմ բարձրանար և քարոզեր նույն հավաքույթին, նա փրկության կբերեր ավելի շատ մարդկանց, քան մյուսները՝ առաջին կոչի ժամանակ: Նա ազդեցիկ ավետարանչական ծառայություն ուներ: Բայց նա սկսեց սխալ նյութեր կարդալ, ընդունեց սխալ վարդապետություն և տարվեց դրանով: Ես տեղյակ չեմ, միգուցե ուրիշները՝ նույնպես, թե վերջին 20 տարում արդյո՞ք նա փրկել է թեկուզ մեկ մարդու:

Ես գիտեմ վերստին ծնված, Հոգով լցված հավատացյալների, որոնք հոգիներ շահողներ էին. նրանց միջոցով մարդիկ էին փրկվում և լցվում Սուրբ Հոգով: Բայց նրանք տարվեցին ինչ-որ ուսմունքներով: Նրանցից մի քանիսն ասել են ինձ. «Աստված այլ բան է անում այսօր»: Ո՛չ, Աստված այլ բան չի անում այսօր: Պարզապես նրանք շեղվել են իրենց ընթացքից: Աստված մինչև օրս զբաղվում է մարդկանց

փրկելով: Պարզապես նրանք թողել են Աստծո Խոսքի վարդապետության հիմնարար ճշմարտությունները և կենտրոնացել այնպիսի բաների վրա, որոնք գրեթե ոչ մի արժեք չունեն:

Կան բաներ, որոնք ինքնին թունավոր են: Եվ կան այլ բաներ, որոնց տարատեսակ ընկալումները գրեթե ոչինչ չեն փոխում. դրանք պարզապես էական չեն փրկության համար, և ոչինչ չի փոխվի այն բանից՝ դուք հավատո՞ւմ եք դրանց, թե՞ ոչ:

Բայց չափազանց հաճախ քրիստոնյաները սնվում են ամեն ինչով՝ բացի ճիշտ ուսմունքներից, և թունավորվում են: Եվ նրանք տանում են աշակերտներին իրենց ետևից: Եթե որևէ ուսմունք Աստծո Հոգուց է, այն կմիաբանի հավատացյալներին, քանի որ միաբանությունը Նրա կամքն է: Դուք նկատե՞լ եք, որ Եփեսացիների 4.13-ում գրված է. *«Մինչև որ ամենքս հասնենք հավատքի... ՄԻՈՒԹՅԱՆԸ»:* Այն, ինչը պառակտում է քրիստոնյաներին, Աստծո Հոգուց չէ, այլ սատանայից է: Սիրո Հոգին երբեք չի պառակտում:

Մեկ անգամ ես հյուր էի մի քրիստոնյայի տանը և նրա հյուրասենյակի սեղանին մի քանի գիրք տեսա, որոնք, ինչպես գիտեի, թունավոր ստեր էին պարունակում: Դրանք կրոնական գրքեր էին, բայց թունավոր էին (մենք պետք է զգուշորեն ընտրենք ոչ միայն աշխարհիկ, այլև կրոնական գրքերը): Այնպես որ, ես

սկսեցի խոսել այդ գրքերի մասին: Վերցրի դրանցից մեկը և ինչ-որ բան ասացի դրա մասին:

Այդ մարդը վերստին ծնված և Հոգով լցված քրիստոնյա էր, բայց նա ասաց.

- Սա հրաշալի՛ գիրք է:

- Մի՞թե, - ասացի ես:

- Այո՛:

Իմ քրիստոնեական կյանքի վաղ շրջանում ես ծանոթացել էի այդ գրքերից մի քանիսին և անմիջապես տեսել էի դրանցում գտնվող թույնը: Այնպես որ, ես բացեցի այդ գիրքը և սկսեցի բարձրաձայն որոշ հատվածներ կարդալ:

- Գիտես, եղբա՛յր Հեգին, այդ գրքերում աստվածաշնչյան գլուխների և խոսքերի հղումներ կան: Ես նայել եմ մի քանիսը, և Աստվածաշնչում հենց այդպես էլ գրված է:

- Իհա՛րկե, - պատասխանեցի ես: - Եթե այս գրքերում չարվեին աստվածաշնչյան խոսքերի մեջբերումներ, թեև անտեսելով դրանց անմիջական համատեքստը, եթե դրանցում չլինեին հատվածներ Աստվածաշնչից, ոչ ոք չէր կարդա դրանք: Եթե ուզում ես թունավորել շանը, նա պարզապես չի ուտի թույնը: Պետք է դնել թույնը մսի լավ կտորի մեջ:

Դուք հասկանո՞ւմ եք, թե ինչի մասին եմ խոսում: Պետք է դնել թույնը մսի լավ կտորի մեջ, որպեսզի

շունը վերցնի այն: Սատանան կօգտագործի սուրբգրային հատվածներ, որպեսզի դրդի ձեզ «ուտել» նման ուսմունքները, բայց և մի փոքր թույն կավելացնի դրանցում: Զգույշ եղեք՝ անկախ այն բանից, թե ում խորհրդով եք որոշ գրքեր կարդում: Մի՛ կարդացեք այն, ինչ ձեր ձեռքն է ընկնում: Քանի դեռ դուք լիովին հասուն քրիստոնյա չեք, որը կարող է ճշտորեն զանազանել, լավագույն տարբերակը ձեզ համար նման նյութեր չկարդալն է:

Տարիներ առաջ ես հավաքույթներ էի անցկացնում մի Ամբողջ Ավետարանի ծառայողի եկեղեցում, որը փայլուն կրթություն ուներ և աստվածաբանության դոկտոր էր: Մինչ այդ ես երբեք չէի տեսել ավելի մեծ անձնական գրադարան, քան այն, որը պատկանում էր այդ մարդուն: Չեմ կարող ասել, թե քանի հարյուր գրքեր էին շարված պատերի վրա գտնվող դարակներին՝ հատակից մինչև առաստաղ: Քանի որ ինքս գրքերի սիրահար եմ, հետաքրքրությամբ ուսումնասիրում էի նրա գրադարանը: Ես կարդացի նրա գրքերից մի քանիսը այն երեք շաբաթվա ընթացքում, երբ հավաքույթներ էի անցկացնում նրա եկեղեցում:

Մեկ օր, երբ մենք զրուցում էինք, նա ասաց.

- Եղբա՛յր Հեգին, ես լիովին անկեղծ կլինեմ քեզ հետ: Ես կարդացել եմ որոշ բաներ, որոնք այնքա՜ն կուզեի կարդացած չլինել: Դրանք խանգարում են ինձ: Դրանք սահմանափակում են ինձ մինչև օրս,

թեև այլևս չեմ կարդում դրանք, - և նա որոշ գրքեր անվանեց կրոնական:

Նա ավելացրեց.

- Երանի՜ երբեք կարդացած չլինեի: Այսօր դրանք սահմանափակում են իմ հավատքը: Այսօր դրանք խանգարում են ինձ հավատալ Աստծուն:

Ավելի լավ կլիներ, եթե նա երբեք չընդգրկեր դրանք իր գիտակցության մեջ: Բայց նա արել էր դա:

Երբ ես սկսում եմ կարդալ այնպիսի բան, ինչը խլում է իմ հավատքը, փոխարենը հավատք տալու, իմ ողջամտությունը բավական է լինում, որ անմիջապես մի կողմ դնեմ դա: Զգույշ եղեք, թե ինչով եք սնվում: Կա մի արտահայտություն մարդու բնական սննդակարգի վերաբերյալ. «Դուք այն եք, ինչ ուտում եք»: Նույնը ճշմարիտ է հոգևոր առումով. «Դուք այն եք, ինչ կարդում եք»:

Բարկացկոտություն

Մանուկները հեշտորեն երես են առնում: Եվ երբ երես են առնում, նրանք բարկացկոտ են դառնում: Նրանց հեշտորեն կարելի է երես տալ այն աստիճան, որ ստիպված կլինեք ամբողջ գիշեր վառ թողնել լույսերը: Նրանց կարելի է հեշտորեն երես տալ այն աստիճան, որ ստիպված կլինեք ամբողջ օրը ձեր գրկում պահել նրանց. նրանք մանուկներ են:

Բայց Աստվածաշունչը խոսում է այն մասին, որ մանուկները մեծանում են: Դավիթն ասաց. *«Իրավի իմ անձը հանդարտեցրի և հանգստացրի իր մոր կաթից կտրվածի պես: Իմ անձը կաթից կտրվածի նման է»* (Սաղմ. 131.2): Աստվածաշնչում գրված է Իսահակի մասին. *«Եվ տղան մեծացավ և կաթից կտրվեց, և Աբրահամը մեծ խնջույք արեց Իսահակի կաթից կտրված օրը»* (Ծննդ. 21.8):

Այն օրը, երբ քրիստոնյաներն այնքան են մեծանում, որ դադարում են կերակրվել շշով, պետք է նշանավոր օր լինի: Սակայն գիտե՞ք, որ այդպես չէ: Այդ օրը պետք է խնջույքի օր լինի, բայց այն լացի օր է: Ես գիտեմ դա. շուրջ 12 տարի հովիվ եմ եղել: Ինձ որևէ կերպով չի զարմացնում, որ մեր եկեղեցիներից մի քանիսում մենք չենք կարողանում անել ավելին: Երբ մենք նորածին ենք բերում, նրա համար շիշ չի գտնվում: Բոլոր շշերը զբաղված են: Եվ ավելի մեծ մանուկները չեն պատրաստվում տալ իրենց շշերը: Բոլոր օրորոցները հոգևոր մսուրում զբաղված են: Եվ ավելի մեծ մանուկները չեն ցանկանում վեր կենալ իրենց օրորոցներից և տալ դրանք:

Վերջին եկեղեցում, որը ես հովվում էի, կային երկու կանայք, որոնք հարևաններ էին: Թող որ նրանք օրհնված լինեն: Չգիտեմ, թե որքան ժամանակ էր նրանք փրկվել էին, մկրտվել էին Սուրբ Հոգով և խոսում էին լեզուներով: Բայց դա դեռ

հասուն քրիստոնյա չի դարձնում մարդուն: Նրանք աշխարհի ամենամեծ մանուկներն էին: Անհրաժեշտ էր վազել ու վազել նրանց ետևից: Նրանք ուզում էին, որ ինչ-որ մեկը հոգ տաներ իրենց մասին: Նրանք եկեղեցի չէին հաճախում կիրակի օրը, որպեսզի ինչ-որ մեկն այցելեր իրենց երկուշաբթի օրը և հոգ տաներ իրենց մասին:

Եվ ես դադարեցի անել դա:

Երբ մեր սարկավագներից մեկը հիշեցրեց ինձ նրանց մասին, ես ասացի.

- Եղբա՛յր, եթե ուզում ես այցելել նրանց, այցելի՛ր: Բայց ես այլևս չեմ այցելելու նրանց: Մինչև իմ կյանքի ավարտը կամ քանի դեռ ես հովվում եմ այս եկեղեցին, երբեք ոտք չեմ դնի նրանց տները: Ես հոգնել եմ իմ ժամանակը նրանց հետ վատնելուց: Նրանք մանուկներ են, որոնք ուզում են մանուկ մնալ: Կան այլ մարդիկ, որոնց կարելի է օգնել: Կան նոր մարդիկ, որոնց պետք է այցելել: Կան այլ փրկվածներ, որոնց պետք է կրթել:

Անկարելի էր որևէ բան սովորեցնել այդ մեծահասակ մանուկներին: Այնպես որ, ես դադարեցի այցելել նրանց և այլևս ոտք չդրեցի նրանց տները հաջորդ 18 ամսվա ընթացքում, երբ հովվում էի այդ եկեղեցին: Եվ գիտե՞ք ինչ, երբ նրանք տեսան, որ ես այլևս չէի այցելում նրանց, նրանք սկսեցին եկեղեցի հաճախել ավելի հավատարմորեն, քան երբևէ:

Մենք պետք է բավականաչափ հոգևոր աճ ունենանք, որ ոչ թե ինչ-որ մեկը ստիպված լինի այցելել մեզ, առաջ մղել, աջակցել, աղոթել մեզ համար և սնուցել մեզ, այլ՝ որ ինքներս կարողանանք օգնել մարդկանց: Երբ գալիս է կաթից կտրվելու ժամանակը, մենք պետք է գոհանանք Աստծուց դրա համար:

Իրականում, եթե մանուկը պատշաճ կերպով սնուցվել է, երբ գա կաթից կտրվելու ժամանակը, նա կհրաժարվի շշից: Հակառակ դեպքում նա շարունակ լաց կլինի ձեր գրկում: Եթե դուք պարզապես սնուցեք մարդկանց կաթով, նրանք կաճեն: Պետրոսն ասում էր. *«Ցանկացե՛ք Խոսքի անխարդախ կաթին, ՈՐ ՆՐԱՆՈՎ ԱՃԵՔ»:*

Երբեմն որոշ հովիվներ ասում էին ինձ, որ ես մի փոքր ծանր հոգևոր սնունդ էի տալիս իրենց եկեղեցական համայնքին.

- Եղբա՛յր Հեգին, ես գիտեմ, որ իմ եկեղեցին կարող էր ավելի լավ վիճակում լինել, բայց դու պետք է զգույշ լինես: Նրանք ընդամենը կարող են մի փոքր կաթ խմել: Ես ընդամենը մի փոքր կաթ եմ տալիս նրանց:

- Ո՛չ, դու նույնիսկ կաթ չես տալիս, - պատասխանում էի ես: - Դու 30 տարի է՝ հովվում ես այս եկեղեցին: Եթե նրանք կաթ ստանային, կաճեին: Պետրոսն ասաց, որ մենք աճում ենք դրանով:

Մարդիկ չէին աճում, ինչը նշանակում էր, որ նրանք կաթ չէին ստանում: Նրանք ընդամենը զտած կաթի պես մի բան էին ստանում, որում եղած ամբողջ ճարպը հեռացվել է:

Մանուկները հեշտորեն հուսալքվում են, հեշտորեն շեղվում են և հեշտորեն վիրավորվում են: Տերը ցանկանում է դարձնել մեզ այնպիսին, որ մենք հեշտորեն չհուսալքվենք: Նա ցանկանում է դարձնել մեզ այնպիսին, որ մենք հեշտորեն չշեղվենք: Նա ցանկանում է դարձնել մեզ այնպիսին, որ մենք հեշտորեն չվիրավորվենք:

Գլուխ 3

ԵՐԵԽԱՅՈՒԹՅՈՒՆ

«Որ այլևս երեխա չլինենք...»:

- Եփեսացիների 4.14

Այս խոսքում Պողոսը գրում է հոգևոր երեխաների մասին: Նա գրեց այս նամակը Եփեսոսի եկեղեցուն, և մենք գիտենք, որ այդ եկեղեցում կար առնվազն 12 տղամարդ: Գործք 19.7-ում գրված է 12 տղամարդու մասին, և ես համոզված եմ, որ տղամարդիկ այդ եկեղեցում ավելի շատ էին: Ասելով՝ *«որ այլևս երեխա չլինենք»,* Պողոսը նկատի ուներ, որ նրանք այլևս չպետք է հոգևոր երեխաներ լինեին, այլ պետք է հոգևորապես աճեին:

Հոգևոր աճի երեխայության փուլի հատկանիշները նման են երեխայության ֆիզիկական հատկանիշներին:

Անկայունություն

Երբ իմ որդին 13 կամ 14 տարեկան էր, ես պատվիրեցի նրան հնձել մեր տան բակի սիզամարգը: Տեսնելով, թե ինչպես նա բռնեց սիզամարգ հնձող մեքենայի բռնակները և միացրեց շարժիչը, դուք կմտածեիք, որ նա հնձելու է այն 30 րոպեում: Այդ ժամանակ մենք հրովի սիզամարգ հնձող մեքենա ունեինք, բակն այնքան էլ մեծ չէր, և նա կարող էր խոտն ամբողջությամբ հնձել 45 րոպեում, եթե աշխատեր առանց կանգ առնելու: Ես պետք է գործով քաղաք գնայի: Մեկուկես ժամ անց, երբ վերադարձա, սիզամարգ հնձող մեքենան մեր բակի մեջտեղում էր: Նա մոտավորապես երկու շարք էր հնձել իմ գնալուց հետո: Ես սկսեցի որոնել նրան և հարցրի կնոջս, թե որտեղ է նա:

- Չգիտեմ, - պատասխանեց նա: - Մի՞թե նա քեզ հետ չէր գնացել:

- Ո՛չ, - ասացի ես:

Ես նայեցի՝ տեսնելու համար, թե արդյո՞ք դրսում ֆուտբոլ խաղացող տղաներ կային: Գիտեի, որ եթե դրսում տղաներ լինեին, նա նրանց հետ էր լինելու: Ես գտա խաղացող տղաների, և իմ տղան նրանց հետ էր:

Նա անկայուն էր: Անկարելի էր վստահել նրան: Կա մի հայտնի ասացվածք, որ անկարելի է հասուն մարդու գլուխը դնել երեխայի ուսերին: Սա ճշմարիտ է նաև հոգևոր առումով:

Մի մայր պատվիրում է իր դստերը.

- Լվա՛ ափսեները և ավլի՛ր խոհանոցը: Ես գնում եմ մեր հարևանուհու տուն և շուտով կվերադառնամ:

Աղջիկը սկսում է իր գործը, բայց երբ մայրը վերադառնում է, ափսեները դեռ լվացված չեն կամ կիսատ են լվացված, իսկ դուստրը՝ Մերին, տանը չէ: Նա դուրս է գալիս տնից և կանչում է նրան: Որոշ ժամանակ անց նա գնում է մյուս հարևանի տուն և գտնում է Մերիին այնտեղ՝ Սյուզիի հետ տիկնիկներով խաղալիս:

Բնական երեխաներն անկայուն են... հուսալի չեն... տպավորվող են... անհաստատ են: Նույնպիսին են նաև հոգևոր երեխաները:

Երբ եկեղեցում նոր հովիվ է գալիս, բոլորը հաճախում են հավաքույթի: Երբ ես գնում էի նոր եկեղեցի՝ որպես հովիվ, շուրջս հավաքվում էին մարդիկ, յուրաքանչյուրը թփթփացնում էր ուսիս, սեղմում էր ձեռքս և ասում. «Եղբա՛յր Հեգին, ուզում եմ, որ իմանաս, որ ես քեզ հետ եմ: Ես 100 տոկոսով քեզ հետ եմ և կանգնած եմ քո թիկունքին»: Անցնում էր վեց ամիս, և ես չէի տեսնում նրանց: Անցնում էր ինը ամիս, և ես կրկին չէի տեսնում նրանց: Մտածում էի. «Նրանք կանգնած են իմ թիկունքին, քանի որ այդպես ասացին»: Խնդիրն այն էր, որ նրանք այնքան հեռու էին կանգնած, որ անհասանելի էին ինձ: Նրանք այնքան հեռու էին կանգնած, որ լիովին անօգտակար էին ինձ համար:

Հետագայում ես ծառայում էի որպես ավետարանիչ և հավաքույթներ էի անցկացնում բազմաթիվ եկեղեցիներում: Առաջին կամ երկրորդ ծառայություններին ոմանք մոտենում էին ինձ, սեղմում էին ձեռքս, գրկում էին պարանոցս և ասում. «Աստված օրհնի՛ ձեզ, ես ձեզ հետ եմ: Ես հավատում եմ, որ սա պետք է մեզ: Մենք գալու ենք այս հավաքույթներին»: Մենք հավաքույթներ էինք անցկացնում ևս երկու կամ երեք շաբաթ և այդպես էլ չէինք տեսնում այդ մարդկանց: Վերջին կիրակի օրը, երբ հովիվը պատրաստվում էր հայտարարել հավաքույթների ավարտի մասին, նրանք վազելով մոտենում էին ինձ, այնպես էին նայում հովվին, ասես նա ոչինչ չէր հասկանում, և ասում էին. «Միայն թե չասեք, որ հավաքույթներն ավարտվում են»: Սակայն նրանց համար հավաքույթներն ավարտվել էին հենց սկզբից:

Հետաքրքրասիրություն

Երեխաները խիստ հետաքրքրասեր են: Եթե ինչ-որ մեկը տոպրակով մտներ մեր խոհանոց և դներ այն խոհանոցի սեղանի մոտ, մեր երկրորդ թոռնուհին, որն այդ ժամանակ 8 տարեկան էր, կմտներ այդ տոպրակի մեջ: Նա շատ հետաքրքրասեր էր և կուզեր իմանալ, թե ինչ կար դրանում:

Հոգևոր երեխաների մի մասն այդպես էլ իրական հոգևոր աՃ չի ունեցել, թեև նրանք ունեցել են և՛ ժամանակ, և՛ հնարավորություն: Հենց որ նրանք մի փոքր

բամբասանք են լսում, անմիջապես հարցնում են. «Ո՞ւմ մասին է դա»: Նրանք լցված են հետաքրքրասիրությամբ:

Հետաքրքրասիրությունը երեխայի հատկանիշ է: Եթե ասեք երեխային, որ չի կարելի բացել պահարանը, նա անպայման կբացի այն: Հոգևոր երեխաները նույնքան հետաքրքրասեր են: Նրանք միշտ քիթը խոթում են այլ մարդկանց գործերի մեջ: Աստծո Խոսքը սովորեցնում է մեզ զբաղվել մեր գործով: Աստված չի ուզում, որ խոթեք ձեր քիթն այլ մարդկանց գործերի մեջ. սովորե՛ք խաղաղ ապրել և զբաղվել ձեր գործերով:

Ես մի եկեղեցի էի հովվում, և մի մարդ այդ եկեղեցուց ուզում էր իմանալ, թե ինչպես էի տնօրինում իմ միջոցները: Ես ասացի.

- Իսկ դո՞ւ ինչպես ես տնօրինում քո միջոցները:

- Դա քո գործը չէ, - պատասխանեց նա:

- Նույն կերպով էլ, քո գործը չէ, թե ինչպես եմ ես տնօրինում իմ միջոցները:

Նա հասկացավ ինձ: Գիտեք, եկեղեցու անդամների գործը չէ, թե ինչպես է հովիվը տնօրինում իր միջոցները, ինչպես որ հովվի գործը չէ, թե ինչպես են եկեղեցու անդամներն անում դա:

Հետաքրքրասիրությունը երեխայի հատկանիշ է:

Շատախոսություն

Երեխաները չեն հասկանում լռության արժեքը: Նրանք զրուցասեր են: Եվ դուք կպարզեք, որ հոգևոր աճի երեխայական հասակում գտնվող մարդիկ գրեթե մշտապես խոսում են:

Դուք գիտե՞ք, որ Աստծո Խոսքն ասելիք ունի այս մասին: Այն հայտնում է. *«Շատախոսության մեջ հանցանք պակաս չի լինի»* (Առակ. 10.19) և *«Հիմարի ձայնը [գալիս է] շատախոսությունից»* (Ժողով. 5.3): Մենք պետք է սովորենք լուռ լինել: Իսկ երեխան անդադար շաղակրատում է:

Ես մի դեպք եմ հիշում, երբ իմ որդին երեք տարեկան էր: Մի կիրակի՝ հավաքույթից հետո, մենք ուշ էինք պառկել քնելու: Ես երկու անգամ քարոզել էի և հոգնած էի: Բոլորս քնում էինք մի մեծ սենյակում: Նրա մահճակալը սենյակի մյուս կողմում էր: Մեր փոքրիկն օրորոցի մեջ էր: Լույսերն անջատած էին, և սենյակում մութ էր:

- Հայրի՛կ, - ասաց նա:

Ես դեռ չէի քնել, բայց մտածեցի, որ եթե քնած ձևանայի, նա կհանդարտվեր և կքներ:

- Հայրի՛կ:

Ես ոչինչ չպատասխանեցի:

- Հայրի՛կ:

Ես ոչինչ չպատասխանեցի:

- Հայրի՛կ:

Ես ոչինչ չպատասխանեցի, և նա մի փոքր բարձրացրեց ձայնը.

- Հայրի՛կ:

Ի վերջո, կինս հրեց ինձ և կամացուկ ասաց.

- Ինչո՞ւ չես պատասխանում երեխային:

- Որովհետև գիտեմ, որ նա սկսելու է խոսել ինձ հետ, - շշնջացի ես ի պատասխան:

Նա երեք տարեկան էր և ոչինչ չգիտեր լռության արժեքի մասին: Նա կսկսեր խոսել, և նրան լռեցնելն անկարելի կլիներ: Ես մտածեցի, որ եթե չպատասխանեի, նա կկարծեր, որ քնած էի, և կլռեր: Բայց նա ավելի ու ավելի բարձր էր ձայն տալիս:

- Հայրի՛կ: Հայրի՛կ: Հայրի՛կ:

Վերջապես ես պատասխանեցի.

- Ի՞նչ է, տղա՛ս:

- Վաղն ի՞նչ օր է:

- Լռի՛ր և քնի՛ր, - ասացի ես: - Հիմա քնելու ժամանակն է:

- Բայց վաղն ի՞նչ օր է:

- Երկուշաբթի է: Իսկ հիմա քնի՛ր:

- Իսկ մյո՞ւս օրը:

- Երեքշաբթի:

- Իսկ վաղը միշտ երկուշաբթի՞ է:

- Ո՛չ, վաղը միշտ երկուշաբթի չէ: Երբ վաղը գա, հաջորդ օրը երեքշաբթի կլինի:

- Չէ՞ որ դու ասացիր՝ երկուշաբթի:

- Այո՛, երկուշաբթի, բայց երբ երկուշաբթի լինի, հաջորդ օրը երեքշաբթի կլինի:

- Եթե վաղը երկուշաբթի է, ինչպե՞ս կարող է վաղը երեքշաբթի լինել:

- Ուղղակի այդպես է:

- Իսկ մյո՞ւս օրը:

- Մյուս օրը չորեքշաբթի է:

- Իսկ վաղը միշտ լինելո՞ւ է:

- Այո՛: Հիմա լուռ մնա և քնի՛ր:

- Իսկ մյո՞ւս օրը:

- Հինգշաբթի:

- Իսկ մյո՞ւս օրը:

- Ուրբաթ:

- Իսկ մյո՞ւս օրը:

- Շաբաթ:

- Իսկ մյո՞ւս օրը:

- Կիրակի: Այսօր կիրակի է:

- Իսկ այսօր միշտ կիրակի՞ է:

- Ո՛չ, միայն այսօր է կիրակի: Երբ երկուշաբթի լինի, նորից այսօր կլինի:

- Չէ՞ որ դու ասացիր, որ երկուշաբթին վաղն է:

- Դու արդեն շփոթեցրիր ինձ: Իսկ հիմա լուռ մնա, և եթե լուռ չմնաս, ես վեր կկենամ և կպատժեմ քեզ:

Բնական երեխաների պես, հոգևոր երեխաներն այդպես էլ չեն հասկանում լռության արժեքը: Մենք պետք է զգույշ լինենք, թե ինչ ենք խոսում:

Կար մի մարդ, ում անունը Հայր Նեշ էր: Նա նախապես գնում էր Չարլզ Ֆիննիի հավաքույթների վայրերը և համախմբում էր մի քանի մարդու, որպեսզի աղոթեր արթնության համար: Ինչ-որ մեկը հարցրեց Ֆիննիին.

- Դու ճանաչո՞ւմ ես Հայր Նեշ անունով քարոզչի:

- Այո՛, - պատասխանեց Ֆիննին: - Նա նախապես գնում է իմ հավաքույթների վայրերը և աղոթում է արթնության համար: Ես չեմ վճարում նրան աղոթելու համար: Նա ինքն է հանձն առել դա:

- Ինչպիսի՞ մարդ է նա, - հարցրեց այդ անձնավորությունը:

- Դե, - ասաց Ֆիննին, - նա նման է բոլոր աղոթող մարդկանց. նա քչախոս է:

Մարդիկ, որոնք մշտապես խոսում են, սովորաբար հանցավոր են առնվազն երեք մեղքի մեջ: Նրանք հաճախ հանցավոր են *չարախոսության* մեջ. նրանք խոսում են մարդկանց մասին, որոնք այդ պահին ներկա չեն, և քննարկում են նրանց սխալներն ու ձախողումները: Նրանք հաճախ հանցավոր են *դատարկախոսության* մեջ. նրանք մշտապես խոսում են իրենց մասին՝ ինչ եմ ես արել, ինչ եմ ես անելու, որտեղ եմ ես եղել: Եվ հաճախ հանցավոր են *անմտորեն խոսելու* մեջ՝ ժեստերի, կատակների և այլ անօգուտ բաների մեջ:

1. Չարախոսություն. խոսել մարդկանց մասին, որոնք ներկա չեն, և քննարկել նրանց սխալներն ու ձախողումները:

(Շուտով կավարտենք աճին վերաբերող այս բացասական կողմը և կանցնենք դրական կողմին: Բայց այս մասին նույնպես պետք է խոսել):

Երբ որդիս 12 տարեկան էր, ես հավաքույթներ էի անցկացնում Օկլահոմայում: Նա չորսօրյա դպրոցական արձակուրդ ուներ, այնպես որ, ես Տեխասից նրան ինձ մոտ բերի, որպեսզի մի քանի օր անցկացնի ինձ հետ: Ես մշտապես ճանապարհորդում էի և չէի կարողանում շատ ժամանակ տրամադրել նրան: Մենք մնացինք այդ եկեղեցու հովվական տանը, որտեղ ապրում էր հովիվը՝ կնոջ հետ:

Մեկ օր, սեղանի շուրջ, այդ հովիվը սկսեց խոսել իր եկեղեցու անդամներից մի քանիսի մասին՝ պատմելով նրանց սխալների և ձախողումների մասին: Ես նկատեցի, որ որդիս մեծ ուշադրությամբ նայում էր նրան:

Ի վերջո, հենց սեղանի շուրջ նրան ասացի.

- Եղբա՛յր, ես կուզեի, որ այդպես չխոսեիր տղայիս ներկայությամբ:

Նա հանկարծակիի եկած նայեց ինձ:

- Ես կգերադասեի, որ դու հայհոյեիր նրա ներկայությամբ, - ասացի: - Դա չէր ազդի նրա վրա: Նա բոլորովին ուշադրություն չէր դարձնի դրան: Բայց իմ հովվության 12 տարվա ընթացքում նա միշտ մտածել է, որ մեր եկեղեցիների բոլոր անդամները հրեշտակներ են:

Նրանք հրեշտակներ չէին, ինչպես և այդ հովվի եկեղեցու անդամները, բայց Քենը մտածում էր, որ նրանց բոլորի մեջքին թևեր էին աճում. նա չգիտեր, որ պարզապես տեսնում էր նրանց դուրս ցցված թիակները: Նա երբևէ նույնիսկ մեկ բառ չէր լսել իր ծնողներից որևէ սարկավագի, Կիրակնօրյա դպրոցի ուսուցչի, եկեղեցիների վերակացուի կամ եկեղեցու անդամի մասին:

Դուք պետք է զգույշ լինեք, թե ինչ եք խոսում երեխաների, ինչպես նաև այլ մարդկանց ներկայությամբ:

Ես հիշում եմ մի թանկ անձնավորության: Ամեն անգամ, երբ մենք աղոթքի խնդրանքներ էինք հավաքում, այդ կինն ասում էր. «Աղոթե՛ք այսինչ մարդու համար», և տալիս էր իր ամուսնու անունը: Երբեմն նրա ամուսինը եկեղեցի էր հաճախում նրա հետ, սակայն, միևնույն է, այդ կինն առանց մտածելու ոտքի էր կանգնում և խնդրում էր աղոթել նրա համար:

Այդ մարդը համակրում էր ինձ, և ես այցելում էի նրան: Մենք խոսում էինք Աստվածաշնչից: Ճիշտն ասած, նա ավելի լավ էր ծանոթ Աստվածաշնչին, քան իր կինը: Եվ զրուցելով նրա հետ՝ իմացա որոշ բաներ: Ես հասկացա, թե որն էր նրա կնոջ սխալը: Ես փորձեցի այդ մասին խոսել կնոջ հետ, բայց ապարդյուն:

Մի չորեքշաբթի երեկո, երբ դահլիճում ոչ ոք չկար՝ բացի այդ կնոջից, նա կրկին ասաց.

- Աղոթե՛ք այսինչ մարդու համար:

- Քո՛ւյր, մենք չենք աղոթի նրա համար, - պատասխանեցի ես անմիջապես ամբիոնից, - մենք չե՛նք աղոթի: Բավակա՛ն է խնդրեք աղոթել նրա համար: Մենք աղոթել ու աղոթել ենք, բայց դուք չեղյալ եք դարձնում մեր բոլոր աղոթքները: Ամեն անգամ, երբ ձեր կարծիքով, ինչ-որ կին եկեղեցում վատ աչքով է նայում ձեզ, դուք տուն եք վազում և պատմում եք ձեր ամուսնուն, թե որքան վատ անձնավորություն է նա: Եվ եթե քարոզիչը չի քարոզում այն, ինչ ձեզ դուր է գալիս, դուք տուն

եք վազում և պատմում եք նրան, թե որքան վատ անձնավորություն է այդ քարոզիչը: Ես գիտեմ այդ մասին: Ես զրուցել եմ ձեր ամուսնու հետ: Նա չէր իմանա այս ամենը, եթե դուք չպատմեիք նրան: Նա ավելի լավ գիտի, թե ինչ է կատարվում այս եկեղեցում, քան այս եկեղեցու ցանկացած անդամ: Դուք տուն եք վազում և պատմում եք նրան այն ամենը, ինչ կա, և շատ բաներ, որոնք չկան: Դուք ներկայացնում եք յուրաքանչյուրի սխալները, ձախողումները և թերացումները: Եվ քանի դեռ այդպես եք վարվում, դուք չեղյալ եք դարձնելու մեր աղոթքները:

Ես սովորեցի գնահատել այդ թանկ անձնավորությանը: Նա բավականին ողջամիտ գտնվեց. լսեց ինձ և ուղղվեց: Նա փայլուն քրիստոնյա դարձավ: Եվ նրա ամուսինը փրկվեց: Թվում էր՝ ես խստորեն վարվեցի նրա հետ, բայց նա ընդունեց դա: Նա տգետ չէր: Մարդիկ, որոնք գոնե մի փոքր խելամիտ են, հասկանում են, երբ ճշմարտությունն եք ասում: Կան մարդիկ, որոնք այդպես էլ չեն հասկանա, և նրանց օգնելու համար դուք պարզապես պետք է անեք այն, ինչ կախված է ձեզնից:

2. Դատարկախոսություն. մշտապես խոսել սեփական անձի մասին:

Երբեմն ես գրեթե տհաճություն եմ զգում, երբ եկեղեցի եմ գնում: Բոլոր երգերն այն մասին են, թե ինչ եմ ես արել, ինչպես էի զգում ինձ, և ինչ է

կատարվել: Մենք հազվադեպ ենք երկրպագում Տիրոջը: Զարմանալի չէ, որ Աստված գործում է մեր միջև այն չափով, որ չափով գործում է հիմա, և ոչ ավելին: Աստվածաշնչում՝ Գործք առաքելոց գրքի 13-րդ գլխում, գրված է Անտիոքում գտնվող մի խմբի մասին. *«Սրանք երբ որ Տիրոջը պաշտոն էին մատուցում* (կամ՝ ծառայում էին) *և ծոմ էին պահում, Սուրբ Հոգին ասաց...»* (խս. 2): Նրանք չէին ծառայում մեկը մյուսին:

Եթե մենք բավականաչափ խոնարհ և նվիրված լինենք, Աստված կգործածի մեզ: Ինձ պարզապես դուր չի գալիս, որ մենք տպավորություն ենք թողնում, թե կարևոր և յուրահատուկ ենք: Սխալ չէ պատմել, թե ինչպես է Աստված գործածում մարդկանց, և ուրախանալ Աստծո գործերի համար: Այնուամենայնիվ, ես ներկա եմ եղել այնպիսի հավաքույթների, որտեղ կազմակերպիչները պարծենում էին իրենց գործերով այն աստիճան, որ դա սրտխառնոց էր առաջացնում:

Փա՛ռք Աստծուն Նրա օրհնությունների համար: Եվ զգույշ լինենք, որ չտարվենք դատարկախոսությամբ:

3. Անմտորեն խոսել

Ընկերական լինելը սխալ չէ, և երբեմն ծիծաղելի բաներ ասելը՝ նույնպես, բայց հնարավոր է չափից շատ ժամանակ տրամադրես դրան: Աստվածաշունչը նույնիսկ խոսում է ոչ վայելուչ ժեստերի և կատակնե-

րի մասին: Գրված չէ, որ դրանք միանշանակ մեղք են համարվում, այլ՝ որ դրանք վայելուչ չեն:

ԵՓԵՍԱՑԻՆԵՐԻ 5.4

«Եվ գարշություն, կամ հիմար խոսքեր, կամ խեղկատակություն, որ չեն վայելում, այլ մանավանդ՝ գոհություն»:

Մեկ անգամ հավաքույթներ էի անցկացնում մի ծառայողի եկեղեցում, որը հրաշալի անձնավորություն էր: Ես հաճախ եմ մտածում նրա մասին: Հիմա նա զգալիորեն փոխվել է: Բայց ես երբեք չէի տեսել այդքան շատ անեկդոտներ պատմող մարդու, որքան նա էր այդ ժամանակ: Մենք օրը երկու ծառայություն էինք անցկացնում, և ամեն անգամ, երբ տեսնում էի նրան, նա նոր անեկդոտ էր պատմում ինձ: Չեմ հասկանում, թե ինչպես էր կարողանում հիշել դրանք: Նա պատմում էր ինձ օրական առնվազն երեք լիովին նոր անեկդոտ՝ առավոտյան ծառայության ժամանակ, երեկոյան ծառայության ժամանակ և հավաքույթներից հետո, երբ գնում էինք ճաշելու: Եվ նա կրկին պատմում էր ևս մեկ անեկդոտ, իսկ երբեմն՝ մի քանիսը:

Սովորաբար ես անգիր մեջբերում եմ այն սուրբգրային հատվածը, որի մասին քարոզում եմ, և մեկ անգամ, երբ գնացինք ճաշելու, ասացի նրան.

- Երանի՜ ես ունենայի քո հիշողությունը, որպեսզի

հիշեի հատվածներ Աստվածաշնչից: Դու կկարողանաս աստվածաշնչյան հատվածներ հիշել, եթե նույնքան ժամանակ տրամադրես դրանց, որքան տրամադրում ես անեկդոտներին: Ինչպե՞ս ես հիշում այդ անեկդոտները: Ես չեմ կարողանում հիշել, երբ փորձում եմ անեկդոտ պատմել, ես ամեն ինչ շփոթում եմ:

Պատճառն այն է, որ ես հետաքրքրված չէի դրանցով:

Ես չեմ ուզում ասել, որ ծիծաղաշարժ պատմություններ պատմելը սխալ է: Ընդհանրապես դա նկատի չունեմ: Ես նկատի ունեմ, որ սխալ է առաջնահերթություն տալ նման բաներին և ամբողջ օրը շաղակրատել այդ մասին՝ անտեսելով Աստծուն: Ես խոսում եմ այն բաների մասին, որոնք խոչընդոտում են մեր հոգևոր աճը: Մենք երբեք հոգևորապես չենք աճի, եթե սնվենք միայն նման բաներով և խոսենք դրանց մասին:

Ես քարոզիչ եմ և շփվում եմ քարոզիչների հետ ավելի շատ, քան այլ մարդկանց հետ: Տարօրինակ է, բայց երբեմն, փորձելով շփվել քարոզիչների հետ, դժվար է գտնել նրանց, ում հետ կարելի է լրջորեն խոսել հոգևոր թեմաներից: Ես հավաքույթներ եմ անցկացրել բազմաթիվ եկեղեցիներում՝ Ամբողջ Ավետարանի եկեղեցիներում, և քարոզիչները հաջորդաբար ուզում են խոսել միայն ձկնորսության և որսորդության մասին, կամ՝ թե քանի գլուխ անա-

սուն ունեն իրենց ռանչոյում, քանի տուն կամ որքան ունեցվածք ունեն: Իհարկե, ձկնորսության գնալը սխալ չէ: Որսի գնալը՝ նույնպես: Սխալ չէ ունեցվածք ունենալը: Ես ուրախ եմ, որ այդ մարդիկ սեփականություն ունեն: Բայց երբ փորձում ես հիշատակել աստվածային իրողությունները և գոնե մի փոքր խորությամբ դիտարկել դրանք, նրանք այնպես են նայում, ասես դու խելագար լինես:

Ես ուրախ եմ այն մարդկանց համար, ովքեր այդպիսին չեն: Բայց այդպիսիք չափազանց շատ են: Եվ մենք չենք կարող հոգևորապես աճել, եթե շարունակ խոսենք միայն բնական երևույթների մասին:

Գլուխ 4

ՀԱՍՈՒՆՈՒԹՅՈՒՆ

Հոգևոր հասունության փուլն ունի բազմաթիվ հատկանիշներ, որոնց մասին խոսում է Աստվածաշունչը: Իրականում, ամբողջ Սուրբ գրքի նպատակը մեզ այդպիսի հոգևոր մարդ դարձնելն է: Մենք կքննարկենք այդ հատկանիշներից երեքը:

1. Աննշան համարել երկրային իրողությունները:

2. Անզգա լինել թե՛ քննադատության, թե՛ գովեստի հանդեպ:

3. Հասկանալ, երբ Աստված գործում է:

ԱՆՆՇԱՆ ՀԱՄԱՐԵԼ ԵՐԿՐԱՅԻՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐԻ 11.24-26

«Հավատքով՝ Մովսեսը, երբ որ մեծացավ, չկամեցավ Փարավոնի աղջկա որդի կոչվել:

Ավելի լավ համարեց Աստծո ժողովրդի հետ չարչարվել, քան թե միաժամանակ մեղքի զվարճությունն ունենալ: Ավելի մեծ հարստություն համարելով Քրիստոսի նախատինքը Եգիպտացիների հարուստ գանձերից, որովհետև աչք դրած մտիկ էր տալիս վարձքի հատուցմանը»:

Մովսեսը, երբ որ մեծացավ, այսինքն՝ հասունացավ կամ տղամարդ դարձավ, հրաժարվեց Փարավոնի դստեր որդին կոչվելուց:

Մտածե՛ք այն մասին, թե ինչ նա մերժեց: Նա տեսավ տարբերությունն Աստծո ժողովրդի և այս աշխարհի միջև (Եգիպտոսն այս աշխարհի խորհրդապատկերն է): Աշխարհում նա Փարավոնի դստեր որդին էր՝ հավասար երկրի գահակալին: Նա ուներ պատիվ, հարստություն և հեղինակություն: Նա ուներ այն, ինչ այս աշխարհը կարող է առաջարկել: Այնուամենայնիվ, նա ավելի մեծ հարստություն համարեց Քրիստոսի նախատինքը, քան Եգիպտոսի գանձերը: Լինելով Եգիպտոսի գանձերի ժառանգ՝ ավելի բարձր գնահատեց նախատինքը:

Հասունության հատկանիշներից մեկը երկրային իրողություններն աննշան համարելն է: Անկարելի է երկրային իրողությունները վեր դասել հոգևորից և հոգևոր աճ ունենալ:

Աստված ցանկանում է, որ Իր զավակները բարգավաճեն: Նա մտածում է մեր մասին: Նա ցանկանում է, որ մենք լավ իրեր ունենանք այս կյանքում: Իր Խոսքում Նա ասաց. «Եթե հոժարեք և լսեք, երկրի բարիքը կուտեք» (Եսայի 1.19): Սակայն Նա չի ցանկանում, որ դրանք առաջնահերթ լինեն մեզ համար:

Ոմանք ավելի շատ հետաքրքրված են փող աշխատելով, քան Աստծուն ծառայելով: Եթե ցանկանում եք հոգևոր մարդ լինել, հոգևոր իրողությունները պետք է առաջնահերթ լինեն ձեզ համար: Դուք պետք է գնահատեք հոգևոր իրողություններն ավելի, քան փողը և երկրային իրողությունները:

Ո՛չ, փող ունենալը սխալ չէ: Սխալ է, երբ փողը տիրում է ձեզ: Սխալ է, երբ փողը ձեր ղեկավարն ու տերն է:

Աստված ցանկանում է, որ դուք բարգավաճեք և հաջողություն ունենաք:

Գ ՀՈՎՀԱՆՆԵՍ 2, (KJV)

«Սիրելի՛, ես ցանկանում եմ ամեն ինչից առավել, որ դու բարգավաճես և առողջ լինես, ինչպես որ քո անձն է բարգավաճում»:

Խոսքն այստեղ ֆինանսական կամ նյութական, ֆիզիկական և հոգևոր բարգավաճման մասին է: Եկեք կրկին կարդանք այս խոսքը. *«Սիրելի՛, ես ցանկանում եմ ամեն ինչից առավել, որ դու բարգավաճես* (նյութական բարգավաճում) *և առողջ լինես* (ֆիզիկական բարգավաճում), *ինչպես որ քո անձն է բարգավաճում* (հոգևոր բարգավաճում)»:

Առաջին Սաղմոսը հրաշալի է. այն հստակ ցույց է տալիս, որ Աստված ցանկանում է, որ մենք բարգավաճենք:

> **ՍԱՂՄՈՍ 1.1-3**
>
> «Երանելի է այն մարդը, որ ամբարիշտների խորհրդի մեջ չի գնում, և մեղավորների ճանապարհի մեջ չի կանգնում և ծաղր անողների աթոռի վրա չի նստում.
>
> Այլ նրա կամքը Տիրոջ օրենքի մեջ է, և ցերեկ ու գիշեր Նրա օրենքի վրա է մտածում:
>
> Եվ նա ջրերի գնացքում տնկված ծառերի պես է, որ իր պտուղը տալիս է իր ժամանակին, և նրա տերևը չի թափվում, և ամեն ինչ, որ անում է, հաջողվում է նրան»:

Աստված ցանկանում է, որ մենք բարգավաճենք:

Այնուամենայնիվ, մեզ անհրաժեշտ է կյանքում ճիշտ գնահատական տալ ամեն ինչին՝ աննշան համարել երկրային իրողությունները և առաջնահերթություն տալ հոգևոր իրողություններին:

Բոլորս կարծում ենք, որ քարոզիչները պետք է այսպիսին լինեն: Եթե մի հովիվ տեղափոխվում է ավելի մեծ եկեղեցի, որտեղ նա ավելի շատ փող է վաստակելու, մարդիկ մտածում են. «Նա ստանձնեց հովվությունն այդ եկեղեցում միայն ավելի լավ վճարվելու համար»: Բայց այդ ծառայողները բոլորովին չեն մտածում ավելի լավ աշխատանքի մասին. հնարավոր է, որ նրանք հեռանում են՝ թողնելով արդյունավետ և հոգևոր եկեղեցի, և ստանձնում են այնպիսի եկեղեցի, որտեղ բոլորը նահանջի եզրին են:

Տարիներ առաջ զրուցում էի մի մարդու հետ: Ես գործով այն քաղաքում էի, որտեղ նա ապրում էր, և հանդիպեցի նրան փողոցում: Դա Մեծ դեպրեսիայի օրերին էր: Նա լավ աշխատանք ուներ և լավ գումար էր վաստակում, բայց նրան առաջարկում էին այլ աշխատանք, որի աշխատավարձը ամսական 50 դոլարով ավելի էր: Այսօր դա շատ չի թվում, բայց Մեծ դեպրեսիայի ծանր օրերին մեծ գումար էր: Ես գիտեի շատ ընտանիքներ, որոնք նույնիսկ ամսական 50 դոլար չէին վաստակում: Նա արդեն լավ աշխատավարձ ուներ, բայց նրան առաջարկում էին աշխատանք մեկ այլ քաղաքում՝ վճարելով իր ներկա աշխատավարձից 50 դոլարով ավելի:

- Գիտե՞ս, որ ես տեղափոխվում եմ այսինչ վայրը:

Նա Ամբողջ Ավետարանի եկեղեցու անդամ էր, և ես գիտեի, որ այն քաղաքում, որտեղ նա պատրաստ-

վում էր տեղափոխվել, չկար Ամբողջ Ավետարանի եկեղեցի:

- Ի՞նչ եկեղեցի կա այդ քաղաքում, - հարցրի ես:

- Ի՞նչ նկատի ունես, - հարցրեց նա:

- Այդտեղ կա՞ Ամբողջ Ավետարանի եկեղեցի, - հարցրի ես:

- Չգիտեմ, - պատասխանեց նա: - Ես երբեք չեմ մտածել այդ մասին:

- Քեզ պարզապես շահագրգռել է ամսական 50 դոլարով բարձր գումարը, - ասացի ես, - բայց մի պահ մտածիր. ես ճանաչում էի քեզ, մինչև քո Հոգեգալստական շարժման մեջ լինելը: Ես գիտեմ, որ դու ծախսում էիր քո ամբողջ ունեցածը: Բժիշկները մտածում էին, որ քո կինը ստամոքսի քաղցկեղ ունի: Բայց երբ նա մկրտվեց Սուրբ Հոգով, ոչ ոք նույնիսկ չաղոթեց նրա համար, և նա բժշկվեց, և այժմ ուտում է այն, ինչ ցանկանում է: Ես գիտեմ, որ դու հազարավոր դոլարներ ես ծախսել քո որդիներից մեկի համար, բայց երբ եկար այնպիսի եկեղեցի, որտեղ սովորեցնում են աստվածային բժշկության մասին, որդիդ առողջացավ:

- Այո՛, ճի՛շտ է, - ասաց նա:

- Ես գիտեմ, որ այդ քաղաքում չկա Ամբողջ Ավետարանի եկեղեցի, - ասացի ես (ամեն ինչ այլ կլիներ,

եթե նա մտածեր, որ գնալու էր այնտեղ՝ նման եկեղեցի հիմնելու համար, բայց նա չէր կարող անել դա):

- Գիտես, ես երբեք չեմ մտածել այդ մասին, - ասաց նա:

- Դու հեռացնելու ես քո ընտանիքը լավ եկեղեցուց, որտեղ քարոզվում է Ավետարանը, որտեղ դու անսահմանորեն օրհնված ես եղել թե՛ ֆիզիկապես, թե՛ հոգևորապես՝ ամսական 50 դոլար ավելի ստանալուց: Ես չեմ ասի՝ դու պետք է գնա՞ս, թե՞ ոչ, բայց կասեմ, որ ավելի լավ է՝ աղոթես դրա համար:

Հաջորդ անգամ, երբ հանդիպեցի այդ մարդուն, նա ասաց.

- Ես չեմ գնալու: Չեմ կարծում, որ արժե անել դա:

Մի մարդ իր կնոջ հետ եկավ հավաքույթների, որոնք ես անցկացնում էի Դալլասում: Այդ կնոջ մայրը, որն արդեն Տիրոջ մոտ էր, մի եկեղեցու անդամ էր, որը ես հովվում էի տարիներ առաջ: Նա հրաշալի քրիստոնյա էր և մեծ օրհնություն էր կնոջս և ինձ համար, երբ մենք երիտասարդ էինք և փոքրիկ երեխաներ ունեինք:

Ես գիտեի, որ այդ կինը միշտ քրիստոնյա չի եղել: Նա այցելում էր իր մորը, և մայրն ասում էր, որ նա փրկված չէ: Բայց հետո նա փրկվեց, ընդունեց Սուրբ Հոգուն և սկսեց հաճախել Ամբողջ Ավետարանի մի լավ, անկախ եկեղեցի: Եվ նա հետևում էր Աստծուն:

- Ո՞ր եկեղեցին եք դուք հաճախում հիմա, - հարցրի ես:

- Մենք ոչ մի տեղ չենք հաճախում, - պատասխանեց նա:

- Ի՞նչ նկատի ունես: Ես կարծում էի, որ դուք այսինչ եկեղեցու անդամ եք, - և տվեցի այդ եկեղեցու անունը:

- Այդ եկեղեցին այլևս չկա: Այն որոշ ժամանակ է, որ փակվել է: Դրանից հետո մեկ այլ մարդ սկսեց հովվել այն: Մեր հովիվը նահանջեց և դադարեց քարոզել: Մենք ոչ մի տեղ չենք հաճախում, երբեմն գնում ենք տարբեր եկեղեցիներ: Քանի դեռ դուք այստեղ եք, մենք այստեղ կգանք:

- Որտե՞ղ եք դուք տասանորդ տալիս, - հարցրի ես:

- Ոչ մի տեղ: Մենք տալիս էինք տասանորդ, բայց այլևս չենք տալիս: Մենք տասանորդ էինք տալիս մեր հովվին, բայց նա նահանջեց:

- Չարժե, որ դուք նահանջեք, այն պատճառով, որ նա նահանջել է, - ասացի ես: Չգիտեմ՝ նրանք ընդունեցի՞ն դա, թե՞ ոչ, բայց ես ասացի. - Դուք պետք է ինչ-որ եկեղեցի հաճախեք, գործեք Աստծո համար և երկրպագեք Տիրոջը: Ասում են՝ գլորվող քարը չի մամռակալում:

Մենք պետք ենք իրար: Մեզ պետք է հաղորդակցությունը միմյանց հետ:

Մեկ անգամ մի անձնավորություն ասաց.

- Եղբա՛յր Հեգին, ես կարող եմ տանը մնալ և լավ քրիստոնյա լինել, ինչպես և ցանկացած քրիստոնյա:

Ձեզ մոտ դա չի ստացվի: Աստվածաշնչում գրված է. *«Եվ չթողնենք իրար հետ ժողովվելը, ինչպես ոմանց սովորությունն է, բայց իրար հորդորենք, և այնքան ավելի, որքան տեսնում եք, որ օրը մոտեցած է»* (Եբր. 10.25):

Մենք տեսնում ենք, որ այդ օրը՝ Տիրոջ գալուստը, մոտենում է: Մենք պետք ենք միմյանց: Մենք պետք է աճենք: Մենք պետք է աննշան համարենք երկրային իրողությունները: Աստված պետք է լինի առաջինը մեր կյանքում:

Մենք եկեղեցի չենք գնում այն պատճառով, որ սիրում ենք հովվին, հովվի կնոջը կամ Կիրակնօրյա դպրոցի ուսուցչին: Մենք պետք է գնանք, որովհետև սիրում ենք Աստծուն և ցանկանում ենք երկրպագել Նրան:

Երբեմն մարդիկ կորցնում են իրենց երեխաներին, քանի որ առաջնահերթություն չեն տալիս հոգևոր իրողություններին: Երեխաները մեծանում են և հեռանում Աստծուց այն սխալ օրինակի պատճառով, որը տեսնում են:

Մի տարի Սուրբ ծննդյան ժամանակ մենք այցելեցինք կնոջս ազգականներին Տեխաս նահանգի

Շերման քաղաքում, երբ իմ դուստրն ընդամենը 6 տարեկան էր: Սուրբ ծնունդը շաբաթ օրն էր: Հաջորդ օրը կիրակի էր: Ես պետք է քարոզեի մոտավորապես 57 մղոն հեռու գտնվող մի եկեղեցում: Անձրև էր գալիս, և եղանակը շատ վատն էր: Տնից դուրս գալիս թվում էր, թե անձրևն անցնում էր անմիջապես մեր միջով:

Կիրակի առավոտյան իմ զոքանչն ասաց.

- Ես կխնամեմ Փեթին: Թողե՛ք երեխային ինձ մոտ, նա մի թեթև հազում է և կարծես մի փոքր ջերմություն ունի:

- Ո՛չ, մենք չենք թողնի նրան, - ասացի ես: - Մենք աղոթել ենք և հավատում ենք Աստծուն: Բացի այդ, երեկ, երբ եկանք, նա նույն ձևով հազում էր: Այսօր շատ ավելի լավ է զգում իրեն: Եթե այս առավոտ մենք չտանենք նրան Կիրակնօրյա դպրոց և եկեղեցի, ես տպավորություն կթողնեմ վեց տարեկան երեխայի մոտ, որ Սուրբ ծննդյան սեղանը տատիկի հետ ավելի կարևոր է, քան կիրակի առավոտյան եկեղեցի գնալը: Իսկ իմ համոզմունքներն այդպիսին չեն:

Դուք հասկանո՞ւմ եք, թե ինչպես են մարդիկ կորցնում իրենց երեխաներին: Եվ թե ինչու են նրանք մեծանում և անհավատարիմ դառնում եկեղեցու հանդեպ:

Դուք չեք կարող միայն խոսել նրանց հետ: Աստվածաշունչն ասում է. *«Կրթի՛ր երեխային իր ճանա-*

պարհի համեմատ, որ ծերացած էլ չի հեռանա նրանից» (Առակ. 22.6):

Ֆ. Ֆ. Բոսվորտն ասում էր. «Որոշ մարդիկ զարմանում են, թե ինչու չունեն հավատք բժշկության համար: Նրանք կերակրում են իրենց մարմինը տաք սնունդով օրը երեք անգամ, իսկ իրենց հոգին՝ սառը նախաճաշով, շաբաթը մեկ անգամ»:

Որոշում կայացրեք ձեր սրտում առաջնահերթություն տալ հոգևոր իրողություններին: Թող այն, ինչ առաջնահերթ է, լինի առաջին տեղում: Աննշան համարեք երկրային իրողությունները, նույնիսկ եթե խոսքը ձեր հարազատների մասին է: Նախապատվություն տվեք Աստծուն, ոչ թե նրանց: Նախապատվություն տվեք Աստծուն, ոչ թե ձեր անձնական կյանքին: Դուք հոգևորապես օրհնված կլինեք և ֆիզիկապես ավելի լավ վիճակում կլինեք՝ ձեր ընտանիքի հետ միասին:

Անզգա լինել թե՛ քննադատության, թե՛ գովեստի հանդեպ

Ա ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻ 4.3,4

«Բայց ինձ համար ոչինչ բան է, որ ձեզնից դատվեմ, կամ մարդկային դատաստանից, այլ ես իմ անձն էլ չեմ դատում: Որովհետև իմ անձի համար ես բան չգիտեմ, բայց սրանով չեմ արդարանում, որովհետև ինձ դատողը Տերն է»:

Պողոսն այն աստիճան էր աճել շնորհքի մեջ, որ միայն մտածում էր իրեն Աստծուն հանձնելու մասին: Նա չէր ազդվում այն բանից, թե ինչ էին մարդիկ մտածում իր մասին: Նա չէր հայտնվում ոչ ոքի ստրկության ներքո: Դա ոչ թե մարմնավոր անկախություն էր, այլ սրբազան արժանապատվություն:

Նա առաջնորդվում էր սիրո օրենքով: Նա հեշտորեն չէր հպարտանում, նեղացկոտ և վրդովվող չէր: Նրա կյանքում իշխում էր իր հոգին, որում սփռված էր Աստծո սերը:

Ոչ հասուն քրիստոնյաները կա՛մ արհամարհված են զգում իրենց, կա՛մ հպարտանում են: Եթե նրանք քննադատվում են կամ նույնիսկ մտածում են, որ իրենց քննադատել են, նրանք անհանգստանում են, շփոթվում են և համակվում են ինքնախղճահարությամբ: Իսկ երբ նրանց նկատում և գնահատում են, նրանք ոգևորվում են և ինքնահավան են դառնում:

Մանուկ քրիստոնյաները եսակենտրոն են և մշտապես կենտրոնացած են այն բանի վրա, թե ինչ են մարդիկ մտածում իրենց մասին: Այնպես որ, նրանք երեխայի պես «երերվում և տատանվում» են՝ փորձելով դուր գալ մարդկանց:

Հասուն հավատացյալն աստվածակենտրոն է. նա մշտապես կենտրոնացած է այն բանի վրա, թե ինչ է Աստվածաշունչն ասում իր մասին և իրեն: Քանի որ նա կարող է վկայել Պողոսի հետ. «Բայց ինձ համար

ոչինչ բան է, որ ձեզնից դատվեմ, կամ մարդկային դատաստանից», նա կարողանում է ազատորեն բարձրաձայնել իր համոզմունքները:

Նա համապատասխանում է Ա Կորնթացիների 13.5-ի նկարագրությանը՝ ըստ *«Ընդլայնված թարգմանության»:* Նա ինքնահավան չէ, գոռոզ չէ և հպարտությամբ փքված չէ: Նա նեղացկոտ, դյուրագրգիռ կամ վրդովվող չէ: Նա հաշվի չի առնում իր դեմ գործած չարիքը և ուշադրություն չի դարձնում իրեն հասցրած վնասին:

Հասկանալ, երբ Աստված գործում է

Այս հատկանիշի լավագույն հոգևոր օրինակը Հովսեփն է (կարդացե՛ք Ծննդոց 37-45 գլուխները):

Դուք գիտեք, որ նա երազներ տեսավ, և եղբայրները նախանձեցին նրան: Նրանք ուզում էին սպանել նրան, բայց ի վերջո ստրկության վաճառեցին: Նա տարվեց Եգիպտոս, որտեղ հրաժարվեց տեղի տալ իր տիրոջ կնոջ ցանկություններին և բանտ նետվեց: Նա մնաց բանտում յոթ տարի:

Շատերը կդառնանային և կասեին. «Արդեն յոթ տարի է անցել, և Աստված թողել է ինձ»:

Նա մեկնեց բանտարկյալներից մեկի երազը, որը Փարավոնի մատռվակն էր՝ ասելով, որ երեք օր հետո նա վերականգնելու է իր պաշտոնը: Հովսեփը

խնդրեց մատռվակին ազատվելուց հետո բարեխոսել իր համար Փարավոնի մոտ: Մատռվակն ազատվեց բանտից, ինչպես որ Հովսեփն ասաց, բայց մոռացավ Հովսեփի մասին: Անցավ ևս երկու տարի, մինչև որ Հովսեփն ազատություն ստացավ:

Շատերն այդ երկու տարում կդառնանային՝ ասելով. «Միշտ էլ այդպես է եղել: Այն մարդիկ, որոնց օգնում ես, մոռանում են քո մասին»:

Բայց եկավ ժամանակը, երբ Հովսեփն ազատվեց բանտից և դարձավ Եգիպտոսի վարչապետը:

Հովսեփի հայրենի երկրում առաջացած սովի պատճառով նրա հայրն ուղարկեց իր եղբայրներին Եգիպտոս՝ սնունդ գտնելու համար: Նրանք պետք է բերվեին Հովսեփի առջև, քանի որ նա երկրի վարչապետն էր:

Նրանք չճանաչեցին Հովսեփին, բայց Հովսեփը ճանաչեց իր եղբայրներին, որոնք ստրկության էին վաճառել իրեն: Նա չասաց նրանց, թե ով էր ինքը, այլ հարցրեց. *«Ձեր այն ծեր հայրը ո՞ղջ է, որի համար խոսել էիք»:* Նրանք պատասխանեցին, որ նա ողջ է:

Բենիամինը չէր գնացել նրանց հետ, և Հովսեփն ասաց նրանց. *«Սրանով պետք է փորձվեք. Փարավոնի կյանքը վկա է, որ դուք այստեղից դուրս չեք գա, եթե ձեր կրտսեր եղբայրն այստեղ չգա»:*

Նրանք վերադարձան և պատմեցին իրենց հորը.

«Այն մարդը մեզ հետ հաստատ վկայությամբ խոսեց, ասելով. «Իմ երեսը չտեսնեք, եթե ձեր եղբայրը ձեզ հետ չլինի»»:

Խեղճ ծեր Հակոբը չգիտեր, որ դա Աստծո գործն էր: Հովսեփը չկար: Իսկ հիմա նրանք տանում էին Բենիամինին: Նա մտածում էր, որ ամեն ինչ իրեն հակառակ էր, սակայն այդպես չէր: Ամեն ինչ իր կողմից էր: Նա պարզապես չգիտեր այդ մասին:

Քաղցած մարդը պատրաստ է գրեթե ամեն ինչի. այնպես որ, Բենիամինը գնաց նրանց հետ: Երբ նրանք տեղ հասան, Հովսեփը խնջույք կազմակերպեց նրանց համար և ասաց.

- Ես Հովսե՛փն եմ:

Գիտե՞ք, թե ինչ կատարվեց:

Բոլորը երեսնիվայր ընկան նրա առջև: Հենց դա էր Հովսեփը տեսել իր երազում՝ այն, որ իր եղբայրները խոնարհվում են իրեն:

Ովքեր հոգևորապես հասուն չեն և դեռ մանուկ են, սա պարծենալու հրաշալի հնարավորություն կլիներ: Հովսեփը կարող էր բութ մատներով սեղմել իր վարտիքակալը և ասել. «Տղանե՛ր, վե՛ր նայեք: Հիշո՞ւմ եք իմ երազները: Դրանք կատարվեցին»:

Այնուամենայնիվ, Հովսեփը վեհանձն վարք ցուցաբերեց: Ըստ էության, նա ասաց. «Մի՛ անհանգստացեք դրա համար. դա Աստծո գործն էր»: Նա ասաց.

«Եվ հիմա մի՛ վշտացեք և մի՛ նեղվեք, որ ինձ ծախեցիք այստեղ, որովհետև Աստված ուղարկեց ինձ ձեր առջև... որ երկրի վրա ձեզ համար սերունդ պահի, և ձեզ ապրեցնի մեծ ազատությունով» (Ծննդ. 45.5,7):

Երբ հասկանում եք, որ Աստված գործում է ձեր կյանքում, դուք կարող եք ցնծալ ցանկացած իրավիճակում:

ՄԱՍ II

Գլուխ 5

ՎԱՐՎԵԼ ՁԵՐ ՀՈՐ ՀԵՏ

«Սրա համար ասում եմ ձեզ՝ հոգս մի՛ արեք ձեր կյանքի համար, թե ինչ պիտի ուտեք, և ինչ պիտի խմեք, և ո՛չ էլ ձեր մարմնի համար, թե ինչ պիտի հագնեք: Չէ՞ որ կյանքը ավելին է կերակուրից, և մարմինը՝ հագուստից:

Մտիկ արեք երկնքի թռչուններին, որ չեն սերմում, և ո՛չ էլ հնձում, և ո՛չ ամբարների մեջ ժողովում, ԵՎ ՁԵՐ ԵՐԿՆԱՎՈՐ ՀԱՅՐԸ ԿԵՐԱԿՐՈՒՄ Է ՆՐԱՆՑ: Չէ՞ որ դուք նրանցից ավելի լավն եք:

Հիմա ձեզնից ո՞վ կարող է հոգս անելով իր հասակի վրա մեկ կանգուն ավելացնել:

Եվ հագուստի համար ի՞նչ եք հոգս անում: Մտիկ արեք դաշտի շուշաններին, թե ինչպես են մեծա-

նում. ո՛չ ջանք են անում, և ո՛չ մանում:

Բայց ասում եմ ձեզ, թե Սողոմոնն էլ իր ամբողջ փառքի մեջ նրանցից մեկի նման չհագավ:

Իսկ թե որ դաշտի խոտը, որ այսօր կա և վաղը փուռն է գցվում, Աստված այնպես է հագցնում, չէ՞ որ շատ ավելի ձեզ, թերահավատնե՛ր:

Ուրեմն, հոգս մի՛ արեք՝ ասելով, թե «ինչ պիտի ուտենք», կամ «ինչ պիտի խմենք», կամ «ինչ պիտի հագնենք»:

Որովհետև այդ ամենը հեթանոսներն են խնդրում: ՈՐՈՎՀԵՏԵՎ ՁԵՐ ԵՐԿՆԱՎՈՐ ՀԱՅՐԸ ԳԻՏԻ, ՈՐ ԱՅԴ ԱՄԵՆԸ ՊԵՏՔ Է ՁԵԶ:

Սակայն առաջ Աստծո արքայությունը և նրա արդարությունը խնդրեք, և այդ ամենը կտրվի ձեզ:

Ուրեմն, վաղվա համար հոգս մի՛ արեք, որովհետև վաղվա օրն իր համար հոգս կանի: Օրվա համար բավական է իր նեղությունը»:

- Մատթեոս 6.25-34

Սա զարմանալի սուրբգրային հատված է: Բայց այս պահին ցանկանում եմ, որ ուշադրություն դարձնեք միայն երկու խոսքի վրա՝ 32-րդ խոսքի. *«որովհետև ձեր երկնավոր Հայրը գիտի, որ այդ ամենը պետք է ձեզ»,* և 26-րդ խոսքի. *«ձեր երկնավոր Հայրը կերակրում է նրանց»:*

Խոսքն այստեղ մեղավորների (անհավատների)

մասին չէ, քանի որ Նա մեղավորների երկնային Հայրը չէ: Որոշ մարդիկ սովորեցնում են, որ բոլորս Աստծո զավակներն ենք, Աստված բոլորիս Հայրն է, և բոլորս եղբայրներ և քույրեր ենք, սակայն այդպես չէ: Կան մարդիկ, որոնց հայրը սատանան է:

Հիսուսն ասաց այդ ժամանակվա ամենակրոնական առաջնորդներից մի քանիսին. *«Դուք ձեր սատանա հորից եք»* (Հովհ. 8.44): Նա չասաց, որ նրանց հայրը մեր երկնային Հայրն է: Նա ասաց, որ նրանց հայրը սատանան է:

Այնուամենայնիվ, թեև մենք վերստին ծնվել ենք և դարձել ենք Աստծո զավակներ, կարծում եմ, շատ հաճախ, այդպես էլ իրականում չենք ծանոթացել մեր Հոր հետ: Այս գիրքը հոգևոր աճի մասին է: Մենք պետք է աճենք՝ ծանոթանալով մեր երկնային Հոր հետ:

Երբ ես սովորեցնում էի այս մասին Արևելյան Տեխասում, մի կին ասաց ինձ.

- Եղբա՛յր Հեգին, ես 11 տարի է փրկված եմ: Եվ փրկվելուց հետո սիրել եմ Հիսուսին: Բայց այնպես է ստացվել, որ ես չեմ ճանաչել Հորը այնպես, ինչպես պետք է ճանաչեի: Այն պահից, երբ դուք սկսեցիք սովորեցնել այս մասին, ես ծանոթացա իմ երկնային Հոր հետ, և ես սիրելու եմ Նրան մինչև մահ:

Սա այդ կնոջ բացատրությունն էր:

Աստվածաշնչում չկա ավելի ազդեցիկ ճշմարտություն, քան այն երանելի իրողությունը, որ մենք վերստին ծնվել ենք և միացել ենք Աստծո ընտանիքին, որ Հայր Աստված մեր Հայրն է, և Նա հոգում է մեր մասին:

Նա շահագրգռված է մեզնով: Ես նկատի ունեմ, որ Նա հետաքրքրված է անհատապես՝ ոչ թե որպես խումբ, մարմին կամ եկեղեցի: Նա հետաքրքրված է Իր զավակներից յուրաքանչյուրով և սիրում է յուրաքանչյուրիս միևնույն սիրով:

Մատթեոսի այս հատվածում Հիսուսը քարոզում էր հրեաներին: Սակայն պատճառներից մեկը, թե ինչու նրանք չհասկացան Նրան, այն էր, որ Նա խոսում էր Աստծո մասին՝ որպես Իր Հոր: Նա հանձն էր առել ներկայացնել նրանց բարի և սիրող երկնային Հորը: Նրանք չէին կարողանում հասկանալ այդպիսի Աստծո: Նրա ուղերձն այսպիսին էր. *«Որովհետև Աստված այնպես սիրեց աշխարհը, որ... տվեց»* (Հովհ. 3.16): Նրանք չէին կարողանում ըմբռնել դա:

Հին ուխտը մեղքի և մահվան օրենքի ուխտ էր: Այն օրենք էր՝ «աչքի դեմ աչք և ատամի դեմ ատամ»: Եթե դուք հանեք իմ աչքը, ես էլ կհանեմ ձեր աչքը:

Սա այնպիսի օրենք էր, որում Աստված զարհուրելի դատաստանի սպառնալիքով պահանջում էր սեր և այլ պատվիրանների կատարում: Մարդիկ անկարող էին կատարել այդ պահանջները, քանի որ նրանց

բնությունը փոխված չէր: Այնպես որ, Աստված հաստատեց Ղևտական քահանայությունը, որի միջոցով կենդանիների արյուն էր թափվում՝ ժողովրդի մեղքերը ծածկելու համար, որպեսզի նրանք արդար համարվեին Իր առջև, և Նա կարողանար օրհնել նրանց: Ժողովրդի մեղքերը հնարավոր էր խոստովանել՝ դնելով թողության այծի գլխին: Դրանից հետո այդ այծին բաց էին թողնում անապատ, և դատաստանն իջնում էր անապատում, ոչ թե իրենց վրա: Նրանք ապրում էին արդարադատության ծանր և խիստ մթնոլորտում:

Երբ Աստված տվեց Մովսեսին օրենքի քարե տախտակները, սարը պատված էր կրակով ու ծխով: Եթե նույնիսկ մի կենդանի մոտենար և դիպչեր սարին, նա թրով սպանվելու էր:

Հին կտակարանում, այն բանից հետո, երբ մարդիկ կառուցեցին նախ՝ խորանը, իսկ հետո տաճարը, նրանք չէին ճանաչում Աստծուն որպես Հոր: Նրանք գիտեին Աստծո մասին որպես էլոհիմի կամ Եհովայի: Նրանք անձնապես չէին ճանաչում Նրան: Նրանք անձամբ չէին ծանոթացել Նրա հետ: Նրա ներկայությունը փակված էր Սրբության սրբոցում: Անհրաժեշտ էր, որ յուրաքանչյուր տղամարդ ամբողջ Իսրայելում, առնվազն տարին մեկ անգամ գնար Երուսաղեմի տաճար և ներկայանար Աստծո առջև: Նա այնտեղ էր: Եվ նույնիսկ այդ դեպքում մարդիկ չէին համարձակվում մուտք գործել Նրա ներկայության մեջ:

Նրա ներկայության մեջ չէր մտնում ոչ ոք՝ բացի քահանայապետից, և նա էլ գնում էր մեծ զգուշավորությամբ: Քանի որ, եթե նա մտներ Սրբության սրբոց սխալ կերպով, ինչպես ոմանք արեցին, անմիջապես մահացած կընկներ: Այն բանից հետո, երբ քահանայապետը մատուցում էր կենդանիների արյան զոհը իր մեղքերի և ժողովրդի մեղքերի համար, նա կարող էր մտնել Սրբության սրբոց և ստանալ քավություն մարդկանց մեղքերի համար՝ դրանք, այսպես ասած, տեղափոխելով դեպի ապագա:

Իսրայելցիներն ապրում էին նման ծանր, խիստ մթնոլորտում: Զարմանալի չէ, որ երբ Հիսուսը եկավ՝ ծանոթացնելու նրանց սիրող և բարի երկնային Հոր հետ, նրանք չհասկացան Նրան:

Այնուամենայնիվ, վախենում եմ, որ դա չի վերաբերում միայն հրեաներին: Դա վերաբերում է նաև Ամենակարող Աստծո ճշմարիտ որդիներին և դուստրերին այսօր: Նրանք երբեք իրապես չեն ծանոթացել Նրա հետ՝ որպես իրենց Հոր:

Ահա մի քանի խոսք այն մասին, թե ինչպես էր Հիսուսը ներկայացնում Հորը.

«Եվ այն օրը ոչինչ չեք հարցնի (կամ՝ խնդրի) Ինձ: Ճշմարի՛տ, ճշմարի՛տ ասում եմ ձեզ, թե ինչ որ Հորից խնդրեք Իմ անունով, կտա ձեզ» (Հովհ. 16.23):

«Հայրն Ինքը սիրում է ձեզ» (Հովհ. 16.27):

«Որովհետև ձեր Հայրը գիտի, թե ինչ բաներ պետք են ձեզ, ձեր՝ Նրանից խնդրելուց առաջ: Արդ դուք այսպես աղոթք արեք. «Մեր Հայր...»» (Մատթ. 6.8,9):

Ինձ դուր է գալիս այն, ինչ Պողոսն աղոթում է Եփեսոսի եկեղեցու համար. *«Սրա համար կրնկում եմ իմ ծնկները մեր Տեր Հիսուս Քրիստոսի Հոր առջև, որից ամեն նահապետություն* (կամ՝ ամբողջ ընտանիքը) *երկնքում և երկրում անուն է առնում»* (Եփես. 3.14,15):

Ես սիրում եմ այդպես անել: Ես սիրում եմ ծնկի գալ և կրկնել Պողոսի խոսքերը. *«Ես կրնկում եմ իմ ծնկները մեր Տեր Հիսուս Քրիստոսի Հոր առջև, որից ամեն նահապետություն երկնքում և երկրում անուն է առնում»:* Դա իրականության զգացում է պարգևում: Դա հեռացնում է խիստ, ծանր, կրոնական մթնոլորտը: Այդպես վարվելը կրոնականություն չէ և որևէ կապ չունի կրոնի հետ:

Ոմանք հարցնում են. «Դուք կրոնակա՞ն եք»:

Փա՛ռք Աստծուն, ես ընդհանրապես կրոնական չեմ: Եվ չեմ էլ ուզում լինել: Կրոնի մեջ մարդը գործ ունի Աստծո հետ, իսկ ընտանիքում՝ Հոր հետ:

Միգուցե Նա Աստված է մեղավորի համար, բայց ինձ համար Նա Հայր է. *«Ես կրնկում եմ իմ ծնկները մեր Տեր Հիսուս Քրիստոսի Հոր առջև, որից ամեն նահապետություն* (կամ՝ ամբողջ ընտանիքը)...»: Խոսքը Հոր և Նրա ընտանիքի մասին է: Մենք Աստծո

ընտանիքի մեջ ենք: *Կարևոր չէ, թե որ եկեղեցում եք, այլ՝ թե որ ընտանիքում եք:*

Ծանոթանալ Խոսքի միջոցով

Ես ուրախ եմ, որ գտնվում եմ Նրա ընտանիքում: Ես ցանկանում եմ ավելի լավ ծանոթանալ իմ Հոր հետ: Մի՞թե դուք նույնպես չեք ցանկանում դա: Ես ցանկանում եմ ավելի լավ ճանաչել Նրան: Մի՞թե դուք նույնպես չեք ցանկանում դա: Փա՛ռք Աստծուն, որ մենք կարող ենք անել դա:

Ինչպե՞ս: Ինչպե՞ս կարող ենք իմանալ ավելին Նրա մասին: Ինչպե՞ս կարող ենք ավելի լավ ճանաչել մեր Հորը:

Ինձ դուր է գալիս այն, ինչ ասաց Սմիթ Վիգլսվորտը. «Ես չեմ կարող հասկանալ Աստծուն զգացմունքներով: Ես հասկանում եմ Հայր Աստծուն այն բանով, թե ինչպես է Խոսքը ներկայացնում Նրան: Նա ճիշտ այնպիսին է, ինչպես որ Խոսքը պատկերում է Նրան: Ծանոթացե՛ք Հոր հետ Խոսքի միջոցով»:

Խոսքից է, որ իմանում ենք Նրա, Նրա սիրո և Նրա բնության մասին. Խոսքից է, որ իմանում ենք, որ Նա հոգում է մեր մասին և սիրում է մեզ: Հիսուսն ասաց. *«Ոչ միայն հացով կապրի մարդ, այլ ամեն Խոսքով, որ դուրս է գալիս Աստծո բերանից»* (Մատթ. 4.4):

ՄԱՏԹԵՈՍ 6.26

«Մտիկ արեք երկնքի թռչուններին, որ չեն սերմում, և ո՛չ էլ հնձում, և ո՛չ ամբարների մեջ ժողովում, և ձեր երկնավոր Հայրը կերակրում է նրանց: Չէ՞ որ դուք նրանցից ավելի լավն եք»:

Այն մարդիկ, որոնց Հիսուսը քարոզում էր այդ մասին, այդպես էլ չհասկացան Նրան: Այդ ամենը նոր էր նրանց համար: Այդ ամենը գրեթե նոր է մեզ համար: Մենք երբեք չենք հասկացել դա, քանի որ մեզնից շատերին սովորեցրել են վախենալ և դողալ արդարադատության Աստծուց: Մենք երբեք չենք տեսել Աստծո սիրո կողմը, որ Հիսուսը եկավ՝ մեզ տալու համար:

ՄԱՏԹԵՈՍ 6.30,31

«Իսկ թե որ դաշտի խոտը, որ այսօր կա և վաղը փուռն է գցվում, Աստված այնպես է հագցնում, չէ՞ որ շատ ավելի ձեզ, թերահավատնե՛ր:

Ուրեմն հոգս մի՛ արեք՝ ասելով, թե «ինչ պիտի ուտենք», կամ «ինչ պիտի խմենք», կամ «ինչ պիտի հագնենք»»:

Մի թարգմանության մեջ գրված է. *«Ուրեմն, անհավատ մի՛ եղեք՝ ասելով. «Ինչ ենք ուտելու», կամ «Ինչ ենք խմելու»»:* Երբ այդպես եք խոսում, դուք հավատք չունեք:

ՄԱՏԹԵՈՍ 6.32,33

«Որովհետև այդ ամենը հեթանոսներն են խնդրում: Որովհետև ձեր երկնավոր Հայրը գիտի, որ այդ ամենը պետք է ձեզ:

Սակայն առաջ Աստծո արքայությունը և նրա արդարությունը խնդրեք, և այդ ամենը կտրվի ձեզ»:

Այդ ամենը չի վերցվի ձեզնից, այլ կտրվի ձեզ: Այս խոսքն ապացուցում է, որ Հայրը հոգում է նրանց մասին, ովքեր Իրենն են:

ՄԱՏԹԵՈՍ 6.34

«Ուրեմն վաղվա համար հոգս մի՛ արեք, որովհետև վաղվա օրը իր համար հոգս կանի: Օրվա համար բավական է իր նեղությունը»:

Ինձ դուր է գալիս մի թարգմանություն, որում գրված է. «Մի՛ անհանգստացեք վաղվա համար»: Երբեմն դուք պետք է մտածեք վաղվա օրվա մասին, հանդիպում նշանակեք ինչ-որ մեկի հետ կամ պլանավորեք ինչ-որ բան: Սակայն Նա փորձում է ասել մեզ. «Մի՛ անհանգստացեք վաղվա համար»: Աստված չի ցանկանում, որ Իր զավակներն անհանգիստ լինեն: Նա չի ցանկանում, որ մենք տրտմած լինենք: Ինչո՞ւ: Քանի որ Նա սիրում է մեզ:

Ձեր երկնային Հայրը գիտի, որ ձեզ պետք են այդ բաները: Այնպես որ, մի՛ մտահոգվեք և մի՛ տրվեք անհանգստությանը: Եթե Նա ձեր Հայրն է, կարող եք համոզված լինել, որ Նա կզբաղեցնի Իր հայրական դիրքը ձեր կյանքում և կկատարի Իր մասը՝ որպես Հայր: Կարող եք վստահ լինել, որ եթե Նա ձեր Հայրն է, Նա սիրում է ձեզ, և Նա կհոգա ձեր մասին:

ՀՈՎՀԱՆՆԵՍ 14.21-23

«Ով որ Իմ պատվիրաններն ունի և պահում է, նա է Ինձ սիրողը, և Ինձ սիրողն Իմ Հորից կսիրվի, և Ես կսիրեմ նրան, և Ինձ կհայտնեմ նրան:

Ասաց Նրան Հուդան, ոչ թե Իսկարիովտացին. «Տե՛ր, ի՞նչ է, որ մեզ կհայտնես Քեզ, և աշխարհին՝ ոչ»:

Հիսուսը պատասխանեց և նրան ասաց. «Եթե մեկն Ինձ սիրում է, Իմ խոսքը կպահի, և Իմ Հայրը կսիրի նրան, և նրա մոտ կգանք և բնակություն կանենք նրա մոտ»»:

Այս հատվածը հայտնում է Հոր վերաբերմունքն Իր զավակների հանդեպ: Այն շեշտադրում է երկու ճշմարտություն.

1. *«Որ պահեք Իմ պատվիրանները»:* Որո՞նք են Հիսուսի պատվիրանները: Նա ասաց. *«Նոր պատվիրան եմ տալիս ձեզ, որ իրար սիրեք. ինչպես Ես ձեզ սիրեցի, որ դուք էլ իրար սիրեք»* (Հովհ. 13.34): Սա ամփոփում է ամեն ինչ: Կարող եք չանհանգստանալ մնացած բոլոր պատվիրանների համար, որովհետև *«օրենքի լրումը սերն է»* (Հռոմ. 13.10): Եթե պահեք Հիսուսի պատվիրանները, դուք կատարած կլինեք մնացած բոլոր պատվիրանները:

2. *«Դուք Իմ Հորից կսիրվեք»:* Եթե վարվում եք սիրով, դուք Աստծո տիրույթում եք, որովհետև Աստված սեր է (մենք կխոսենք սիրով վարվելու մասին 6-րդ գլխում): Մեր Հայր Աստված սիրո Աստված է:

Քանի որ Նա սեր է, Նրա բնությունը դրդում է Իրեն հոգալ մեր մասին և պաշտպանել մեզ:

ՄԱՏԹԵՈՍ 7.11

«Արդ եթե դուք, չար լինելով, գիտեք բարի պարգևներ տալ ձեր որդիներին, որքա՞ն ավելի ձեր Հայրը, որ Երկնքում է, բարիքներ կտա նրանց, որ խնդրում են Իրենից»:

Որքա՛ն ավելի: Սա հուզմունք է առաջացնում իմ հոգում: Որքա՛ն ավելի: Դուք ծնո՞ղ եք: Մի՞թե ձեր որոշումը, ծրագիրը և կամքը կլիներ այն, որ ձեր երեխաներն ապրեին աղքատության մեջ, ծանր աշխատանք կատարեին, հիվանդ, ճնշված, տրորված, ընկճված և անօգնական լինեին: Ո՛չ: Ծնողները զոհեր են անում, քանի որ սիրում են իրենց երեխաներին: Նրանք անձնազոհ աշխատում են, որպեսզի օգնեն իրենց երեխաներին կրթություն ստանալ, և նրանց կյանքը լինի ավելի լավը, քան իրենցը: Իրենց սիրո շնորհիվ նրանք ուզում են պաշտպանել իրենց երեխաներին այն խնդիրներից, դժվարություններից և նեղություններից, որոնք իրենք են կրել: Այսպիսին են բնական կամ շնչավոր մարդիկ: Հենց դա էլ Հիսուսն ասաց. *«Եթե դուք, չար* (կամ՝ բնական) *լինելով...»:*

Հոր սիրո շնորհիվ մենք հաղորդակցվում ենք Նրա հետ որպես որդիներ և դուստրեր: *Մենք ունենք նույն հարաբերությունը Հոր հետ, որն ուներ Հիսուսը, երբ այս երկրի վրա էր:*

ՀՈՎՀԱՆՆԵՍ 17.23

«Ես՝ նրանցում, և Դու՝ Ինձանում, որ կատարյալ լինեն միությունում, որպեսզի աշխարհը գիտենա, թե Դու ուղարկեցիր Ինձ, և սիրեցիր նրանց, ինչպես Ինձ սիրեցիր»:

Հայրը սիրում է մեզ այնպես, ինչպես որ սիրում է Հիսուսին: Եվ եթե Նա սիրում է ինձ այնպես, ինչպես որ սիրում է Հիսուսին, ես չեմ վախենում բախվել կյանքի խնդիրներին, քանի որ Նա ինձ հետ է այնպես, ինչպես որ Տիրոջ հետ էր:

ՀՈՎՀԱՆՆԵՍ 16.32

«Ահա ժամանակ կգա և հիմա եկած է, որ ամեն մեկը կցրվի իր տեղը, և Ինձ մենակ կթողնեք, բայց Ես մենակ չեմ, որովհետև Հայրն ինձ հետ է»:

Մենք կարող ենք ասել. «Ես մենակ չեմ, որովհետև Հայրն ինձ հետ է»: Քանի որ, եթե Նա սիրում է ինձ այնպես, ինչպես որ սիրում է Հիսուսին, նշանակում է՝ Նա ինձ հետ է այնպես, ինչպես որ Հիսուսի հետ էր: Ես մենա՛կ չեմ:

ՀՈՎՀԱՆՆԵՍ 16.27

«Նրա համար, որ Հայրն Ինքը սիրում է ձեզ, որովհետև դուք Ինձ սիրել եք և հավատացել եք, թե Ես Աստծուց դուրս եկա»:

Ոչինչ չի կարող լինել ավելի ազդեցիկ կամ ավելի մխիթարող, քան հետևյալ ճշմարտությունը. *«Հայրն Ինքը ճանաչում է ձեզ, սիրում է ձեզ և փափագում է օրհնել ձեզ»:*

Մտապահելով բոլոր այս պնդումները, որոնք Հիսուսն արեց Հոր մասին, այլ աստվածաշնչյան խոսքեր բացվում են մեզ համար նոր լույսի ներքո. դրանք անմիջապես ավելի իրական են դառնում մեզ համար:

Ա ՊԵՏՐՈՍ 5.7

«Ձեր ամբողջ հոգսը Նրա վրա գցե՛ք, որովհետև Նա հոգս է անում ձեզ համար»:

Սա ուղերձ է Հայր Աստծո սրտից՝ ուղղված ինձ, ուղղված ձեզ: Նա ցանկանում է, որ մենք վերջ տանք անհանգստությանը, վախին և կասկածներին: Դուք կարող եք հարցնել. «Կարո՞ղ եմ անել դա»: Իհա՛րկե: «Ինչպե՞ս»: Գցելով ձեր բոլոր հոգսերը Նրա վրա: Նա ցանկանում է, որ դուք հանձնվեք Իր սիրուն և հոգատարությանը: Այնպես որ, Նա ասում է. *«Ձեր ամբողջ հոգսը Նրա վրա գցե՛ք, որովհետև Նա հոգս է անում ձեզ համար»:* Ինձ դուր է գալիս այս խոսքն *«Ընդլայնված թարգմանության»* մեջ. *«Գցելով ձեր ամբողջ հոգսը [ձեր բոլոր անհանգստությունները, ձեր բոլոր մտատանջությունները, ձեր բոլոր մտահոգությունները՝ մեկընդմիշտ] Նրա վրա, որովհետև Նա սիրառատորեն հոգում է ձեր մասին, և Նա մեծ ուշադրությամբ հոգում է ձեր մասին»:*

ՓԻԼԻՊԵՑԻՆԵՐԻ 4.6

«Ոչինչ հոգս մի՛ արեք, այլ ամեն բանում աղոթքով և աղաչանքով և գոհությունով ձեր խնդրվածքները թող հայտնի լինեն Աստծուն»:

Կրկին, *«Ընդլայնված թարգմանության»* մեջ գրված է. *«Մի՛ անհանգստացեք և մի՛ մտահոգվեք ոչ մի բանի մասին»:* Ահա թե ինչ է մեր Հայրն ասում մեզ: Մեր երկնային Հայրը ցանկանում է վարվել մեզ հետ ճիշտ այնպես, ինչպես վարվում էր Հիսուսի հետ, երբ Նա այս երկրի վրա էր:

ՓԻԼԻՊԵՑԻՆԵՐԻ 4.13

«Ամեն բան կարող եմ ինձ զորացնող Քրիստոսով»:

Ոմանք ասել են. «Այո, բայց դա Պողոսի խոսքերն են, և նա առաքյալ էր»: Պողոսը չասաց, որ կարող էր անել ամեն բան, քանի որ ինքն առաքյալ էր: Նա ասաց, որ կարող էր անել ամեն բան Քրիստոսով: Պողոսը չէր գտնվում Քրիստոսում ավելի շատ, քան ես եմ Քրիստոսում, կամ ավելի շատ, քան դուք եք Քրիստոսում: Քրիստոսն էր զորացնում Նրան: Եվ եթե մենք թույլ տանք, Հայրը կլինի նույնքան իրական մեր կյանքում, որքան Պողոսի և Հիսուսի կյանքում էր: Եվ Նա Իր սրտից հղում է սիրո ուղերձ ձեզ և ինձ: Նա ասում է մեզ. «Դու կարող ես անել ամեն ինչ: Դու կարող ես բարձրանալ՝ հասնելով այնպիսի վիճակի, երբ այլևս չես վախենա նույնիսկ ամենատհաճ հանգամանքներից, քանի որ դու գիտես, որ քո Հայրը քո կողքին է: *«Եթե Աստված մեր կողմն է, ո՞վ է մեզ հակառակ»* (Հռոմ. 8.31):

Հոր սերը, - և հիշեք՝ Նա սեր է, - դրդում է Նրան հոգալ մեր մասին: Երբ դուք ազատորեն սավառ-

նեք այդ սիրո մեջ, բոլոր կասկածները և վախերը կանհայտանան:

ՍԱՂՄՈՍ 27.1

«Տերն է իմ լույսը և փրկությունը. ես ումի՞ց պիտի վախենամ: Տերն է իմ կյանքի զորությունը. ես ումի՞ց պիտի սարսափեմ»:

Երբ հիշում եք, որ մեր հրաշալի երկնային Հայրը սիրում է մեզ նույնքան, որքան սիրում է Հիսուսին, դուք կարող եք հասկանալ, որ մենք չպետք է վախենանք, ինչպես որ Հիսուսը չէր վախենում: Նա ձեր լույսն է: Նա ձեր փրկությունն է: Նա ձեր կյանքի զորությունն է: Լո՛ւյս: Փրկությո՛ւն: Զորությո՛ւն: Այդ դեպքում, չկա վախենալու պատճառ: Ի՞նչ կարող է անել մարդը այն մարդուն, որին Աստված սիրում է և պաշտպանում է:

ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐԻ 13.5,6

«Որովհետև Ինքն ասաց, թե՝ չեմ թողնի քեզ և երեսից չեմ գցի:
Այնպես որ, համարձակ ենք ասելու. «Տերն է իմ օգնականը, և ես չեմ վախենա, ի՞նչ կանի ինձ մարդը»»:

Նա ձեր Օգնակա՛նն է: Եվ Նա կհոգա՛ ձեր կարիքները:

ՓԻԼԻՊԵՑԻՆԵՐԻ 4.19

«Եվ իմ Աստված լրացնի ձեր ամեն կարոտությունն Իր հարստության չափով՝ փառքով, Քրիստոս Հիսուսում»:

Սա կրոն չէ: Սա քարոզչություն չէ: Սա կենդանի ճշմարտություն է մեր հրաշալի, սիրելի Հայր Աստծուց՝ ուղղված մեզ: Նա ցանկանում է, որ մենք իմանանք, որ Ինքը կհոգա մեր բոլոր կարիքները *Իր հարստության* չափով՝ փառքով, Քրիստոս Հիսուսում:

Վերապրել ծանոթությունը

ՍԱՂՄՈՍ 23.1-6

«Տերն է իմ հովիվը, և կարոտություն չեմ ունենա:

Նա կանաչ տեղերում հանգստացնում է ինձ և հանդարտ ջրերի մոտ տանում է ինձ:

Իմ անձին հանգիստ է տալիս. ինձ առաջնորդում է արդարության շավիղներում՝ Իր անվան համար:

Թեև գնամ մահվան շուքի ձորով, չար բանից չեմ վախենա, որովհետև Դու ինձ հետ ես. Քո գավազանն ու ցուպը մխիթարում են ինձ:

Դու իմ առջև սեղան ես պատրաստում իմ թշնամիների դիմաց. Դու իմ գլուխն օծում ես յուղով. իմ բաժակը խի՜ստ լիքն է:

Հենց բարիք և ողորմություն կգան իմ ետևից իմ կյանքի բոլոր օրերում, և Տիրոջ տանը կբնակվեմ շա՜տ երկար ժամանակ (կամ՝ հավիտյան)»:

Ըստ իս, ոչ մի հատված չի նկարագրում Հոր և Հիսուսի սերը մեր հանդեպ ավելի հրաշալի կերպով, քան 23-րդ Սաղմոսը:

Շատ Սաղմոսներ մարգարեական են. 22-րդ Սաղ-

մոսը Հիսուսի մահվան նկարագրությունն է. 23-րդ Սաղմոսում Նա Բարի Հովիվն է. 24-րդ Սաղմոսը հայտնում է Նրան որպես եկող թագավորների Թագավոր և տերերի Տեր, Ով տիրում է ամբողջ երկրի վրա:

Այս պահին մենք ապրում ենք 23-րդ Սաղմոսում. *«Տերը իմ Հովիվն է»:* Երբ Հիսուսը եկավ, ասաց. «Ես եմ (ներկա ժամանակով) Բարի Հովիվը» (Հովհ. 10.11): Հռոմեացիների 10.9-ում գրված է. *«Որովհետև եթե բերանովդ Հիսուսին Տեր դավանես...»:* Տերը իմ Հովիվն է: Հիմա՛: Մենք ապրում ենք 23-րդ Սաղմոսում:

Ես այսպես եմ մեկնում 23-րդ Սաղմոսը: Մշտապես ասում եմ. «Տերը իմ Հովիվն է: Ես չունեմ կարիքներ»: Ես չունեմ կարիքներ: Ես ունեմ կատարյալ բավականություն: Առավելագույնը՝ այս կյանքում:

Երկրորդ խոսքում փարթամ երեքնուկը և հյութեղ խոտը ծածկում են գետինը: Իմ կողմից չի պահանջվում ոչ մի ջանք՝ բավականաչափ միջոցներ ունենալու կամ ստանալու համար:

Նա տանում է ինձ ջրերի՝ հանդարտության ջրերի մոտ: Ձուրը և կերակուրն անհրաժեշտ պայմաններ են կյանքը պահպանելու համար: Փա՜ռք Աստծուն, Նա առաջնորդում է ինձ և լրացնում ամեն կարիք:

Նա պառկեցնում է և հանգստացնում է ինձ ապահովության և հանդարտության մեջ, առատության

արոտավայրերում: Իմ կողքին խշխշացող առվակ կա, որի կենդանի ջրերը հագեցնում են իմ սիրտը: Ես ունեմ ջուր: Ես ունեմ կերակուր: Ես պաշտպանված եմ: Ես ունեմ օթևան: Նա հոգում է իմ մասին: Իմ Հայրն այդպիսին է:

Երբ ես վախենում եմ կամ համակվում եմ սարսափով, երբ էությունս ամբողջությամբ ցնցվում է տագնապից, Նա հանգիստ է տալիս ինձ: Նա հանդարտեցնում է ինձ: Նա վերադարձնում է ինձ իմ սովորական վիճակին: Նա հեռացնում է իմ վախերը և մտահոգությունները, սեղմում է ինձ Իր կրծքին և ներշնչում է խիզախություն ու հավատք:

Իմ սիրտը ծիծաղում է թշնամիների վրա, որովհետև Նա առաջնորդում է ինձ շնորհքի շավիղներով՝ արդարության մեջ, որտեղ ես կանգնած եմ Նրա ներկայության մեջ, ասես մեղքը երբեք չի եղել, և աղմկում ու խաղում եմ շնորհքի գահի սրահում՝ առանց նույնիսկ մտահոգության, վախի կամ սարսափի նշույլի: Պատճառն այն է, որ իմ Հայրը գահի վրա Նստողն է:

Միգուցե Նա Դատավոր է այս աշխարհի համար, և Աստված՝ մեղավորի համար, բայց ինձ համար Նա Հայր է:

Եվ երբեմն (իսկ ավելի ճիշտ՝ գրեթե ամեն անգամ), երբ գալիս եմ Նրա մոտ, ես լսում եմ, թե ինչպես է Նա ասում. «Որդի՛ս, ի՞նչ ես ցանկանում:

Ի՞նչ կարող եմ անել քեզ համար»:

Եվ ես ասում եմ. «Հա՛յր, ես ոչինչ չեմ ցանկանում: Դու այնքա՛ն հրաշալի ես, այնքա՛ն սիրող ես, և այնքա՛ն բարի ես, որ արդեն տվել ես ինձ այն ամենը, ինչի կարիքը երբևէ կունենամ: Դու նամակ ես գրել ինձ և ասել ես այդ մասին: Այնպես որ, ես չունեմ ոչ մի հոգս: Ես չունեմ ոչ մի կարիք: Ես չունեմ այնպիսի կարիք, որը լրացված չէ: Ո՛չ, ես չեմ եկել ինչ-որ բանի համար: Ես կասեմ Քեզ՝ Հա՛յր, պարզապես եկել եմ, որ որոշ ժամանակ Քեզ հետ լինեմ: Ես պարզապես ցանկանում էի լինել Քո գահի մոտ: Ես սիրում եմ լինել Քո կողքին, Հա՛յր»:

Իմ Հայրն ասաց ինձ (ես այնքա՛ն պարզ էի լսում Նրա ձայնը, երբ Նա խոսում էր ինձ հետ). «Որդի՛ս, դու չգիտես, թե ինչպիսի բերկրանք է պատճառում դա Իմ սրտին: Ոչ մի երկրային հայր երբևէ չի ցանկացել իր զավակների հաղորդակցությունը և շփումն այնքան, որքան Ես՝ երկնային Հայրը, Ով ցանկանում է հաղորդակցվել և շփվել Իր զավակների հետ»:

«Գիտես, - ասաց Նա, - Ես ստեղծեցի մարդուն, որպեսզի լինի մեկը, ում հետ կկարողանամ հաղորդակցվել: Ես ստեղծեցի մարդուն որպես Ինձ ընկեր: Իրականում, Ես այսպես կասեմ (և Նա ասաց ճիշտ այս բառերը). Ես ստեղծեցի մարդուն, որպեսզի ընկերություն անեմ նրա հետ: Ես դրեցի Ադամին այս

երկրի վրա՝ պարտեզում, և օրվա հով ժամանակ գալիս էի նրա հետ զբոսնելու և զրուցելու»:

Աստծո հետ վարվելը երանելի, սքանչելի և հրաշալի է:

Գլուխ 6

ՎԱՐՎԵԼ ՍԻՐՈՎ

«Աստծո սերը սփռված է մեր սրտերի մեջ Սուրբ Հոգու ձեռքով»:

- Հռոմեացիների 5.5

Աստծո հետ շփվելու, Նրա հետ վարվելու և Նրա տիրույթում լինելու համար մենք պետք է վարվենք սիրով՝ աստվածային սիրով: Որովհետև Աստված սեր է:

Երբ ես վերստին ծնվեցի, Նա դարձավ իմ Հայրը: Նա սիրո Աստված է: Ես սիրո Աստծո սիրո զավակ եմ: Ես ծնվել եմ Աստծուց, և Աստված սեր է. այնպես որ, ես ծնվել եմ սիրուց: Աստծո բնությունն իմ ներսում է: Եվ Աստծո բնությունը սեր է:

Մենք չենք կարող ասել, որ չունենք այս աստվածային սերը: Յուրաքանչյուրը Նրա ընտանիքում ունի

այն: Նա, ով չունի այս սերը, Նրա ընտանիքում չէ: Միգուցե Նրա զավակները չեն օգտագործում այն: Միգուցե նրանք նման են այն մեկ տաղանդ ունեցող մարդուն, որը փաթաթեց իր տաղանդը թաշկինակի մեջ և թաղեց հողի տակ: Բայց Աստվածաշնչում գրված է, որ Աստծո սերը սփռվեց մեր սրտերում Սուրբ Հոգով: Սա նշանակում է, որ մեր սրտերում և հոգիներում սփռվեց *աստվածային սերը:* Մենք սիրո ընտանիքում ենք:

Հիսուսն ասաց. *«Սրանով կգիտենան ամենը, թե Իմ աշակերտներն եք, եթե իրար հանդեպ սեր ունենաք»* (Հովհ. 13.35): Ահա թե ինչպես նրանք կճանաչեն մեզ:

Այսպիսի սերը եսակենտրոն չէ: *«Աստված այնպես սիրեց աշխարհը, որ... տվեց»* (Հովհ. 3.16):

Աստծո ընտանիքի սիրո օրենքը հետևյալն է. *«Իրար սիրեք, ինչպես Ես ձեզ սիրեցի»* (Հովհ. 13.34): Ինչպե՞ս Նա սիրեց մեզ: Մի՞թե Նա սիրեց մեզ, որովհետև մենք արժանի էինք: Ո՛չ: Նա սիրեց մեզ, երբ մենք բոլորովին արժանի չէինք սիրո: Նա սիրեց մեզ, երբ մենք դեռ մեղավոր էինք: Այսպես է ասում Աստվածաշունչը:

(Եվ մտածեք հետևյալի մասին. եթե Աստված սիրեց մեզ այսպիսի մեծ սիրով, երբ մենք դեռ մեղավոր էինք, երբ մենք բոլորովին արժանի չէինք սիրո, մի՞թե կարծում եք, որ Նա ավելի քիչ է սիրում Իր զավակներին: Ո՛չ, հազար անգամ ո՛չ):

«Սերերի» համեմատություն. աստվածային սերը՝ շնչավոր մարդկային սիրո համեմատ

Այն սերը, որի մասին մենք խոսում ենք, աստվածային է, ոչ թե շնչավոր: Այսօր մենք շատ ենք լսում շնչավոր մարդկային սիրո մասին, բայց այս աշխարհում չկա ոչինչ՝ Աստծո սիրո պես: Շնչավոր մարդկային սերը եսակենտրոն է: Ես լսել եմ, թե ինչպես են մարդիկ ասում. «Մոր սերը նման է Աստծո սիրուն»: Մեկ անգամ ես մտածեցի. «Ո՛չ, դա ճիշտ չէ: Մոր սերը շնչավոր մարդկային սեր է: Եվ այն եսակենտրոն է. «Սա *իմ* երեխան է»»:

Մեկ անգամ մի կին մոտեցավ ինձ և լաց լինելով ասաց.

- Ես սիրո՛ւմ եմ իմ երեխաներին: Ես սիրո՛ւմ եմ նրանց: Ուզում եմ, որ աղոթեք նրանց համար: Ես մեծացրել եմ նրանց այս եկեղեցում և չեմ հասկանում, թե ինչու նրանցից ոչ ոք չի ցանկանում եկեղեցի գալ՝ բացի իմ աղջկանից:

Նրա դուստրերից մեկը դաշնամուր էր նվագում, և նա միակն էր, որը եկեղեցի էր հաճախում: Բացի այդ՝ վերջերս նրա որդիներից մեկը փախել էր տնից:

- Այս եկեղեցում չկա այնպիսի մարդ, որն ավելի շատ սիրեր իր երեխաներին, քան ես եմ սիրում իմ երեխաներին, - ասաց նա:

- Քո՛ւյր, պետք է ինչ-որ պատճառ լինի, - պատասխանեցի: - Ես կողմնակի մարդ եմ այստեղ. ես պարզապես ավետարանիչ եմ, բայց տեսնում եմ այդ խեղճ աղջկան, որը նստած է դաշնամուրի առջև: Դուք խեղդել եք նրան ձեր «սիրով»: Եվ ես երաշխավորում եմ, որ մյուսները հեռացել են, քանի որ դուք թույլ չեք տալիս նրանց դուրս գալ ձեր փեշի տակից: Դուք ցանկանում եք լիովին վերահսկել նրանց կյանքը: (Ես նայեցի այդ աղջկան, որը նստած էր դաշնամուրի առջև, և նա արագ թեքեց գլուխը: Նա չգիտեր՝ ինչպես վարվել): Ես կհամարձակվեմ ասել, որ ձեր աղջիկը կյանքում ոչ մի անգամ ընկերություն չի արել ոչ մի տղայի հետ և նույնիսկ չի ունեցել ոչ մի ընկերուհի:

- Ես միշտ պահել եմ նրան տանը, - ասաց նա: - Ես մտածում էի, որ կարող էի ավելի լավ դաստիարակել նրան:

- Ո՛չ, չե՛ք կարող, - պատասխանեցի ես: - Նրա անհատականությունը խեղված է:

Դա շնչավոր մարդկային սեր էր՝ մայրական սեր, բայց այն եսակենտրոն էր: Իր սրտում նա չէր ձգտում իր երեխաների շահին: Նա ձգտում էր *իր* շահին: Նա ցանկանում էր պահել նրանց իր կողքին:

Դուք երբևէ նկատե՞լ եք, որ խնդիրները զոքանչների և փեսաների միջև հազվադեպ են: Սովորաբար խնդիրներ առաջանում են սկեսուրների և հարսների

միջև: Շատ հաճախ մորը թվում է, թե չկա այնպիսի աղջիկ, որը հարմար է «իր տղային»: Այդ աղջիկը կարող է լինել փրկված, լցված Սուրբ Հոգով և կարող է ամեն երեկո աղոթել լեզուներով: Եվ փոխարենը այդ կինը թույլ տա իր մեջ եղող Աստծո սիրուն իշխել իր կյանքում, նա թույլ է տալիս իր մարմնում գտնվող շնչավոր մարդկային սիրուն տիրապետել իրեն: Նա մշտապես խայթում է և նկատողություններ անում:

Սկեսրոջ և հարսի խնդիրների պատճառը (եթե նրանք չեն վարվում Աստծո սիրով) այն է, որ տարիներ շարունակ մայրը եղել է միակն իր որդու կյանքում: Եվ նա դեռ ցանկանում է տնօրինել որդու կյանքը: Իսկ այժմ նրա կինն է ցանկանում տնօրինել նրա կյանքը: Սակայն նրանք չեն կարող անել դա երկուսով, և այդ անձնավորությունը բախվում է երկընտրանքի:

Աստծո սերը մեր սրտերում է, բայց այն կարող է լինել թաշկինակի մեջ փաթաթված և հողի տակ թաղված տաղանդի պես: Հնարավոր է, որ մենք չենք օգտագործում այն, բայց Աստծո սերը մեր սրտերում է:

Եթե մենք օգտագործեինք աստվածային սերը և սովորեինք թույլ տալ այդ սիրուն իշխել մեզ, այն մեծ փոփոխություններ կառաջացներ մեր կյանքում: Այն կբժշկեր մեր ընտանեկան խնդիրները: Նման սերը երբեք չի եղել դատարանում՝ ամուսնալուծվելու համար, և երբեք այդտեղ չի գնա: Այդտեղ գնում է

շնչավոր մարդկային սերը: Շնչավոր մարդկային սերը կարող է վերածվել ատելության, եթե չստանա իր ուզածը: Այն կպայքարի և աղմուկ կհանի, կճանկռոտի և կհարվածի, կանիծի և չարակամ կդառնա: Աստվածային սերն անարգվելիս՝ չի անարգում ի պատասխան: Ես չեմ ասում, որ քրիստոնյաները չեն եղել դատարաններում՝ ամուսնալուծվելու համար. ոմանք արել են դա: Բայց նրանք թույլ չեն տվել աստվածային սիրուն իշխել իրենց:

Աստված ցանկանում է, որ մենք աճենք: Եվ փա՛ռք Աստծուն, մենք կարող ենք աճել սիրո մեջ: Աստվածաշունչը խոսում է սիրո մեջ կատարյալ կամ հասուն լինելու մասին: Ո՛չ, մենք դեռ կատարյալ չենք դարձել սիրո մեջ, բայց կարող ենք, և մեզնից ոմանք դրա ճանապարհին են:

Աստվածային սերը շահագրգռված չէ այն բանով, թե ինչ ինքը կարող է ստանալ, այլ՝ թե ինչ ինքը կարող է տալ: Դուք հասկանո՞ւմ եք, թե ինչպես սա կարող է լուծել ձեր ընտանիքի բոլոր խնդիրները:

Չափազանց շատ մարդիկ եսասեր են: Ու թեև նրանք քրիստոնյա են, սակայն թույլ են տալիս մարդկային բնությանն իշխել իրենց. «Ի՞նչ եմ ես ստանալու», «Ես չե՛մ ընդունի դա», «Ես չե՛մ հանդուրժի դա»: «Ե՛ս», «ե՛ս», «ե՛ս», «ե՛ս»:

Սա տեղի է ունենում նաև եկեղեցիներում: Ես 20

տարեկան ամուրի էի, երբ հովվում էի իմ երկրորդ եկեղեցին, և ես սենյակ էի վարձակալել եկեղեցում գտնվող մի ընտանիքի տանը: Այդ ընտանիքի հայրը գիտեր Աստվածաշունչը և զարմանալի փորձառություն ուներ Աստծո հետ: Բայց նա այնպիսի մարդկանցից էր, որոնք ասում են. «Ես ձայնի իրավունք ունեմ և օգտվելու եմ դրանից: Ես այս եկեղեցու անդամ եմ նույնքան, որքան մյուսները, և ես ձայնի իրավունք ունեմ այստեղ»: Նա օգտվում էր իր իրավունքներից, նման եկեղեցու ևս մի քանի անդամների, մինչև որ նրանք կործանեցին ամեն ինչ:

Ես մնացի այդտեղ ընդամենը վեց ամիս: Աստված պատվիրեց ինձ ասել, որ եթե նրանք չապաշխարեն, կգա ժամանակ, երբ այլևս եկեղեցի չեն ունենա: Այս մարգարեական խոսքում, որն առաջինն էր իմ կյանքում, Նա ասաց. «Ես կհեռացնեմ նրանց ճրագակալը, եթե նրանք չապաշխարեն, մեկ տարվա ընթացքում այս եկեղեցու դռները կփակվեն: Դրանք փակ կմնան երկու տարի, իսկ հետո կրկին կբացվեն: Ես կտամ նրանց ևս մեկ հնարավորություն: Եթե նրանք կրկին չապաշխարեն, այս եկեղեցու շենքը կհեռացվի այս եկեղեցական տարածքից»:

Նրանք այնպե՜ս բարկացան և գրեթե պատրաստ էին վարվել ինձ հետ այնպես, ինչպես ուզում էին վարվել Հիսուսի հետ Իր հայրենի քաղաք Նազարեթում. նրանք պատրաստ էին բլրից ցած գցել ինձ: Պատմեցին իմ խոսքերն այդ շարժման երեցներից մի քանի-

սին, և նրանք ուզում էին հեռացնել ինձ, բայց մի փոքր վախենում էին:

Այնուամենայնիվ, այդ տարվա ավարտին, ինչպես որ Աստված էր ասել, այդ եկեղեցու դռները փակվեցին երկու տարով: Այդ շենքի դռան վրա կախովի կողպեք էր դրված: Եվ հետո մի մարդ վերաբացեց այն: Աստված որոշ ժամանակ տվեց նրանց, բայց նրանք չվարվեցին լույսի մեջ, և այն կրկին փակվեց: Կատարվեց՝ ինչպես որ ասաց Աստված: Ես կարող եմ տանել ձեզ այնտեղ և ցույց տալ հողատարածք՝ առանց եկեղեցական շենքի, որը դեռ պատկանում է այդ եկեղեցական շարժմանը:

Տարիներ շարունակ այնտեղ բավականաչափ մարդիկ կային, որ կարող էին եկեղեցի սկսել, բայց չկարողացան, քանի որ անհաշտ էին իրար հետ: Նրանք այդպես էլ չբարձրացան քրիստոնեության մանկության փուլից. նրանք երեխաներ մնացին. նրանք չաճեցին:

Որպես Աստծո զավակներ՝ մեր մեջ Աստծո բնությունն է: Եվ Աստծո բնությունը սեր է: Այնպես որ, հոգևոր առումով, սիրելը բնական է մեզ համար: Բայց եթե ես թույլ տամ, որ իմ դրսի մարդը և իմ միտքն իշխեն ինձ, իմ սրտում եղող սիրո բնությունը բանտարկված կմնա. եկե՛ք ազատություն տանք մեզանում գտնվող Աստծո սիրուն:

Սիրո բացահայտումը

Ինչպիսի՞ն է այս աստվածային սերը: Ինչպիսի՞ն են դրա հատկանիշները: Դրանք ներկայացված են Ա Կորնթացիների 13-րդ գլխում: Ցավալի է, որ Աստվածաշնչի անգլերեն *«Զեյմս թագավորի»* թարգմանությունը հունարեն «աստվածային սեր»՝ *«ագապե»* բառը թարգմանում է որպես «բարեգործություն»: Այս «սիրո բացահայտման» իմ ամենասիրելի թարգմանությունը *«Ընդլայնված թարգմանությունն»* է: Կարդանք 4-8 խոսքերը.

«Սերը երկար է դիմանում, համբերատար է ու բարի է»:

Շատերն են երկար դիմանում, բայց նրանք համբերատար և բարի չեն այդ ընթացքում: Նրանք պարզապես երկար տառապում են, քանի որ հարկադրված են. «Ես տառապել եմ ամբողջ այս ընթացքում: Ես այլևս չեմ դիմանալու սրան»:

«Սերը երբեք չի նախանձում, ո՛չ էլ վառվում է խանդով»:

Խանդոտ է շնչավոր մարդկային սերը: Իսկ այս տեսակի սերը չի վառվում խանդով:

«[Սերը] *պարծենկոտ և սնափառ չէ, այն ամբարտավանորեն չի վարվում: Այն ինքնահավան (գոռոզ և հպարտությամբ փքված) չէ. այն կոպիտ (անքաղաքավարի) չէ և չի վարվում անպարկեշտ: Սերը*

(Աստծո սերը մեզանում) համառորեն չի պահանջում իր իրավունքները և իր ուզածը, քանի որ այն անշահախնդիր է»:

Երանի՜ դուք ժամանակ տրամադրեիք և թույլ տայիք, որ այս խոսքերը թափանցեին ձեր սիրտը: Ոմանք միգուցե ասեն. «Ես գիտեմ, թե ինչն է պատկանում ինձ: Ես ձայնի իրավունք ունեմ և օգտվելու եմ դրանից: Ես իրավունքներ ունեմ և օգտվելու եմ դրանցից»: Այո՛, դուք կօգտվեք ձեր իրավունքներից՝ անկախ այն բանից, թե որքան ցավ է դա պատճառելու մեկ ուրիշին:

Այստեղ գրված է, որ սերը համառորեն չի պահանջում իր իրավունքները: Մենք երբեք հաջողություն չենք ունենա մեր հոգևոր աճի մեջ, քանի դեռ չենք սկսել հավատալ Աստծուն և հավատալ սիրուն: Սա լավագույն ճանապարհն է: Եվ սա ձեր ճանապարհն է:

«[Սերը] *նեղացկոտ, դյուրագրգիռ կամ վրդովվող չէ. այն չի համարում իր դեմ գործած չարիքը [այն ուշադրություն չի դարձնում իրեն հասցրած վնասին]»:*

Սա սիրո ջերմաչափն է: Սա սիրո չափիչն է: Շատ հեշտ է իմանալ՝ արդյո՞ք դուք վարվում եք սիրով: Երբ սկսում եք հաշվել ձեր դեմ գործած չար արարքները, դուք չեք վարվում սիրով: Քանի դեռ դուք վարվում եք Աստծո մեջ և ունեք Հոգու լեցունությունը, դուք չեք հաշվի ձեր դեմ գործած չար արարքները:

Տարիներ շարունակ ինձ հետ վատ բաներ են տեղի ունեցել, ինչպես և ձեզ հետ: Այլ ծառայողներ և նույնիսկ իմ ազգականներն ասել են ինձ. «Ես չէի հանդուրժի դա: Ես չէի համակերպվի դրա հետ: Ո՛չ ես»: Բայց ես պարզապես փակ էի պահում իմ բերանը, երբեք ոչինչ չէի պատասխանում, ժպտում էի և պահպանում իմ ուրախությունը: Ինչո՞ւ: Ես չէի պատրաստվում ժամանակ տրամադրել՝ հերքելու համար իմ դեմ արված չարախոսությունները, նույնիսկ եթե ինչ-որ մեկն ասեր, որ ես սպանել եմ իմ տատիկին: Ես բացականչում էի. «Ալելուի՛ա: Գոհությո՛ւն Աստծուն: Փա՛ռք Աստծուն», և առաջ էի շարժվում: Այդպես վարվելով, ի վերջո, դուք հաղթող եք դառնում:

Որոշ ծառայողներ նույնիսկ ասել են ինձ. «Երևի թե քո բնավորության մեջ թուլություն կա: Դու երբեք չես պաշտպանվում»: Ո՛չ, դա ուժ է: Քանի որ սերը երբեք չի վերջանում: Շատերն են սպառվել և նույնիսկ ժամանակից շուտ մահացել են, քանի որ նրանք այն աստիճան են ապրել բնական կյանքով, որ չեն կարողացել օգտվել այն արտոնություններից և իրավունքներից, որոնք պատկանում են իրենց՝ որպես Աստծո զավակի: Նրանք մշտապես տարված են եղել դատարկ հոգսերով և կռիվներով, մինչև որ դա սկսել է ազդել իրենց մարմնի վրա:

«[Սերը] *չի համարում իր դեմ գործած չարիքը»:*

Այսպիսի սերը պետք է որ աստվածային լինի, քանի որ մենք Աստծո թշնամիներն էինք, սակայն Աստված չհամարեց այն չարիքը, որը մենք գործել էինք Իր դեմ: Նա ուղարկեց Հիսուսին՝ մեզ փրկելու համար: Նա սիրեց մեզ, երբ մենք դեռ մեղավոր էինք:

«[Սերը] *ուշադրություն չի դարձնում իրեն հասցված վնասին»:*

Մի մարդ, որն ապրում էր Ջորջիա նահանգում, մեկ անգամ ասաց. «Եվ քանի՞ այդպիսի մարդ դու կարող ես գտնել»: Մարդիկ, որոնք վարվում են սիրով՝ Աստծո սիրով, Քրիստոսի սիրով, սակավաթիվ են: Թեև շատերն ունեն այդ սերը, նրանք վարվում են շնչավոր մարդկային սիրով: Եվ իհարկե, նրանք ուշադրություն են դարձնում իրենց հասցրած վնասին: Նրանք ամբարտավան են դառնում: Ամուսինը և կինը, որոնք երկուսն էլ քրիստոնյա են, բարկանում են իրար վրա և մեկ շաբաթ չեն խոսում միմյանց հետ ինչ-որ սխալի պատճառով: Ես գիտեմ, որ «կանգնել եմ ձեր ոտքերի մատներին», բայց ես դեռ ուզում եմ որոշ ժամանակ կանգնած մնալ դրանց վրա:

Մի՞թե չեք հասկանում, թե ինչպես շատ իրավիճակներ մեր ընտանիքում, եկեղեցում և երկրում կշտկվեն, եթե մարդիկ դառնան Աստծո զավակներ, ընդունեն Աստծո սերը և սկսեն ապրել Աստծո ընտանիքում՝ որպես Աստծո զավակներ:

«[Սերը] *չի ցնծում անարդարության և անիրավության պատճառով, այլ ցնծում է, երբ արդարությունը և ճշմարտությունը հաղթում են: Սերը դիմանում է ամեն ինչի»:*

Ինչ-որ մեկն ասաց. «Ես այլևս չեմ կարող դիմանալ»: Սերը կարող է: «Ես այլևս չեմ կարող հանդուրժել նրան»: Մտածե՛ք Աստծո մասին: Նա հանդուրժում է բոլորիս: «Ես կարող եմ դիմանալ այսքանի, և ոչ՝ ավելիի»: Դա հին բնություն ունեցող մարդու սերն է: Աստծո սերը ձեզանում դիմանում է ամեն ինչի:

«[Սերը] *մշտապես պատրաստ է հավատալ լավագույնին ամեն մարդու մեջ»:*

Շնչավոր մարդու սերը պատրաստ է հավատալ վատագույնին ամեն մարդու մեջ: Այն մշտապես պատրաստ է հավատալ վատագույնին իր ամուսնու մեջ, իր կնոջ մեջ և իր երեխաների մեջ: Բայց աստվածային սերը մշտապես պատրաստ է հավատալ լավագույնին ամեն մարդու մեջ՝ ամուսնու, կնոջ, եկեղեցում գտնվող եղբոր կամ քրոջ և երեխաների: Հավատացե՛ք լավագույնին ամեն մարդու մեջ:

Ես շրջել եմ և ծառայել եմ ամբողջ Ամերիկայով: Զարմանալի է, թե ինչեր կարելի է լսել տարբեր քարոզիչների, հավատացյալների, սարկավագների, Կիրակնօրյա դպրոցի ուսուցիչների և փառաբանության ծառայողների մասին: Ես նույնիսկ մի փոքր ուշադրություն չեմ դարձնում այդ ամենին: Ես չեմ հավատում

մարդկանց ասած նույնիսկ մեկ խոսքի: Ես հավատում եմ լավագույնին յուրաքանչյուր մարդու մեջ:

Երեխաներն իրավունք ունեն դաստիարակվելու այսպիսի սիրո մթնոլորտում: Այդ դեպքում, նրանք կհաղթեն այս կյանքի պայքարում: Բայց երբ դուք տեսնում եք վատագույնը ձեր երեխաների մեջ և մշտապես ասում եք նրանց. «Դու երբեք ոչնչի չես հասնի: Դու չես կարող անել այսինչ և այնինչ բաները», նրանք կապրեն ըստ ձեր խոսքերի: Նույնիսկ եթե նրանք սխալվեն, երբ դուք տեսնեք լավագույնը նրանց մեջ և սիրեք նրանց աստվածային սիրով, լավագույնը նրանց մեջ կարտահայտվի, և նրանք մեծ բաների կհասնեն կյանքում:

«[Սիրո] *հույսերը չեն մարում բոլոր հանգամանքներում, և այն դիմանում է ամեն ինչի [առանց տկարանալու]: Սերը երբեք չի վերջանում (կամ՝ ձախողվում)՝ երբեք չի մարում, չի հնանում և չի ավարտվում»:*

Եթե վարվեք սիրո մեջ, դուք չեք ձախողվի: Սերը երբեք չի ձախողվում:

Մենք հետաքրքրված ենք հոգևոր պարգևներով, և դա ճիշտ է: Այնուամենայնիվ, առաջին հերթին մենք պետք է հետաքրքրված լինենք սիրով: Մարգարեությունները կլռեն: Լեզուները կդադարեն: Գիտելիքը կխափանվի: Բայց գոհությո՛ւն Աստծուն, սերը երբեք չի վերջանա:

Այո՛, ես հավատում եմ մարգարեությանը և մարգարեանալուն: Ես հավատում եմ լեզուներին: Փա՛ռք Աստծուն դրանց համար: Բայց դուք կարող եք գործածել դրանք առանց սիրո, և դրանք կլինեն ձայն հանող պղնձի և հնչեցող ծնծղայի պես:

Ճիշտ դիրքորոշումը հետևյալն է: Եկեք մարգարեանանք: Եկեք խոսենք լեզուներով: Եկեք հավատք ունենանք: Բայց այդ ամենի հետ մեկտեղ, եկեք սեր ունենանք: Եկեք տանք առաջնահերթությունը սիրուն, քանի որ մենք գտնվում ենք սիրո ընտանիքի մեջ և ծանոթացել ենք մեր երկնային Հոր հետ, Ով սիրո Աստված է:

Մենք պետք է ցանկանանք սովորել: Մենք պետք է ցանկանանք աճել: Մենք պետք է ցանկանանք աճել սիրո մեջ, մինչև որ կատարյալ դառնանք սիրո մեջ: Ես դեռ կատարյալ չեմ դարձել սիրո մեջ. իսկ դո՞ւք: Բայց գիտե՞ք, որ համաձայն Աստծո Խոսքի՝ մենք կարող ենք անել դա: Ոչ թե հանդերձյալ աշխարհում, այլ այս աշխարհում: Ես հավատում եմ, որ մեզնից ոմանք կհասնեն դրան: Ես չեմ հանձնվելու, միայն որովհետև դեռ չեմ հասել դրան: Ես շարունակելու եմ ձգտել դրան: Փա՛ռք Աստծուն Նրա Խոսքի համար: Փա՛ռք Աստծուն Նրա սիրո համար:

ՄԱՍ III

Գլուխ 7

ԳԻՏԵԼԻՔ ՍՏԱՆԱԼ

> *«Մինչև որ ամենքս հասնենք հավատքի և Աստծո Որդուն ճանաչելու միությանը և կատարյալ մարդ լինենք՝ Քրիստոսի կատարյալ հասակի չափով»:*
>
> - Եփեսացիների 4.13

Ինչպե՞ս է սա տեղի ունենալու:

Կարծում եմ՝ բոլորս ենք ցանկանում հոգևորապես հասուն լինել, բայց միայն ցանկանալով ոչինչ չի ստացվի: Ի՞նչ պետք է անենք հոգևորապես աճելու համար:

Մենք արդեն մատնացույց արեցինք Ա Պետրոս 2.2-ը. *«Նորածին երեխաների պես ցանկացեք այն բանավոր (կամ՝ Խոսքի) անխարդախ կաթին, որ նրա-*

նով աճեք»: Աստված սկիզբ է դնում մեր հոգևոր կյանքին այնպես, ինչպես որ սկսվում է բնական մարդու կյանքը: Երբ երեխաները ծնվում են, նրանք սկսում են սնվել կաթով: Նրանք ոչ մի դեպքում չեն կարող միս ուտել: Եվ Աստված ասում է, որ Խոսքի այս անխարդախ կաթը հոգևոր աճ կտա մեզ:

Այնուամենայնիվ, կան որոշ բաներ, որոնք Պողոսը գրեց Կորնթացի քրիստոնյաներին և հրեա քրիստոնյաներին, որոնք հետաքրքրական են մեզ համար:

Ա ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻ 3.1,2

«Եվ ես, եղբայրնե՛ր, չկարողացա ձեզ հետ խոսել ինչպես հոգևորների հետ, այլ ինչպես մարմնավորների հետ, ինչպես մանուկների հետ Քրիստոսում:

Կաթ խմեցրի ձեզ, և ոչ թե կերակուր, որովհետև տակավին չէիք կարող, այլ հիմա էլ դեռ չեք կարող»:

ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐԻ 5.11-14 (մեկնաբանությունները՝ փակագծերի մեջ)

«Որի համար շատ բան ունենք ասելու, և դժվար է մեկնել, որովհետև դուք դանդաղ եղաք լսելիքով (կան բաներ, որոնք դժվար է հասցնել մարդկանց, որովհետև նրանց լսողությունը բթացած է):

Որովհետև, ժամանակին նայելով, պիտի վարդապետ լինեիք: Կրկին կարոտ էք սովորելու, թե ինչ են Աստծո խոսքերի առաջին նշանագիրները, և կարոտողներ եղաք կաթի, և ոչ թե հաստատ կերակուրի:

Որովհետև նա, ով կաթնակեր է, անհմուտ է արդա-

> ության խոսքին (կամ՝ «չունի փորձառություն արդարության խոսքի մեջ»: Իսկ ինչո՞ւ նա չունի փորձառություն արդարության խոսքի մեջ), որովհետև տղա է:
>
> Բայց կատարյալների (հասունների) համար է հաստատ կերակուրը, որոնց զգայարանները վարժողությամբ կրթված են բարին և չարը զանազանելու»:

Նրանց մոտ նույն խնդիրն էր, որին մենք բախվում ենք հիմա՝ աճը: Նրանք ճիշտ մեզ նման էին: Նրանք պետք է ուսուցիչներ դարձած լինեին, բայց դեռ սովորելու կարիք ունեն: Նրանց անկարելի էր սովորեցնել շատ խորը բաներ. նրանք դեռ պետք է սովորեին կաթին: Պողոսն ասաց. «Ես կաթ խմեցրի ձեզ, որովհետև դուք չէիք կարող միս ուտել»:

Խոսքի կաթը, որի մասին նա խոսում է այս հատվածում, Քրիստոսի վարդապետության սկզբունքները քարոզելն ու դրանցում հարատևելն է (տե՛ս Եբր. 6.1,2): Պողոսն անվանում է դա Խոսքի կաթ, ոչ թե պինդ միս: Եթե ձեզ դեռ պետք է սովորեցնել սկզբունքները, դուք դեռ կաթ եք խմում: Եվ կարծում եմ՝ շատ հաճախ իրական պատկերը հենց այսպիսին է:

Այնուամենայնիվ, ինչպե՞ս ենք մենք աճելու: Վերադառնանք Եփեսացիների 4.13-ին, որում գրված է, որ մենք պետք է աճենք *«Աստծո Որդուն ճանաչելու»* մեջ՝ կատարյալ կամ հասուն մարդ դառնալով:

Աճը տեղի է ունենում, երբ գիտելիք եք ստանում

Աստծո Խոսքից, երբ սնվում եք Խոսքով, մինչև որ հասկանում եք Աստծո ծրագիրը, որը Նա կազմեց, և որը կատարելու համար ուղարկեց Տեր Հիսուսին... մինչև որ հասկանում եք, թե ով եք դուք Քրիստոսում, և ով է Քրիստոսը ձեզանում... մինչև որ հասկանում եք, թե ինչ է Նա արել ձեզ համար Իր մահվան, թաղման, հարության և համբարձման միջոցով և Հոր աջ կողմը նստելով... մինչև որ հասկանում եք, թե ինչ է Նա անում ձեզ համար հենց հիմա՝ նստած Հոր աջ կողմը, որտեղ Նա շարունակ բարեխոսում է ձեզ համար... մինչև որ հասկանում եք, որ Նա պարտության է մատնել սատանային և դևերին, որ այս աշխարհի բոլոր խավար ուժերը և իշխանները գահընկեց են արվել, և որ նրանք չեն կարող իշխել ձեր կյանքում:

Երբ հասկանում եք այս ամենը, դուք անցնում եք կաթով սնվելու փուլը: Բայց որոշ մարդկանց անկարելի է քարոզել այս մասին: Նրանց հետ անկարելի է խոսել խորը իրողությունների մասին: Անկեղծ ասած, ես գիտեմ շատ բաներ, որոնք երբեք չեմ սովորեցրել: Ո՞րն է պատճառը: Մարդիկ պետք է պատրաստ լինեն դրանց: (Պողոսը, ըստ էության, ասաց. «Կան բաներ, որոնք ես կուզեի սովորեցնել ձեզ, բայց դուք չեք կարող ընդունել դրանք»: Նրանք չէին կարողանա կրել այդ բաները): Եվ ես նկատի չունեմ արհեստականորեն հորինված հայտնություններ: Ես նկատի ունեմ Աստծո անարատ և պարզ Խոսքը: Բայց դա

շատ ավելին է, քան մենք մինչև օրս սովորեցրել ենք: Այնպես որ, մենք պետք է դանդաղ առաջ գնանք, որպեսզի մարդիկ կարողանան յուրացնել այն, ինչ մենք տալիս ենք իրենց:

Սխալ սննդակարգ

Ինչո՞ւ մենք չենք աճել:

Եթե մենք ծնված ենք Աստծուց և Նրա ճշմարիտ զավակներն ենք և չենք աճում, պատճառն այն է, որ մենք չենք ունեցել ճիշտ սննդակարգ:

Ես չեմ մեղադրում մարդկանց: Ես չեմ կշտամբում ձեզ: Ես լիովին համոզված եմ՝ խնդիրն այն է, թե ինչպես են մարդկանց ծառայել: Վստահ եմ, որ հավատացյալների մեծ մասը՝ 100-ից 99.99-ը, կբարձրանար այն մակարդակին, որն Աստծո Խոսքը նախատեսել է նրանց համար, եթե նրանք իմանային այդ Խոսքը:

Այն, որ մարդը ծառայության պարգևներից մեկն է՝ առաքյալ, մարգարե, ավետարանիչ, հովիվ, ուսուցիչ, չի նշանակում, որ նա հասուն քրիստոնյա է: Դա պարզապես նշանակում է, որ նրա կյանքում կոչում կա: Նա դեռ պետք է աշխատի իր զարգացման և աճի վրա:

Վերջին եկեղեցում, որը ես հովվում էի, 1947-1948թթ. ձմռանը, ես փակվում էի եկեղեցու շենքում, երբեմն օրեր շարունակ՝ Աստծո Խոսքի հետ: Ես ծնկի էի գալիս և կարդում էի Աստվածաշունչը ծնկներիս

վրա: Ես կարդում էի այն ժամերով և շաբաթներով: Իհարկե, ես կարդացել էի այն տարիներ շարունակ, բայց այս անգամ վերցրել էի այն երկու աղոթքները, որոնք Պողոսն աղոթեց Եփեսոսի եկեղեցու համար՝ Եփեսացիների 1.17-19 և 3.14-21:

Ես թողնում էի իմ Աստվածաշնչերից մեկը բացված այդ հատվածի վրա ամբողջ շաբաթվա ընթացքում: Եվ ամեն անգամ, երբ եկեղեցու շենք էի մտնում, ես ծնկի էի գալիս և ասում. «Հա՛յր, ես աղոթում եմ այս աղոթքներն ինձ համար»: Եթե ես պետք է զանգեի ինչ-որ մեկին կամ եթե ինչ-որ հարց էր առաջանում, վերադառնալիս աղոթում էի այդ աղոթքներն ինձ համար, նույնիսկ եթե այդ օրը ես արդեն մի քանի անգամ արել էի դա. «Որ իմ սրտի աչքերը լուսավորվելով՝ իմանամ, թե ինչ է Նրա կոչման հույսը...», և այլն:

Որոշ ժամանակ թվում էր, թե դա ոչ մի օգուտ չէր տալիս: Բայց ես շարունակում էի այդպես աղոթել: Սակայն ավելի ուշ սկսեցի *հայտնություններ* ստանալ Աստծո Խոսքից (Նա չէր կարողանա հայտնել ինձ Խոսքը, եթե ես շարունակ չսնվեի դրանով): Այն սկսեց բացվե՛լ ինձ համար:

Մի քանի շաբաթում՝ գրեթե 30 օրում, ես իմացա ավելին, քան գիտեի իմ ծառայության 13-14 տարիներին: Ես ասացի կնոջս.

- Ի՞նչ էի ես քարոզում: Աստվա՛ծ իմ, Աստվա՛ծ իմ,

այն մի փոքրը, որը ես տալիս էի մարդկանց, նույնիսկ կաթ չէր. դա ասես զտած կաթ լիներ:

Ես չստացա դա՝ պարզապես աղոթելով: Աղոթքը դրա մասն էր: Խոսքի մեջ՝ աղոթքի հետ մեկտեղ, ես անցկացրի հավասար ժամանակ, եթե ոչ ավելին: Դուք չեք կարող աղոթքի կյանք կառուցել՝ միայն աղոթելով: Այն պետք է կառուցվի Աստծո Խոսքի վրա:

Այսպիսով, երբ Աստվածաշունչը խոսում է այն մասին, որ մենք կատարյալ հասակ ունեցող մարդ դառնանք, այն օգտագործում է *«Ճանաչել Աստծո Որդուն»* ձևակերպումը (Եփես. 4.13): Այն նկատի ունի, որ հենց շնորհիվ այս գիտելիքի մենք կատարյալ հասակ կունենանք և հասուն կդառնանք:

Ճիշտ ուսմունքի վայրը

Մենք չենք աճել ճիշտ ուսմունքի բացակայության պատճառով: Եկեղեցում Աստված կարգել է ուսուցիչների: Նա է հաստատել նրանց այդտեղ (տե՛ս Եփես. 4.11, Ա Կորնթ. 12.28):

Մեզնից յուրաքանչյուրը կարող է ինչ-որ բան սովորեցնել: Բնական տեսանկյունից, մենք կարող ենք պատմել ոմանց այն, ինչ գիտենք, և ինչ-որ չափով սովորեցնել նրանց: Բայց մյուս կողմից, կան մարդիկ, որոնք կանչված են Աստծուց և օծված են Սուրբ Հոգուց՝ սովորեցնելու համար:

Իհա՛րկե, Սուրբ Հոգին նույնպես պետք է լինի մեր ուսուցիչը: Այնուամենայնիվ, չէ՞ որ հենց Սուրբ Հոգին է սովորեցնում մեզ, երբ Նա օծում է մարդկանց՝ սովորեցնելու համար: Որոշ մարդիկ հարում են հետևյալ գաղափարին. «Ոչ ոք չի կարող սովորեցնել ինձ: Ես սովորելու կարիք չունեմ: Սուրբ Հոգին իմ ներսում է, և Ես գիտեմ նույնքան, որքան ցանկացած այլ մարդ»: Սա տգիտություն է: Աստծո Խոսքը հայտարարում է, որ Նա կարգեց Եկեղեցում ուսուցիչների՝ մեզ սովորեցնելու համար:

Այնուամենայնիվ, մտահոգված եմ, որ մեր, այսպես կոչված, ուսմունքի մեծ մասը բխում է մեր մտքից, ոչ թե մեր սրտից: Մենք ստացել ենք Աստծո Խոսքի ընդհանուր մտավոր գիտելիք, բայց այդպես էլ չենք ընդունել այն մեր սրտում: Տարիներ շարունակ այն, ինչ մենք ուսմունք ենք համարել, այնքան սառը, մահացած և անբովանդակ է եղել, որ գրեթե խորշում էինք դրա հիշատակումից:

Այնուամենայնիվ, Աստծո Հոգին օծում է Աստծո Խոսքի ճշմարիտ ուսուցումը և կենդանացնում է այն:

Կար ժամանակ, երբ ինքս չէի հասկանում այս տարբերությունը: Ես քարոզիչ էի: Ես կարող էի քարոզել Սփերջենի կամ այլ քարոզիչների քարոզները: Ես կարող էի կարդալ դրանք և բառ առ բառ քարոզել: Ես սովորել էի քարոզներ կազմել և հոմիլետիկա էի ուսումնասիրում: Ես սիրում էի քարոզել հին ավետա-

բանչական կրակով և եռանդով: Եվ երբեմն տեղի եմ տալիս և կրկին անում եմ դա:

Ես հովիվ էի Կենտրոնական Հյուսիսային Տեխասում 1943 թվականին: Մինչ այդ երբեք ուսուցիչ չէի եղել: Ես չէի սիրում սովորեցնել: Այդ եկեղեցում ընդունված էր, որ կիրակի առավոտյան՝ Կիրակնօրյա դպրոցի ժամին, հովիվը պետք է աստվածաշնչյան դաս անցկացներ: Այն բաղկացած էր մեծահասակ տղամարդկանցից և կանանցից: Ես չէի ցանկանում սովորեցնել այդ ժամին, բայց նրանց մոտ այդպես էր ընդունված: Ես ունեի Կիրակնօրյա դպրոցի գիրք, որը չէի էլ բացում ամբողջ շաբաթվա ընթացքում: Ես ուսումնասիրում էի Աստվածաշունչը և քարոզներ էի պատրաստում, բայց նույնիսկ չէի բացում այդ շաբաթվա դասը մինչև շաբաթ օրվա երեկոն: Ես գիտեի, որ կարող էի կարդալ այն 10-15 րոպեում և պատմել: Թվում էր՝ նրանց դա դուր էր գալիս, բայց ես ոչ մի անգամ այդքան չէի ուրախանում, որքան երբ այդ դասաժամն ավարտվում էր: Ես ցանկանում էի քարոզել:

Այնուամենայնիվ, մի հինգշաբթի՝ ժամը 15:00-ին, այդ եկեղեցու հովվական տանը Աստված ուսուցչական պարգև տվեց ինձ: Իմ ներսում ես իմացա այդ մասին: Ես հասկացա, երբ դա ծնվեց: Ես բարձրաձայն ասացի. «Այժմ ես կարող եմ սովորեցնել»:

Դա ապացուցելու համար ես որոշեցի վարվել շատ անհավանական կերպով: Ես չօգտագործեցի այնպի-

սի հիմնական ծառայություն, որին մարդիկ, միևնույն է, հաճախում էին: Յուրաքանչյուր չորեքշաբթի ցերեկը եկեղեցում կանանց աղոթքախումբ էր հավաքվում, և ես սկսեցի սովորեցնել նրանց:

Գիտե՞ք, թե ինչը զարմացրեց ինձ: Ես կարող էի հանդարտ կանգնել, ոչ մի անգամ չշեղվել իմ նշումներից, ոչ մի անգամ չբարձրացնել ձեռքս, և օծությունը գալիս էր ինձ վրա ավելի ուժգին, քան երբևէ զգացել էի:

Ես սկսեցի սովորեցնել այդ յոթ-ութ կանանց: Նրանք պատմեցին այդ մասին իրենց ամուսիններին և այլ մարդկանց: Երկու-երեք շաբաթ անց այդ հավաքույթին եկավ 15-20 մարդ: Նրանց ամուսիններից մի քանիսը խնդրում էին ավելի շուտ թողնել իրենց աշխատանքից՝ գալու համար: Կարճ ժամանակ անց չորեքշաբթի ցերեկվա հավաքույթին գալիս էր ավելի շատ մարդ, քան չորեքշաբթի երեկոյան հավաքույթին: Շուտով եկեղեցու շենքը գրեթե լեփ-լեցուն էր այդ հավաքույթների ժամանակ:

Ես համոզվեցի, որ մարդիկ ցանկանում են սովորել և ցանկանում են իմանալ:

Մի քանի տարի անց այն բանից հետո, երբ ես տեղափոխվեցի այդ եկեղեցուց, հանդիպեցի այդ կանանցից մեկին: Նա ասաց.

- Փա՛ռք Աստծուն այդ ուսմունքների համար: Ես ապրել եմ միայն դրանցով վերջին յոթ տարվա ընթաց-

քում: Եթե չստանայի այդ ուսմունքները, համոզված եմ, որ այդպես էլ չէի հաղթահարի իմ խնդիրները: Ես դեռ սնվում եմ դրանցով: Դրանից հետո ես այլևս ուսմունքներ չեմ լսել: Մենք միայն քարոզներ ենք լսում:

Անկասկած, մեզ անհրաժեշտ են քարոզներ: Բայց հավատացյալներին անհրաժեշտ են ուսմունքներ: Աստծո ժողովուրդն ուսմունքի կարիք ունի:

Մի պահ վերադառնանք Հիսուսին և Նրա ծառայությանը:

> **ՄԱՏԹԵՈՍ 9.35**
>
> «Եվ Հիսուսը բոլոր քաղաքներով և գյուղերով ման էր գալիս՝ նրանց ժողովարաններում սովորեցնելով և Արքայության Ավետարանը քարոզելով և ժողովրդի մեջ ամեն ցավ ու ամեն հիվանդություն բժշկելով»:

Կարդալով չորս Ավետարանները՝ մենք տեսնում ենք, որ ամեն անգամ, երբ Նա ժողովարան էր գնում, սովորեցնում էր:

Մեկ անգամ Նա սովորեցնում էր գետի ափին, և բազմությունը կիտվում է Նրա վրա՝ հրելով ափից դեպի ծովը: Մի քանի մարդ գետի ափին լվանում և նորոգում էին իրենց ցանցերը, որովհետև նրանք ձկնորսներ էին: Նրանցից մեկը Սիմոն Պետրոսն էր: Հիսուսը հարցրեց, թե արդյո՞ք կարող է օգտագործել նրա նավակը, և մտավ դրա մեջ ու մի փոքր հեռացավ ափից: Եվ գրված է. *«Նստեց և նավից*

սովորեցնում էր ժողովուրդներին» (Ղուկ. 5.3):

Այն բանից հետո, երբ Նա մկրտվեց, և Սուրբ Հոգին իջավ Նրա վրա մարմնավոր կերպով՝ աղավնու պես, Նա Հոգուց անապատ տարվեց և փորձվեց սատանայից: Եվ Ղուկաս 4.15-ում գրված է, որ երբ Նա վերադարձավ Գալիլեա Հոգու զորությամբ, *«Նա սովորեցնում էր նրանց ժողովարաններում և ամենից փառավորվում էր»:*

Այդ ժամանակ նրանք էին Աստծո ժողովուրդը: Այդ օրերի ժողովարանը համապատասխանում է մեր օրերի եկեղեցական համայնքին: Ամեն անգամ, երբ ժողովարան էր գնում, Նա սովորեցնում էր:

Մեր աճ չունենալու հիմնական պատճառը ճիշտ ուսմունքի բացակայությունն է: Իհարկե, մենք կարող ենք ինքներս սովորել և ինչ-որ չափով աճել: Բայց Աստված նույնպես կարգել է ուսուցիչների եկեղեցում, որպեսզի օգնի մեզ աճել և սնուցի մեզ Աստծո Խոսքով:

Ոչ լիարժեք ուսմունքի մեղավորությունը

Եկեղեցին չի առաջադիմել այն բաներում, որոնցում պետք է առաջադիմեր: Ինչպես մի մարդ ասաց. «Եկեղեցին առաջադիմել է երկրորդական բաներում»: Եկեղեցում ուսուցանվել և քարոզվել են երկրորդական, ոչ թե առաջնահերթ ճշմարտություններ:

Եթե ցանկանում եք աճել, դուք պետք է սնվեք Աստծո Խոսքով:

Եկեղեցին ազդեցիկ կերպով սովորեցրել է մարդուն, որ նա ունի արդարության կարիք, որ նա թույլ է և անկարող է հաճեցնել Աստծուն: Այն ազդեցիկ կերպով դատապարտել է հավատացյալի մեղքերը: Այն քարոզել է ընդդեմ անհավատության, այս աշխարհի հետ համակերպվելու և հավատքի բացակայության:

Այնուամենայնիվ, ցավոք, Եկեղեցին չի սովորեցրել ճշմարտությունն այն մասին, թե ով ենք մենք Քրիստոսում, և ինչպես կարելի է արդարություն և հավատք ստանալ:

Շատերը կասեն, թե ինչ է ձեզ պետք, սակայն ցույց չեն տա, թե ինչպես ստանալ դա: Եվ ձեր կյանքում ոչինչ չի փոխվի: Մի տղամարդ նկատել է սա եկեղեցական հավաքույթից տուն գնալիս: Նրա կինը նկատում է նրա անհանգստությունը:

- Ի՞նչ է պատահել, - հարցնում է նա:

- Չգիտեմ, - պատասխանում է ամուսինը: - Ես հիասթափված ու հուսալքված եմ:

- Ինչի՞ց:

- Եկեղեցուց: Մեր հովվից: Այս առավոտ նա քարոզում էր հավատքի մասին: Նա մեջբերեց բոլոր հրաշալի սուրբգրային հատվածները. «Ամեն բան հնարավոր է հավատացողի համար», «Այն, ինչ

աղոթք անելով խնդրեք, հավատացե՛ք, թե կստանաք, և կլինի ձեզ»: Նա ասաց մեզ, թե ինչ կանի հավատքը, եթե մենք ունենանք այն: Նա ասաց, որ մենք պետք է ունենանք այն, բայց չբացատրեց, թե ինչպես: Ես ասես օդում կախված լինեմ: Ես գիտեմ, որ պետք է հավատք ունենամ: Ես գիտեմ, թե ինչ կանի հավատքը, եթե ունենամ: Բայց ես չգիտեմ, թե ինչպես ստանալ այն:

Ճշմարտությունն այն է, որ այդ մարդը հավատք ուներ ամբողջ այդ ընթացքում՝ հավատք փրկվելու համար: Եթե նրան ճիշտ կերպով սովորեցնեին, նա կիմանար, որ ինքը պետք է սնուցեր այդ հավատքի չափն Աստծո Խոսքով, և այն կաճեր: Նա կարող էր օգտագործել միևնույն հավատքը՝ իր մարմնի բժշկությունը ստանալու համար: Նա կարող էր օգտագործել միևնույն հավատքը՝ աղոթքի պատասխաններ ստանալու համար: Նա կարող էր օգտագործել միևնույն հավատքը՝ Սուրբ Հոգով լցվելու համար, բայց նա չգիտեր այդ մասին:

Այդ մարդուն չի կարելի մեղադրել, քանի որ նրա լսածն ավելի շատ խանգարում էր, քան՝ օգնում: Այն ոչ թե սնուցում էր նրան, այլ զրկում էր:

Մի կին, որի երեսին ակնհայտ պայծառություն կար, մոտեցավ ինձ վերջին հավաքույթից հետո, որպեսզի սեղմի ձեռքս: Նա առաջին անգամ էր մոտենում ինձ երեք շաբաթ տևող հավաքույթների

ընթացքում, բայց ես հետևում էի, թե ինչպես էր նա ծաղկունք ապրում և բացում իր սիրտը:

- Եղբա՛յր Հեգին, շնորհակալությո՛ւն, - ասաց նա:

- Ինչի՞ համար:

- Խոսքի համար: Դուք վերադարձրիք իմ փրկության ուրախությունը:

- Փա՛ռք Աստծուն, - ասացի ես:

- Ես այցելու եմ այս եկեղեցում, - ասաց նա: - Վերջին ծառայությունը, որին ես հաճախեցի իմ եկեղեցում... հասկանում եմ, որ հովիվը փորձում էր այնպես անել, որ մենք աղոթեինք: Բայց փոխարենը նա ճիշտ կերպով քարոզեր այդ մասին, որպեսզի մենք ցանկանայինք դա, նա «ծեծեց» մեզ գրեթե մեկ ժամ շարունակ: Երբ ավարտեց, ես մոտեցա խորանին և ծնկի եկա: Ես աղոթեցի. «Սիրելի՛ Աստված, ես չգիտեմ՝ փրկվա՞ծ եմ, թե՞ ոչ: Ես չգիտեմ՝ ունե՞մ ինչ-որ բան, թե՞ ոչ: Ես չգիտեմ՝ որտե՞ղ եմ և ո՞վ եմ»: Ես մնացի այդտեղ ու լաց եղա մինչև մոտավորապես 13:30-ը: Իսկ դուք խրախուսեցիք մեզ աղոթել: Եվ ես համոզված եմ, որ աղոթում եմ ավելի, քան երբևէ աղոթել եմ կյանքում: Ես գիտեմ, որ վայելում եմ շփումը Տիրոջ հետ ավելի, քան երբևէ: Ես գիտեմ, որ կրկին ստացել եմ այն ուրախությունը, որն ունեի, երբ վերստին ծնված մանուկ էի:

Պատճառներից մեկը, թե ինչու մենք չենք աճել,

այն է, որ մենք քարոզել ենք հավատացյալներին այնպես, ասես նրանք մեղավորներ են: Մենք վերաբերվել ենք նրանց ինչպես մեղավորների և կերակրել ենք նրանց մեղավորների պես, մինչև որ կործանել ենք նրանց հավատքը:

Մենք պետք է այնպես ներկայացնենք Աստծո օրհնությունները և զորությունը, որ մարդիկ ցանկանան հետևել Նրան և այնպիսի քաղց զգան, որ չկարողանան չանել դա: Եթե դուք հարկադրված եք ստիպել մարդկանց, ոչինչ չի ստացվի, և նրանք օրհնություն և օգուտ չեն ստանա դրանից:

Ես խոսում եմ այն բաների մասին, որոնք պարտության են մատնում մեզ:

Մեր ծառայությունը, միգուցե անգիտակցաբար, եկեղեցիներում ձևավորել է անհավատության հոգեբանություն: Փոխարենը խոսեն այն մասին, թե ինչ մարդիկ ունեն, ծառայողները խոսում են այն մասին, թե ինչ նրանք չունեն:

Ծառայողները խոսում են քաղաքականության մասին: Որտե՞ղ է գրված, որ Հիսուսը պատվիրեց գնալ աշխարհով մեկ և քարոզել քաղաքականության մասին: Ոչ մի տեղ: Որտե՞ղ եք դուք կարդացել, որ Հիսուսն ասաց. «Գնացե՛ք աշխարհով մեկ և ինչ-որ գրքի ակնարկ ներկայացրեք»: Ո՛չ մի տեղ: Նա ասաց. «Գնացե՛ք աշխարհով մեկ և քարոզե՛ք Ավետարանը»:

Մեր ծառայությունն անգիտակցաբար ձևավորել է մեզանում անհավատության հոգեբանություն:

Այն երգերի մեծ մասը, որոնք երգում ենք, իրականում սուրբգրային չեն (ես խոսում եմ այն ամենի մասին, ինչը խոչընդոտում է մեր աճը): Համաձայն մեր օրհներգների մեծամասնության՝ Քրիստոսի փրկագնումը տեղի է ունենալու միայն մահից հետո:

«Այստեղ մենք շատ բան չունենք

Եվ շատ բանի չենք սպասում,

Բայց կանցնի ժամանակ, և մենք ամեն բան կունենանք:

Այստեղ մենք կանենք այն, ինչ կարող ենք,

Եվ մուրացիկի պես կթափառենք այս հին դժգույն աշխարհում:

Երբ Երկինք հասնենք, ամեն ինչ այլ կլինի»:

Ամեն ինչ այլ կլինի *հիմա,* եթե դուք հավատաք Աստծուն:

Լսե՛ք, թե ինչ է ասվում այդպիսի երգերում: Լսե՛ք, թե ինչ է ասվում այդպիսի քարոզներում:

Մեզ ասում են, որ մենք ունենք հավիտենական կյանքի խոստումը, և դա քարոզվում է հավատացյալներին: Մենք չունենք հավիտենական կյանքի խոստումը: Դա վերաբերում է մեղավորներին: Մենք ունենք հավիտենական կյա՛նք: Հավիտենական

կյանքն այնպիսի բան չէ, ինչը դուք կունենաք, երբ Երկինք հասնեք, այլ այնպիսի բան, ինչը դուք ունեք հենց հիմա:

Ա ՀՈՎՀԱՆՆԵՍ 5.13

«Այս բաները գրեցի ձեզ՝ Աստծո Որդու անվանը հավատացյալներիդ, որ գիտենաք, թե հավիտենական կյանք ունեք»:

«Ունեք» բառը ներկա ժամանակով է:

Աստվածաշունչն ասում է, որ մենք անցել ենք մահից՝ հոգևոր մահից, դեպի կյանք (Ա Հովհ. 3.14): «Կյանք» բառը հունարենում *«զոե»* բառն է: Նույն բառն օգտագործված է Հովհաննես 3.16-ում. *«...որ ամեն Նրան հավատացողը չկորչի, այլ՝ հավիտենական կյանք ունենա»:*

Հիսուսն ասաց. *«Գողը չի գալիս, բայց միայն որ գողանա և սպանի և կորցնի. Ես եկա* (ինչի՞ համար Դու եկար, Հիսո՛ւս), *որ կյանք ունենան, և է՛լ ավելի ունենան»* (Հովհ. 10.10):

Ահա թե ինչու Նա եկավ: Որպեսզի մենք ունենանք *«զոե»*՝ կյա՛նք: Երբեմն այս բառը թարգմանվում է «կյանք», երբեմն՝ «հավիտենական կյանք», բայց խոսքը նույն բառի մասին է:

Նա ասաց. «Ես եկա, որ նրանք «զոե» ունենան, և է՛լ ավելի առատապես ունենան այն»:

Նա ասաց՝ դուք կարող եք ունենալ այս կյանքը հենց հիմա և կարող եք առատորեն ստանալ այն: Ահա և Նրա գալու նպատակը:

Ես լսում էի մի քարոզչի ռադիոյով, որն ասում էր, որ մենք կստանանք այս խոստումն այս կյանքից հետո: Ո՛չ, եթե դուք չունեք այն այս կյանքում, ոչ մի դեպքում չեք ունենա այն հանդերձյալ կյանքում:

«Որովհետև մեղքի վարձքը մահն է, բայց Աստծո շնորհքը՝ հավիտենական կյանք՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի ձեռքով» (Հռոմ. 6.23): Սա պարգև է, որը դուք ստանում եք հիմա՛: Դուք ստանում եք այս կյանքը՝ այս «զոե»-ն, Աստծո կյանքը, աստվածային կյանքը ձեր հոգում, ձեր ներքին էության մեջ:

Այն փոխում է ձեր կյանքը: Այս կյանքն Աստծո բնությունն է: Այն դարձնում է ձեզ նոր ստեղծված և հեռացնում է այն հին բնությունը, որը ձեր ներսում էր: Եվ դուք դառնում եք նոր մարդ Քրիստոս Հիսուսում՝ նոր բնությամբ. *«Հներն անցան, ահա ամեն բան նոր եղավ»* (Բ Կորնթ. 5.17):

Բայց այն օրհներգների մեծ մասը, որոնք մենք երգում ենք, սովորեցնում են, որ փրկությունը և հավիտենական կյանքը մահից հետո են. «Մենք կունենանք այս ամենը այդ ժամանակ»:

«Մենք հանգիստ կառնենք, երբ Երկինք հասնենք»:

Դուք գիտե՞ք, թե ինչ է սովորեցնում Աստվածա-

շունչը: Այն սովորեցնում է, որ մենք կարող ենք ստանալ հանգիստ և խաղաղություն հենց հիմա: Հիսուսն ասաց.

> **ՄԱՏԹԵՈՍ 11.28-30**
>
> «Ինձ մոտ եկե՛ք, ամեն վաստակածներ և բեռնավորվածներ, և Ես հանգիստ կտամ ձեզ:
>
> Ձեզ վրա առե՛ք Իմ լուծը և Ինձնից սովորե՛ք, որովհետև Ես հեզ եմ և սրտով խոնարհ, և ձեր անձերի համար հանգստություն կգտնեք:
>
> Որովհետև Իմ լուծը քաղցր է, և Իմ բեռը՝ թեթև»:

Լսելով որոշ մարդկանց՝ ես մտածում եմ, թե ի՞նչ լուծ են նրանք կրում: Նրանք մշտապես խոսում են դժվարությունների մասին: Նրանք մշտապես փորձությունների մեջ են: Նրանք մշտապես նեղություններ են կրում: Նրանք մշտապես կարիքներ ունեն կամ չեն դիմանում կյանքի ճնշումներին: «Ինչպիսի՛ ծանր բեռ ենք մենք ստիպված լինում կրել: Մեկ օր մենք ցած կդնենք մեր ծանր բեռները»:

Ո՛չ, դուք ցած եք դնում դրանք, երբ գտնում եք Հիսուսին: *«Իմ լուծը քաղցր է, և Իմ բեռը՝ թեթև»:* Նա ասաց, որ այն դժվար չէ: Այն ճնշող չէ: Այն ծանր չէ:

Ի՞նչ լուծ են նրանք կրում: Կարծում եմ՝ նրանք անգիտակցաբար կրում են անհավատության լուծը: Թեև նրանք պատկանում են Հիսուսին և վերստին ծնվել են, նրանք վերցրել են անհավատության լուծը,

և նրանց բեռը ծանրացել է՝ թեթևանալու փոխարեն: Նրանք չեն կարողանում քնել: Նրանք չեն կարողանում ուտել: Նրանք խիստ անհանգիստ են զգում իրենց:

Երբ ձեր ներսում խաղաղություն կա, դա կազդի ձեր մարմնի վրա: Դա ամբողջությամբ կազդի ձեր էության վրա:

«Մենք հաղթանակ կունենանք որոշ ժամանակ անց»:

Ո՛չ, փա՛ռք Աստծուն, մենք հաղթանակ ունենք հիմա՛:

Ա ՀՈՎՀԱՆՆԵՍ 5.4

«Որովհետև նա, ով Աստծուց է ծնված, հաղթում է աշխարհը, և սա է հաղթությունը, որ աշխարհը հաղթեց, այսինքն՝ մեր հավատքը»:

«Մենք հաղթողներ կլինենք, երբ երկինք գնանք»:

Ո՛չ, մենք հաղթողներ ենք հիմա՛:

«Մենք կունենանք խաղաղություն Աստծո հետ, երբ Երկինք հասնենք»:

Աստվածաշունչը նման բան չի ասում: Հռոմեացիների 5.1-ում գրված է. *«Արդ մենք, հավատքով արդարացած լինելով, Աստծո հետ խաղաղություն ունենք մեր Տեր Հիսուս Քրիստոսի ձեռքով»:* Հրաշալի է այս խաղաղությունն ունենալը:

Աստվածաշնչում գրված է. *«Խաղաղություն չու-*

նեն ամբարիշտները,- ասում է Տերը» (Եսայի 48.22): Եթե ես չունենայի այս խաղաղությունը, պետք է ստուգեի իմ անձը: Բայց Նա չասաց սա քրիստոնյաներին: Նա ասաց սա մեղավորներին:

Երբ դուք քարոզում եք քրիստոնյաներին այնպես, ասես նրանք մեղավորներ են, դուք նման գիտակցություն եք ձևավորում նրանցում: Դուք պահում եք նրանց դատապարտության ներքո: Նրանք չեն կարողանա աճել: Դա անհնար է: Դա սխալ սննդակարգ է: Դա նույնիսկ Աստծո Խոսքի անխարդախ կաթը չէ:

Դոկտոր Ջոն Ալեքսանդեր Դոուին գրում էր. «Մեր երգերը խնկարկված են անհավատությամբ»: Դա թույլ չի տվել մեզ աճել: Մենք այնքան ենք երգել այդ երգերը, որ մտածել ենք, որ դրանք ճիշտ են: Ես չեմ ուզում հարկադրել ձեզ, բայց ավելի լավ է չերգել, քան երգել աղբ և անհավատություն պարունակող երգեր:

«Երբ Երկնքում լինենք, չի լինի ոչ մի ձախողում: Մենք չունենք ոչինչ այս աշխարհում և չենք կարող ակնկալել ոչինչ՝ բացի ձախողումից, թշվառությունից, հուսալքությունից և տկարությունից»:

Աստծո Խոսքն այդպես չի սովորեցնում: Պողոսը գրում է. «Մենք ավելի, քան հաղթողներ ենք»: Ոչ միայն հաղթողներ, այլ ավելի, քան հաղթողներ:

Ինչ-որ մեկն ասել է. «Այո, բայց Պողոսն առաքյալ էր»:

Պողոսը չասաց, որ ինքը հաղթող էր, քանի որ առաքյալ էր: Նա ասաց. *«Առավել ևս հաղթում ենք Նրա միջոցով, որ մեզ սիրեց»* (Հռոմ. 8.37): Քրիստոսը Պողոսինը չէր ավելի մեծ չափով, քան մերն է:

Սա չի նշանակում, որ դուք չեք ունենա փորձություններ: Սա չի նշանակում, որ դուք չեք ունենա նեղություններ: Սա չի նշանակում, որ օրհնությունները գալու են ձեզ վրա՝ ծառից թափվող հասած բալի պես, ո՛չ էլ դուք անհոգ նավարկելու եք ժամանակի գետով:

Պողոսի կյանքում այդպես չէր: Նա բանտարկվեց: Նրա մեջքը մտրակի հարվածներ ստացավ: Նրա ոտքերը դրվեցին կապանքների մեջ: Նա բանտի ներքին հատվածում էր և ուներ հիմնավոր պատճառներ բողոքելու և տրտնջալու համար: Բայց կեսգիշերին նա և Շիղան աղոթում էին և փառաբանության երգեր էին երգում Աստծուն:

Երբ նա նավ նստեց՝ որպես բանտարկյալ, ասաց. *«Ո՛վ մարդիկ, տեսնում եմ, որ այս նավարկությունը նեղությունով և շատ վնասով է լինելու, ոչ թե միայն բեռին և նավին, այլ մեր անձերին էլ»* (Գործք 27.10): Ոչ ոք ուշադրություն չդարձրեց նրան: Թվում էր՝ ամեն ինչ լավ էր լինելու: Բայց այդ պատմության ավարտին նա էր վերահսկում իրավիճակը: Նա սկսեց ամենացածր դիրքից, բայց վերջում նավի կապիտանի դերում էր:

Մի՛ մնացեք ներքևում: Կարիք չկա, որ այդպես վարվեք: Գիտե՞ք, թե ինչը բարձրացրեց Պողոսին: Դուք կարող եք կարդալ այդ մասին նրա խոսքերում:

Երբ ոչ ոք փրկության հույս չուներ, ծերունի Պողոսը ոտքի ելավ՝ հայտնելով պատասխանը նրանց իրավիճակում: Նա լսել էր երկնքից: (Մենք ունենք Աստծո Խոսքը և ստացել ենք այն երկնքից: Այդ Խոսքն ավելի հաստատ չէր դառնա, եթե երկնքից հրեշտակ իջներ և իր մատով գրեր այն գրանիտե ժայռի վրա: Դա ավելի հաստատ չէր լինի, քան Աստծո գրված Խոսքը): Տեսնենք, թե ինչ ասաց Պողոսը.

ԳՈՐԾՔ 27.23-25

«Որովհետև այս գիշեր երևաց ինձ այն Աստծո հրեշտակը, որ ես Նրանն եմ, և Որին էլ պաշտում եմ:

Եվ ասաց. «Մի՛ վախեցիր, Պողո՛ս: Պետք է քեզ Կայսեր առջև կանգնես: Եվ ահա Աստված շնորհել է քեզ այդ բոլոր քեզ հետ նավողներին»:

Սրա համար սրտապի՛նդ կացեք, ո՛վ մարդիկ, որովհետև հավատում եմ Աստծուն, որ այսպես կլինի, ինչպես ինձ հետ խոսեց»:

Ինձ դուր է գալիս Պողոսը: Նա երեք դրական դավանություն արեց. «Ես Աստծունն եմ: Ես ծառայում եմ Աստծուն: Ես հավատում եմ Աստծուն»: Հենց սա բարձրացրեց նրան:

Եթե նա լիներ մարդկանց մեծամասնության պես,

նա տեղի կտար այդ ճգնաժամին, և թե՛ ինքը, թե՛ բոլոր մարդիկ կխորտակվեին: Քանի որ շատերը կասեին. «Այսքան տարի ես փորձում էի ծառայել Նրան: Տերը գիտի, որ ես փորձում էի ծառայել Նրան: Եթե Նա ինչ-որ կերպով չմիջամտի, բոլորս կկործանվենք»:

Եվ նրանք կկործանվեին: Ես չեմ ծաղրում: Ես պարզապես փաստեր եմ ներկայացնում: Հենց սա է պարտության մատնում մեզ:

Պողոսը չասաց. «Ես փորձում եմ ծառայել Նրան»: Նա ասաց. «Ես ծառայում (կամ՝ պաշտում) եմ Նրան... այն Աստված, որ ես Նրանն եմ... ես պատկանում եմ Նրան»:

Ինչ-որ մեկը կասի. «Հուսով եմ՝ սա վերաբերում է ինձ»:

Փա՛ռք Աստծուն, ես գիտեմ, որ սա վերաբերում է ինձ: Ես պատկանում եմ Նրան: Ես ծառայում եմ Նրան: Ես հավատում եմ Նրան:

ՄԱՍ IV

Գլուխ 8

ԻՆՉՊԻՍԻ՞ ՄԱՐԴ ԵՔ ԴՈՒՔ

«Առանց գայթակղություն տալու եղեք հրեաներին և հույներին և Աստծո եկեղեցուն»:

- Ա Կորնթացիների 10.32

Այս խոսքում ներկայացված է մարդկային ցեղի էթնիկական բաժանումը Աստծո կողմից. հրեաներ, հույներ և Աստծո Եկեղեցին: Հրեաները մշտապես հրեաներ են: Հույները ամբողջ հեթանոս աշխարհն են. յուրաքանչյուրը, ով Քրիստոսի մեջ չէ և հրեա չէ, հեթանոս է: Եկեղեցին՝ Քրիստոսի մարմինը, նոր ստեղծվածը, լիովին առանձնանում է այս երկուսից:

Պողոսը ներկայացնում է ևս մեկ բաժանում իր գրվածքներում. շնչավոր մարդ, մարմնավոր մարդ և հոգևոր մարդ:

Շնչավոր մարդը նա է, որը դեռ չի անցել մահից դեպի կյանքը: Նա վերստին չի ծնվել: Նա չի վերստեղծվել: Նա չի դարձել նոր ստեղծված Քրիստոսում:

Մարմնավոր մարդը նոր ստեղծվածն է: Նա վերստին ծնվել է, սակայն այդպես էլ չի աճել կամ զարգացել: Ցավալի է, բայց ճշմարիտ է, որ մարմնավոր մարդը կարող է մնալ այս վիճակում ամբողջ կյանքի ընթացքում: Նա կարող է այդպես էլ չհասունանալ նոր ստեղծվածի մանկական փուլից: Նրա կյանքում իշխում է մարմինը՝ նրա զգայարանները, ոչ թե նրա հոգին:

Հոգևոր մարդը նա է, ով հասունացել է աստվածային իրողությունների մեջ: Նրա հոգին վերահսկում է նրա մտավոր գործընթացները: Նրա հոգին վերահսկում է նրա մարմինը և զգայարանները: Աստված իշխում է նրա կյանքում Խոսքի միջոցով:

Ուսումնասիրենք այս տեսակի մարդկանց, որպեսզի տեսնենք, թե ինչպիսին ենք մենք, և ինչ կարող ենք անել յուրաքանչյուր իրավիճակում:

Գլուխ 9

ՇՆՉԱՎՈՐ ՄԱՐԴ

> *«Բայց շնչավոր մարդն Աստծո Հոգու բաները չի ընդունում, որովհետև դրանք հիմարություն են նրա համար, և չի էլ կարող գիտենալ, որովհետև հոգևոր կերպով են քննվում»:*
>
> - Ա Կորնթացիների 2.14

Մեկ այլ թարգմանության մեջ գրված է. «Որովհետև դրանք հոգևորապես են հասկացվում»: Եթե դուք հասկանայիք աստվածային և հոգևոր իրողությունները ձեր մտքով, շնչավոր մարդը նույնպես կկարողանար հասկանալ դրանք: Բայց դուք չեք հասկանում հոգևոր իրողությունները ձեր մտքով: Դուք քննում կամ հասկանում եք դրանք ձեր հոգով:

Շնչավոր մարդը՝ ոչ հոգևոր, նյութական մարդ է:

Նրա իմաստությունը երկրային է (այսինքն՝ բնական կամ շնչավոր): Հակոբոսն այսպես է նկարագրում այն.

ՀԱԿՈԲՈՍ 3.14,15

«Բայց եթե դառը նախանձ և հակառակություն ունեք ձեր սրտերում, մի՛ պարծեցեք և սուտ մի՛ ասեք ճշմարտության դեմ:

Այս իմաստությունը վերևից իջած չէ, այլ երկրավոր է, շնչավոր և դիվական»:

Շնչավոր մարդն առաջնորդվում է դևերի կողմից: Նա ղեկավարվում է սատանայի կողմից: Ո՛չ, ես նկատի չունեմ, որ նա դիվահարված է: Սատանան վերստին չծնված մարդկանց աստվածն ու հայրն է: Նրանք գտնվում են խավարի թագավորության մեջ և շատ թե քիչ ղեկավարվում են սատանայի և դևերի կողմից: Հիշե՛ք Եփեսացիների 6.12-ը. *«Այս աշխարհի խավար աշխարհակալները»:* Այսպիսով, շնչավոր մարդը ղեկավարվում է սատանայի կողմից:

ՀՌՈՄԵԱՑԻՆԵՐԻ 8.7-9

«Որովհետև մարմնի խորհուրդը Աստծո դեմ թշնամություն է, որովհետև Աստծո օրենքին չի հնազանդվում և չի էլ կարող:

Եվ նրանք, որ մարմնով են, չեն կարող Աստծուն հաճո լինել (շնչավոր մարդը չի կարող հաճեցնել Աստծուն):

Բայց դուք մարմնով չեք, այլ՝ հոգով, եթե Աստծո Հոգին ձեզանում բնակված է»:

Շնչավոր մարդն առաջնորդվում է իր զգայարաններով, այսինքն՝ իր մարմնի կողմից, ոչ թե հոգու:

(Տարիներ առաջ ես պարզեցի, որ ավելի լավ եմ հասկանում Հռոմեացիների թուղթը, երբ փոխարինում եմ «մարմին» բառը «զգայարաններ»-ով կամ «մարմնի զգայարաններ»-ով: Չէ՞ որ մարմինը կարող է դրսևորվել միայն իր զգայարաններով: Դուք կհասկանաք շատ ավելին, եթե անեք նույնը):

Հայտնված գիտելիքի և շնչավոր մարդկային գիտելիքի հակադրությունը

Շնչավոր մարդը չի ընդունում Աստծո Հոգու իրողությունները, քանի որ չի կարող հասկանալ դրանք: Բանն այն է, որ շնչավոր մարդը գիտելիք է ստանում միայն իր հինգ զգայարանների՝ տեսողության, լսողության, համի, հոտառության և շոշափելիքի միջոցով: Նրա միտքն առաջնորդվում է նրա զգայարաններով: Ես անվանում եմ դա *շնչավոր մարդկային գիտելիք:* Այլ մարդիկ անվանում են դա *զգայարաններով ստացված գիտելիք:* Սա հաջող տերմին է: Այդ գիտելիքը ստացվում է հինգ զգայարանների միջոցով: Շնչավոր մարդն ունի միայն զգայարաններով ստացվող կամ շնչավոր գիտելիք:

Ինչ վերաբերում է վերստին ծնված հավատացյալներին, նրանք ունեն գիտելիք, որը վեր է մարմնից, վեր է զգայարաններից: Այն կարող է իրավամբ

կոչվել *հայտնված գիտելիք:* Այս գիտելիքը հայտնվում է մեզ Աստծո Խոսքում: Այն վեր է այս աշխարհի իրականությունից: Աստվածաշունչը հայտնություն է տալիս ձեզ, այսինքն՝ հայտնում է այնպիսի գիտելիք, որը ձեր մարմնի զգայարանները չեն կարող ընկալել: Դուք չեք կարող հասկանալ հայտնված գիտելիքը ձեր մարմնի զգայարաններով նույնիսկ այն ստանալուց հետո: Բայց փա՛ռք Աստծուն, դուք ունեք այն:

Անչափ կարևոր է, որ յուրաքանչյուր հավատացյալ հասկանա տարբերությունը շնչավոր մարդկային գիտելիքի (կամ զգայարաններով ստացված գիտելիքի) և հայտնված գիտելիքի միջև:

Բազմաթիվ ժամանակակից աստվածաբաններ չունեն հայտնված գիտելիք. նրանք ունեն միայն զգայարաններով ստացված գիտելիք: Եկեղեցական առաջնորդների մեծ մասը տիրապետում է միայն զգայարաններով ստացված գիտելիքի: Եթե նրանք փրկված են, նրանք հոգևորապես զարգացած չեն: Իսկ շատերը նույնիսկ փրկված էլ չեն, այլ պարզապես շնչավոր մարդիկ են: Նրանք առաջնորդվում են իրենց մարմնի զգայարաններով: Այդ պատճառով մերժում են հայտնված գիտելիքը կամ երկրորդական են համարում այն իրենց կյանքում:

Շնչավոր մարդը չի կարող հասկանալ *«Աստծո Հոգու բաները»:* Դրանք հիմարություն են նրա համար: Աստվածաշունչն Աստծո Հոգուց է: Այն

շնչավոր մարդու գիտելիք չէ: Այն գրեցին հնում ապրող Աստծո մարդիկ՝ Սուրբ Հոգուց շարժված:

- Եղբա՛յր Հեգին, դա այնպիսի թարմություն պարգևեց ինձ, - ասաց մի երիտասարդ: - Ես սովորում եմ համալսարանում, և իմ պրոֆեսորն Աստվածաշնչի վերաբերյալ ասաց հետևյալը. «Եթե չես կարող հասկանալ և տրամաբանել Աստվածաշունչը, անտեսի՛ր այն»:

Դուք կարո՞ղ եք հասկանալ և տրամաբանել Աստծուն: Այդ դեպքում, անտեսե՛ք Նրան՝ համաձայն այդ պրոֆեսորի խորհրդի: Կարո՞ղ եք ձեր սահմանափակ ուղեղով հասկանալ և տրամաբանել Հիսուսին՝ Աստծո Որդուն: Կարո՞ղ եք հասկանալ Նրա ծնունդը կույսից (այդ պրոֆեսորն ասել էր. «Կուսական ծնունդը տրամաբանական չէ: Նման բան տեղի չի ունեցել»): Կարո՞ղ եք հասկանալ և տրամաբանել Սուրբ Հոգուն: Կարո՞ղ եք հասկանալ և տրամաբանել աստվածային բժշկությունը: Կարո՞ղ եք հասկանալ և տրամաբանել գերբնական իրողությունները: Ո՛չ:

«Եթե Աստվածաշունչը տրամաբանական չէ, - ասում է այդ պրոֆեսորը, - անտեսի՛ր այն»: Դա միայն հաստատում է իմ խոսքերը: Նա առաջնորդվում է իր զգայարաններով:

Դուք միշտ կարող եք ճանաչել այսպիսի մարդկանց. «Ողջամտությունն ասում է մեզ, որ...»: Ես գիտեմ դա, բայց որտե՞ղ եք կարդացել Աստվածաշն-

չում, որ մենք պետք է ողջամտությամբ վարվենք: Ո՛չ մի տեղ: Գրված է, որ մենք պետք է վարվենք հավատքով, ոչ թե երևույթով (Բ Կորնթ. 5.7): Գրված է. *«Որովհետև, որոնք որ Աստծո Հոգով են վարվում, նրանք Աստծո որդիներ են»* (Հռոմ. 8.14):

Շնչավոր մարդը չի կարող հասկանալ Աստվածաշունչը, քանի որ այն Աստծո Հոգուց է: Այն գտնվում է մի տիրույթում, որի մասին նա ոչինչ չգիտի: Ինչ-որ մեկն ասել է. «Մարդն անարգում է այն, ինչի մասին տեղյակ չէ»: Շատերն են անարգում շատ բաներ անտեղյակության պատճառով: Եթե մարդը շնչավոր է և վերստին ծնված չէ, նա տեղյակ չէ հոգևոր իրողություններից: Նա ոչինչ չգիտի դրանց մասին և այդ պատճառով անարգում է դրանք:

Շնչավոր ընթացքը

ԵՓԵՍԱՑԻՆԵՐԻ 2.1-3

«Եվ դուք, որ մեռած էիք հանցանքներում և մեղքերում,

որոնցում մի ժամանակ գնում էիք այս աշխարհի սովորության պես՝ օդի իշխանության իշխանի պես, այն հոգու պես, որ հիմա ներգործում է ապստամբության որդիների մեջ,

որոնց մեջ մենք ամենքս էլ մի ժամանակ ման էինք գալիս մեր մարմնի ցանկություններում՝ մարմնի և մտքի կամքը կատարելով, և բնությամբ բարկության որդիներ էինք, ինչպես ուրիշներն էլ»:

Այս հատվածը պատկերում է շնչավոր մարդու ընթացքը: Նա վարվում է *«այս աշխարհի սովորության պես»:* Նա վարվում է *«օդի իշխանության իշխանի պես»,* այսինքն՝ սատանայի: Նա առաջնորդվում է *«այն հոգու պես, որ հիմա ներգործում է ապստամբության որդիների մեջ»:* Նա կատարում է իր *«մարմնի»* կամ զգայարանների *«ցանկությունները»:* Նա *«բնությամբ բարկության որդի»* է:

Այս պնդումները խիստ են, բայց նկարագրում են մարդուն՝ առանց Քրիստոսի: Ուշադրություն դարձրեք նույն գլխի 11,12 խոսքերին.

> **ԵՓԵՍԱՑԻՆԵՐԻ 2.11,12**
>
> «Ուստի հիշե՛ք, որ դուք մի ժամանակ հեթանոսներ՝ մարմնով, որ անթլփատություն են կոչված՝ մարմնի մեջ ձեռքով արած թլփատության կողմից,
>
> որ այն ժամանակ առանց Քրիստոսի էիք և հեռացած Իսրայելի քաղաքակցությունից և օտարացած խոստման ուխտերից, հույս չունեիք և անաստված էիք աշխարհում:

Աստվածաշնչի անգլերեն «Ամերիկյան ստանդարտ թարգմանության» մեջ 12-րդ խոսքն այսպիսին է. *«Որ դուք այդ ժամանակ առանձնացած էիք Քրիստոսից, հեռու էիք Իսրայելի քաղաքակցությունից և օտար էիք խոստման ուխտերին, չունեիք հույս և առանց Աստծո էիք այս աշխարհում»:*

Դա մեր փրկվելուց առաջ էր: Այսպիսին է յուրաքանչյուրը, ով ներկայումս փրկված չէ: Այսօր, ինչպես և այն ժամանակ, հեթանոսները չեն կարող հավակնել Աստծուն: Լինելով հեթանոս, նրանք չունեն իրավաբանական դիրք և իրավունքներ: Բայց փա՛ռք Աստծուն, որ յուրաքանչյուր հեթանոս կարող է վերստին ծնվել և դառնալ Քրիստոսի մարմնի անդամը: Այդ դեպքում նա կստանա և՛ դիրք, և՛ իրավունքներ:

Ա ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻ 1.28

«Եվ աշխարհի անտոհմներին և անարգվածներին Աստված ընտրեց, և ոչինչներին, որ մի բան լինողներին ոչնչացնի:

Այստեղ Աստծո Խոսքը նկատի ունի մեզ, երբ Նա ընտրեց մեզ Քրիստոսում: Նա անվանում է մեզ *«աշխարհի անտոհմներ»:* Նա անվանում է մեզ *«անարգվածներ» և «ոչինչներ»»:*

Նոր կտակարանի անգլերեն *«Հարյուրամյակի թարգմանությունը»* հայտնում է, որ *«ոչինչներ»*-ը Հռոմեական կայսրության ստրուկներն էին: Նրանք չունեին ո՛չ դիրք, ո՛չ ձայն: Նրանք ընդամենը առարկա էին կամ, այսպես ասած, ոչինչ էին: Բայց երբ քրիստոնյա դարձան, նրանք ստացան դիրք Աստծո առջև:

Առաջին Պետրոս 2.10-ում գրված է. *«Որ դուք ժամանակով ժողովուրդ չէիք, բայց հիմա Աստծո ժողովուրդ եք»:* Հեթանոսը չունի դիրք: Նա «ժողովուրդ չէ»: Որքան

էլ նա պարծենա իր մշակույթով, կարողություններով և փողով, նա չունի ձայն և դիրք Աստծո առջև: Պատկերելով բացարձակ հոգևոր ստրկություն՝ Եփեսացիներին 2.12-ը նկարագրում է նրան՝ ասելով, որ նա առանց հույսի է՝ անհույս, և առանց Աստծո է՝ անաստված: *Անհույս և անաստված:*

ԵՓԵՍԱՑԻՆԵՐԻ 4.17,18

«Արդ սա եմ ասում և վկայում Տիրոջով, որ դուք այլևս չգնաք ինչպես ուրիշ հեթանոսներն են գնում՝ իրենց մտքի ունայնությամբ,

որ խավարած են մտքով և օտար Աստծո կյանքից այն տգիտության պատճառով, որ նրանցում է՝ իրենց սրտերի կուրության համար»:

Նրանք վարվում են զգայարանների միջոցով ստացած ունայն գիտելիքով: Նրանք վարվում են իրենց մտքի ունայնությամբ: Նրանց միտքը խավարած է: Նրանք օտարացած են Աստծո կյանքից: Նրանք լցված են իրենց իսկ գիտելիքով և անտեղյակ են հոգևոր իրողություններից:

Այո՛, նրանք այսպիսին են:

Բայց գոհությո՛ւն Աստծուն, կա ճանապարհ: Կա ելք: Կա ճանապարհ դեպի Աստված: Հիսուսն ասաց. «Ես եմ ճանապարհը: Ես եմ ճշմարտությունը: Ես եմ կյանքը»:

Գլուխ 10

ՄԱՐՄՆԱՎՈՐ ՄԱՐԴ

«Եվ ես, եղբայրնե՛ր, չկարողացա ձեզ հետ խոսել ինչպես հոգևորների հետ, այլ ինչպես մարմնավորների հետ, ինչպես մանուկների հետ Քրիստոսում: Կաթ խմեցրի ձեզ, և ոչ թե կերակուր, որովհետև տակավին չէիք կարող, այլ հիմա էլ դեռ չեք կարող: Որովհետև տակավին մարմնավոր եք, քանի որ տակավին նախանձ և կռիվ և բաժանումներ կան ձեզանում. չէ՞ որ մարմնավոր եք և մարդկորեն եք վարվում»:

- Ա Կորնթացիների 3.1-3

Ո՞վ է մարմնավոր մարդը: Նա, ով մանուկ է Քրիստոսում, բայց ոչ՝ նորածին մանուկ: Երբ Պողոսը գրում էր Կորնթոսի եկեղեցու հավատացյալներին,

նրանք նորահավատներ չէին: Նա հստակ նշում է, որ նրանք պետք է շատ ավելի առաջ գնացած լինեին իրենց հոգևոր զարգացման մեջ: Թվում է՝ նրանք գրեթե նույն վիճակում էին, ինչ հրեա քրիստոնյաները (տե՛ս Եբր. 5.12):

Կորնթացիներին ուղղված Պողոսի նամակը գրված է վերստին ծնված, Հոգով լցված հավատացյալներին, նույնիսկ այնպիսի եկեղեցու, որտեղ գործում էին Հոգու բոլոր պարգևները: Նա ասաց նրանց. *«Որ դուք չպակասվեք ոչ մի շնորհքով»* (կամ՝ *«դուք չունեք ոչ մի պարգևի պակասություն»*): Նա մի փոքր պարծեցավ նրանցով, մինչև խրատելը (տե՛ս Ա Կորնթ. 1.7): Նա հատուկ նշեց, որ նրանք հարուստ էին խոսքով՝ նկատի ունենալով խոսքային պարգևները (տե՛ս Ա Կորնթ. 1.5): Դուք կարող եք համոզվել սրանում՝ տեսնելով, թե ինչի մեջ նա սկսեց շտկել նրանց: Այդ եկեղեցում բոլորը միաժամանակ փորձում էին խոսել լեզուներով:

Այնպես որ, մենք կարող ենք մի հետևություն անել, որը կօգնի մեզ ճիշտ մտածել և հոգևորապես աճել: Հոգևոր պարգևներ ունենալը չի նշանակում, որ դուք հոգևորապես հասուն քրիստոնյա եք: Հաճախ մարդիկ չգիտեն, թե ինչ է նշանակում հոգևոր լինելը: Ոմանք մտածում են, որ հոգևոր լինելը նշանակում է որևէ հոգևոր պարգև ունենալ: Դա ճիշտ չէ, քանի որ այս թղթում հստակ նշվում է, որ կորնթացիները մարմ-

նավոր էին և մանուկներ էին, սակայն նրանց եկեղեցում գործում էին բոլոր հոգևոր պարգևները:

Երբ մարդիկ մարմնավոր են համարում որևէ քրիստոնյայի, ով խոսում է լեզուներով, թարգմանում է և մարգարեանում է, նրանք ասում են. «Դա չի կարող Տիրոջից լինել»:

- Ինչո՞ւ, - հարցնում եմ ես:

- Որովհետև նա մարմնավոր է, - պատասխանում են նրանք:

- Ուզում եք ասել, որ մարմնավոր քրիստոնյաները չունե՞ն Սուրբ Հոգուն:

- Ո՛չ:

- Դա ճիշտ չէ, քանի որ դուք ունեք Նրան: Եվ Կորնթոսի եկեղեցին՝ նույնպես:

Արդյո՞ք մարմնավոր քրիստոնյաներն ունեն Սուրբ Հոգուն: Իհա՛րկե:

«Արդյո՞ք մարմնավոր քրիստոնյաները փրկված են»: Տարիներ առաջ ինչ-որ մեկն ուղարկեց այս հարցը մեր Ամբողջ Ավետարանի ամսագրերից մեկի խմբագրություն: Իմ կարծիքով, նրանց պատասխանը հնարամիտ էր. «Այնպիսի տպավորություն է, որ Պողոսն այդպես էր կարծում»: Եվ նրանք մեջբերեցին այս գլխի սկզբում գտնվող աստվածաշնչյան հատվածը:

Իրականում, այն հունարեն բառը, որը թարգ-

մանվել է «մարմնավոր» բառով, առիթ է դարձել բազմաթիվ մեկնաբանությունների և մեծ շփոթության աստվածաբանների շրջանակում: Կարծում եմ՝ Աստծո Հոգին միայն վերջերս է բացել այս բառը մեզ համար: Իրականում, խոսքն այնպիսի մարդու մասին է, որն առաջնորդվում է իր մարմնի զգայարաններով, որի կյանքում իշխում է մարմինը: Թեև նա վերստին ծնված է և նոր ստեղծված է, նա վարվում է շնչավոր մարդու պես:

Վարվել հասարակ մարդու պես

Կրկին կարդացե՛ք Պողոսի խոսքերը. *«Եվ ես, եղբայրնե՛ր, չկարողացա ձեզ հետ խոսել ինչպես հոգևորների* (հոգևոր մարդկանց) *հետ, այլ ինչպես մարմնավորների հետ, ինչպես մանուկների հետ Քրիստոսում... Որովհետև տակավին մարմնավոր եք, քանի որ տակավին նախանձ և կռիվ և բաժանումներ կան ձեզանում. չէ՞ որ մարմնավոր եք* (ՎԵՐՁԱՊԵՍ ՀԱՍԿԱՑԵՔ ՍԱ) *և մարդկորեն եք վարվում»:* Մի քանի ժամանակակից թարգմանությունների մեջ գրված է. «և հասարակ մարդկանց պես եք վարվում»:

Պողոսը հիշատակում է նախանձը և այլ բաները, որոնց մասին գրում է նաև Հակոբոսը՝ խոսելով վերստին չծնված շնչավոր մարդու մասին: Պողոսը, ըստ էության, ասում է. «Թեև դուք վերստին ծնված եք, դուք դեռ վարվում եք հասարակ մարդկանց պես, սովորա-

կան մարդկանց պես, վերստին չծնված շնչավոր մարդկանց պես: Դուք վարվում եք ճիշտ այնպես, ինչպես այս աշխարհի մարդիկ, քանի որ նրանց մեջ նախանձ և կռիվներ կան: Դուք թույլ եք տալիս, որ ձեր մարմինն իշխի ձեզ»:

Ժամանակակից թարգմանություններից մեկում *«մարմնավոր եք»* բառերի փոխարեն գրված է «դուք առաջնորդվում եք ձեր մարմնով»: Սա հաջող թարգմանություն է: Իշխում է դրսի մարդը՝ մարմինը, որը դեռ փրկագնված չէ (և գոհությո՛ւն Աստծուն, որ մեկ օր մենք նոր մարմին ենք ունենալու), փոխարենը իշխի և տիրի ներսի մարդը, որը նոր ստեղծված է Քրիստոս Հիսուսում, և որում բնակվում է Սուրբ Հոգին: Չափազանց հաճախ քրիստոնյաների կյանքում դրսի մարդն իշխում է ներսի մարդուն: Քանի դեռ այդպես է, նրանք մարմնավոր մարդիկ և մանուկներ կլինեն: Նրանք կվարվեն՝ ինչպես այս աշխարհի մարդիկ, որոնք առանց Քրիստոսի են:

Կարելի է հանդիպել այդպիսի մանուկ քրիստոնյաների, որոնք այդպես էլ հոգևորապես չեն աճել, և զարմանքով նկատել, որ նրանք խիստ հոգևոր են համարում իրենց, այնինչ նրանք առաջնորդվում են իրենց մարմնով կամ զգայարաններով:

Մեկ անգամ ես քարոզում էի մի եկեղեցում, որը մինչև Սուրբ Հոգու մկրտությունն ընդունելը և Ամբողջ Ավետարանի եկեղեցի դառնալը, այսպես կոչված,

«ավանդական սրբության շարժման» հետևորդ էր: Այդ եկեղեցու անդամներից ոմանք գրեթե մտածում էին, որ լողանալը մեղք է: Մի մարդ ասաց ինձ, որ հոտազերծիչ օգտագործելը մեղք է: Եվս մեկը մտածում էր, որ մեղք է գազավորված ըմպելիքներ խմելը:

Այդ եկեղեցին փոքր չէր: Կիրակնօրյա հավաքույթին, որին ես քարոզում էի, ներկա էր ավելի քան 500 մարդ, և Տերն օծեց ինձ՝ տալով մի ուղերձ, որը միայն նրանց համար էր: Ես երբեք չեմ քարոզել այն դրանից հետո: Ու թեև այդ ժամանակ ես ծանրաբարո էի՝ շատ ավելի, քան հիմա, ցատկելով իջա ամբիոնի մոտից և սկսեցի վազել շենքի կողմնային հատվածներով և քարոզել. «Մարդիկ խոսում են աշխարհիկության մասին: Սա ամենաաշխարհիկ եկեղեցին է, որտեղ ես երբևէ քարոզել եմ»:

Նրանք այնպես նայեցին ինձ:

Ես ասացի նրանց, թե ինչ է աշխարհիկությունը և մարմնավորությունը: Կարդացի Պողոսի խոսքերը կորնթացիների մասին՝ այն, որ նրանց միջև նախանձ, կռիվներ և բաժանումներ կային: Ես ասացի. «Ես մտածում էի, որ Պողոսը գրել է այս նամակն այս եկեղեցուն, բայց հանկարծ նայեցի վերնագրին և նկատեցի «Կորնթացիներին» բառը»:

Նրանցից ոմանք այնպե՜ս բարկացան, որ պատրաստ էին կռվել ինձ հետ (դա ապացուցում էր, որ

նրանք մարմնավոր էին, այնպես չէ՞): Բայց այդ խոսքն օգնեց մյուսներին:

Մարմնավոր քրիստոնյաները չեն սովորել ո՛չ սիրո օրենքը, ո՛չ էլ սիրո ընթացքը: Երբ մարդիկ սիրում են միմյանց, նրանց միջև նախանձ, կռիվներ և բաժանումներ չկան: Կորնթացիները վերստին ծնված էին, լցված էին Սուրբ Հոգով և ունեին Հոգու պարգևները, սակայն նրանք չէին սովորել ո՛չ սիրո օրենքը, ո՛չ էլ սիրո ընթացքը: Դուք սովորում եք դա, երբ հոգևոր մարդ եք դառնում: Երբ սկսում ենք վարվել աստվածային սիրով, քրիստոնեական սիրով, աստվածաշնչյան սիրով, Աստծո սիրով, մենք դադարում ենք նախանձել. մենք դադարում ենք կռիվները, բաժանումները և չարախոսությունը:

Չարախոսությունը, դառնությունը և նախանձը հավատացյալի ոչ բավարար զարգացման նշան են: Ի՞նչն է այս ամենի պատճառը: Այն, որ մարդիկ եսասեր են: Քանի դեռ դուք եսասեր եք, զգայուն եք և կարող եք վիրավորվել, դուք մանուկ եք Քրիստոսում և չեք կարող աճել:

Աճել մարմնավոր վիճակից

Աստված ցանկանում է, որ մենք աճենք: Մարմնավոր վիճակից դուրս գալու միակ միջոցը աճելն է: Պետրոսն ասաց. *«Ցանկացե՛ք այն բանավոր* (կամ՝ Խոսքի) *անխարդախ կաթին, որ նրանով աճեք»:*

Պողոսն ասաց. «Ես կաթ խմեցրի ձեզ»: Պողոսը փորձում էր օգնել կորնթացիներին աճել: Նա չէր ասում նրանց, որ իրենք փրկված չէին: Ոմանց մոտ սա կարող է խիստ զարմանք առաջացնել, սակայն եթե այդպես է, նրանք պետք է զարմանան:

Երրորդ գլխի վերջում Պողոսն ասաց նրանց. *«Ուրեմն, ոչ ոք չպարծենա մարդկանցով, որովհետև ամեն բան ձերն է՝ թե՛ Պողոսը, թե՛ Ապողոսը, թե՛ Կեփասը, թե՛ աշխարհը, թե՛ կյանքը, թե՛ մահը, թե՛ ներկա բաները, թե՛ գալու բաները, ամեն բան ձերն է, դուք՝ Քրիստոսինը, և Քրիստոսը՝ Աստծունը»* (Ա Կորնթ. 3.21-23):

Ես այնքա՛ն ուրախ եմ Սուրբ Հոգու և Աստծո Խոսքի համար: Ես այնքա՛ն ուրախ եմ, որ Տերը համբերատար է եղել բոլորիս հանդեպ, և որ Նա օգնում է մեզ:

1951 թվականի մարտի սկզբին ես Ալաբամա նահանգում էի, որտեղ մի հավաքույթ էի անցկացնում: Ես աղոթում էի լեզուներով՝ Հոգով (տե՛ս Ա Կորնթ. 14.14):

(Սատանան և շնչավոր մարդիկ, իսկ երբեմն նույնիսկ որոշ մարմնավոր մարդիկ չեն սիրում լեզուներով աղոթքը: Բայց այն կօգնի ձեզ, փա՛ռք Աստծուն: Մեծ մասամբ այն ամենը, ինչ ես գիտեմ Աստվածաշնչից, սովորել եմ՝ լեզուներով աղոթելով: Ի՞նչ նկատի ունեմ: Հոգին պետք է լինի ձեր Ուսուցիչը: Եթե դուք բավականաչափ ժամանակ եք հատկաց-

նում լեզուներով աղոթքին, դուք հանդարտեցնում եք ձեր մարմինը և միտքը, միաժամանակ գործուն դարձնելով ձեր հոգին: Դուք խոսում եք ձեր հոգուց: Այդ ժամանակ Աստված կարողանում է հաղորդակցվել ձեր հոգու հետ, քանի որ ձեր հոգին զգայուն է դառնում Նրա հանդեպ, որովհետև Նա Հոգի է):

Այդ օրը ես աղոթեցի լեզուներով գրեթե երեք ժամ: Սակայն ինձ թվաց, թե մոտավորապես 15 րոպե էր անցել: Երբ նայեցի իմ ժամացույցին, հավատս չէր գալիս, որ ժամանակն այդքան արագ էր անցել: Ամբողջ աղոթքի ընթացքում աչքերս փակ էին:

Այդ աղոթքի ընթացքում Տերն անցկացրեց ինձ Ա Կորնթացիների թղթի առաջին երեք գլուխներով, և դա փոխեց ինձ: Դա փոխեց իմ ծառայության ընթացքը: Դա փոխեց իմ կյանքի ընթացքը: Դա դարձրեց ինձ ավելի մեծ օրհնություն Եկեղեցու համար: Դա թույլ տվեց ինձ անել ավելին, քան ես արել էի մինչ այդ: Դա օգնեց ինձ աճել:

Նա անցկացրեց ինձ առաջին գլխով, որում Պողոսը մի փոքր պարծեցավ նրանց մասին, իսկ հետո ասաց, որ նրանք մանուկ էին և մարմնավոր էին:

Նա ասաց ինձ. «Եթե այդ մարդկանց գրեիր դու կամ որոշ քարոզիչներ, ում ճանաչում ես, դուք կասեիք. «Նահանջած անպիտաննե՛ր, դուք պետք է աղոթեք և հաշտվեք Աստծո հետ»:

Հավանաբար, մինչ այդ պահը ես հենց այդպես էլ կվարվեի:

Նա ասաց. «Բայց Պողոսն անպիտաններ չանվանեց նրանց: Պողոսը նահանջած չանվանեց նրանց: Այո, նա ասաց, որ նրանք մարմնավոր էին և մանուկ էին: Երբ երեխան լաց է լինում, նրա գլխին հարվածելը չի օգնի նրան մեծանալ: Նա կմեծանա, եթե նրան կերակրեն՝ եթե նրան ինչ-որ բան տան, ոչ թե ինչ-որ բան խլեն նրանից: Ոչինչ մի՛ խլիր մարդկանցից. փոխարենը, ինչ-որ բա՛ն տուր նրանց»:

«Դու հիշո՞ւմ ես Ձեյ Դաբլյուին», - հարցրեց Նա:

Ես չէի հիշում նրան:

«Դու հիշո՞ւմ ես Թաֆիին», - ասաց Նա:

Մենք այդպես էինք անվանում նրան՝ Թաֆի[1]: Դա դեռ մեղմ էր ասված: Այդ բառը չէր կարող լիովին նկարագրել նրան: Բայց նույնիսկ երբ Նա ասաց դա, ես, միևնույն է, չհիշեցի այդ տղային, քանի որ այնքա՛ն տարիներ էին անցել:

Այդ ժամանակ Նա ասաց ինձ այդ տղայի ամբողջական անունը: Եվ երբ ասաց նրա ազգանունը, ես ասացի. «Այո՛, ես հիշեցի նրան»:

Այդ օրը Տերը թարմացրեց իմ հիշողությունը, և դա թույլ տվեց ինձ օգնել ուրիշներին:

Թաֆիի մայրը մահացել էր, երբ նա փոքր երեխա էր: Նրա հայրը մեքենավար էր. նա աշխատում էր

[1] Մականուն, որը նշանակում է «կռվարար» կամ «կոպիտ»:

Տեխաս նահանգի Վակո-Դենիսոն հին միջքաղաքային գծի վրա և հազվադեպ էր տանը լինում: Այնպես որ, Թաֆին անուշադրության էր մատնված: Նա սկսեց թրև գալ նրբանցքներով և վատ ընկերներ ձեռք բերեց:

Երբ ես հինգերորդ դասարանում էի, նա նույնպես հինգերորդ դասարանում էր, թեև պետք է լիներ ութերորդում: Նա երկուսներ էր ստանում բոլոր առարկաներից: Այդ ժամանակ երկուսը ամենացածր գնահատականն էր, որը կարող էին նշանակել: Նա խնդիրներ ուներ, և ես թաքուն լսեցի, թե ինչպես էր մեր դպրոցի տնօրենը պատմում այդ մասին իմ պապին:

- Ի՞նչ ենք անելու Թաֆիի հետ, - ասաց նա: - Դատավորը կրկին զանգեց ինձ: Նա ուզում է ուղղիչ դպրոց ուղարկել նրան: Նա մեղմ է վերաբերվել նրան միայն այն պատճառով, որ նա մայր չունի:

Ես լսեցի պապիս պատասխանը.

- Պարո՛ն Մակ, եթե անես այն, ինչ ես եմ առաջարկում քեզ, մենք մարդ կդարձնենք նրան: Մենք օգտակար քաղաքացի կդարձնենք նրան:

- Դատավորը թողնում է այս գործն իմ հայեցողությանը ևս 30 օր, - ասաց տնօրենը:

- Ասա՛ նրան, որ տա քեզ 90 օր, - ասաց պապս:

Տնօրենը համաձայնեց զանգել և խնդրել 90 օրվա համար:

- Դու նկատե՞լ ես, որ նա չի հեռանում իմ մոտից,

- հարցրեց պապս: - Նա արդեն գրեթե մշտապես ինձ հետ է:

- Այո՛, ես նկատել եմ դա, - պատասխանեց պարոն Մակը:

- Պատճառն այն է, որ ես միակն եմ, ով ինչ-որ բան է տալիս նրան: Ես ասում եմ նրան, որ վստահում եմ իրեն, որ հավատում եմ իրեն: Ես ասում եմ նրան, որ հավատում եմ իր ուժերին: Բոլորն ասում են նրան, որ ինքն անպետք է: Բոլորն ասում են նրան. «Դու կփչացնես դպրոցը»: Բոլորն ասում են նրան, որ իր մոտ ոչինչ չի ստացվի: Նա արդեն նույնիսկ խաղահրապարակ չի գնում: Նա ուղղակի ինձ մոտ է մնում: Այնպես որ, առաջին հերթին, այլևս մի՛ մտրակիր նրան:

Պարոն Մակը մտրակում էր նրան օրը մեկից երեք անգամ՝ ամեն օր: Հասկանալի է, որ երբեմն երեխաներին իսկապես պետք է մտրակել, բայց այլ դեպքերում դա լիովին անիմաստ է: Մտրակի ձայնը լսվում էր ամբողջ հարկում, սակայն Թաֆին ծիծաղելով դասասենյակ էր վերադառնում:

Պապս ասաց տնօրենին.

- Ես թաքնվել էի քո աշխատասենյակի զուգարանում և տեսա, որ հենց նա՛ գողացավ փողը քո գրասեղանի դարակից:

Դպրոցը քաղցրավենիք էր վաճառում ճաշի ժամին և

օգտագործում էր շահույթը՝ խաղահրապարակի սարքավորանք գնելու համար: Ինչ-որ մեկը գողանում էր այդ փողը: Պապս թաքնվել էր՝ տեսնելու համար, թե ով էր դա անում: Եվ այդ անձնավորությունը Թաֆին էր:

- Սկսի՛ր վստահություն ներշնչել նրան, - ասաց նա: - Կանչի՛ր նրան դասաժամի ընթացքում և ասա. «Ձեյ Դաբլյո՛ւ, ինձ պետք է մյուսներից տարիքով ավելի մեծ մի աշակերտ՝ իմ աշխատասենյակը հսկելու համար: Ինչ-որ մեկը փող է գողանում այստեղից»: Տար նրան այնտեղ, որտեղ դու պահում ես փողը, և ցույց տուր նրան: Եվ եթե թեկուզ մեկ սենթ պակասի, ես ինքս կհատուցեմ դա:

Այս խոսակցությունը կեսօրին էր, և դրանից հետո մենք շարունակեցինք մեր դասերը: Դասաժամը սկսվել էր, երբ պարոն Մակը բացեց մեր դասարանի դուռը և դուրս կանչեց Թաֆիին: Երեխաները քմծիծաղ տվեցին: Նրանք գիտեին, որ նա պատժվելու էր: Բոլորը սպասում էին՝ մտրակի ձայները լսելու համար: Բայց Թաֆին չվերադարձավ: Նրանք զարմացան: Ես լավ գիտեի, թե ինչ էր կատարվում:

Պարոն Մակն ասել էր նրան.

- Ձեյ Դաբլյո՛ւ, ուզում եմ, որ հսկես իմ աշխատասենյակը: Մեզ պետք է տարիքով ավելի մեծ մի աշակերտ:

Նա բացել էր դարակը և ցույց էր տվել նրան փողը:

- Ահա փողը, և ինչ-որ մեկը գողանում է այն:

Իհա՛րկե, հենց նա էլ գողանում էր:

Տերը հիշեցրեց ինձ, թե ինչպես նա անմիջապես սկսեց անցողիկ գնահատականներ ստանալ: Իրականում, նա այնքան լավ էր սովորում, որ նրան սկսեցին տեղափոխել դասարաններով: Նա այդպես էլ չգնաց ուղղիչ դպրոց: Նա այդպես էլ չգնաց քրեակատարողական հիմնարկ: Նա մեծացավ և օգտակար քաղաքացի դարձավ:

Այդ օրը Տերը սովորեցրեց ինձ հոգևոր աճի մանկության, երեխայության և հասունության փուլերը:

Նա ասաց ինձ. «Հոգևոր աճն ինչ-որ իմաստով նման է բնական աճին: Պողոսը ոչինչ չվերցրեց այդ մարդկանցից: Նա զգուշորեն ուղղեց նրանց և ցույց տվեց, թե ինչում էին նրանք սխալ: Բայց նա չզրկեց նրանց այն ամենից, ինչ ունեին: Նա պարծեցավ նրանց ունեցածով: Եվ խրախուսելով նրանց՝ ցույց տվեց, որ կար ավելին. «Գնացե՛ք ընդառաջ: Վերցրե՛ք դա: Դա ձե՛րն է»»:

«Մի՛ հարվածիր քրիստոնյաների գլխին», - ասաց Նա:

Մի՛ հարվածեք ոչ ոքի գլխին: Կերակրե՛ք մարդկանց: Գտե՛ք այնպիսի բան, ինչով դուք կարող եք շահագրգռել նրանց: Մի՛ պայքարեք այլ եկեղեցիների և հավատացյալների դեմ:

«Ոչինչ մի՛ վերցրու ոչ ոքից, - ասաց Նա, - տո՛ւր մարդկանց ինչ-որ բան: Ավա՛նդ ունեցիր նրանց կյանքում»:

Այդ օրը փոխեց իմ ծառայությունը: Ես սկսեցի անել այն, ինչ Տերն ասաց, և ամեն ինչ ստացվեց:

Կրկին կարդանք, թե ինչ ասաց Պողոսը երրորդ գլխի վերջում. *«Ուրեմն, ոչ ոք չպարծենա մարդկանցով, որովհետև ամեն բան ձերն է...»:*

Պողո՛ս, մի՞թե ուզում ես ասել, որ ամեն ինչ պատկանում էր այդ մանուկ քրիստոնյաներին, այդ մարմնավոր քրիստոնյաներին, որոնք վարվում էին հասարակ մարդկանց պես:

Այո՛: Ամեն ինչ պատկանում էր նրանց: Միգուցե նրանք դեռ չէին հասկացել դա, բայց ամեն ինչ պատկանում էր նրանց: Միգուցե նրանք դեռ չէին հասունացել այն աստիճան, որ կարողանային գնահատել դա և օգուտ քաղել դրանից, բայց ամեն ինչ պատկանում էր նրանց:

«Թե՛ Պողոսը, թե՛ Ապողոսը, թե՛ Կեփասը, թե՛ աշխարհը, թե՛ կյանքը, թե՛ մահը, թե՛ ներկա բաները, թե՛ գալու բաները, ամեն բան ձերն է (նա ոչինչ չվերցրեց նրանցից, այլ ասաց՝ ամեն ինչ ձե՛րն է), *դուք՝ Քրիստոսինը, և Քրիստոսը՝ Աստծունը»* (Ա Կորնթ. 3.21-23):

Գլուխ 11

ՀՈԳԵՎՈՐ ՄԱՐԴ

«Եվ ես, եղբայրնե՛ր, չկարողացա ձեզ հետ խոսել՝ ինչպես հոգևորների հետ...»:

- Ա Կորնթացիների 3.1

Պողոսն ասում է. «Ես չկարողացա խոսել ձեզ հետ՝ ինչպես հոգևոր մարդկանց հետ»: Մի՞թե սա ողբերգություն չէ:

Ո՞վ է հոգևոր մարդը: Եվ ինչպիսի՞ հատկանիշներ նա ունի:

ԵՓԵՍԱՑԻՆԵՐԻ 1.3

«Օրհնյալ է Աստված և մեր Տեր Հիսուս Քրիստոսի Հայրը, որ մեզ օրհնեց ամեն հոգևոր օրհնությամբ երկնավոր բաներում Քրիստոսով»:

Հոգևոր մարդը նա է, ով գիտի, թե ինչ է պատկանում իրեն Քրիստոս Հիսուսում, և օգտվում է դրանից:

Հոգևոր մարդը կուշտ խմել է այդ աղբյուրից: Նա կանոնավոր սնվել է Տիրոջ սեղանից:

Հոգևոր մարդը հագեցած է սիրով՝ Աստծո սիրով:

Ճանաչել Հորը

Հոգևոր մարդն իրապես ճանաչել է Հորը:

Իմ կյանքում եկավ այնպիսի ժամանակ, երբ ես ճանաչում էի Տեր Հիսուսին, լցված էի Սուրբ Հոգով, տարիներ շարունակ քարոզել էի, և Սուրբ Հոգու տարբեր պարգևներ ժամանակ առ ժամանակ գործում էին իմ կյանքում: Այնուամենայնիվ, իմ ներսում ես գիտեի, որ Աստված կարող էր դառնալ ավելի իրական ինձ համար՝ որպես իմ Հայր, քան իմ հարազատ հայրը: Աստվածաշունչն ասում է, որ Նա իմ Հայրն է: Եվ իմ հոգում գիտեի, որ Նա կարող էր դառնալ ավելի իրական ինձ համար, քան իմ կինը կամ իմ երեխաներից յուրաքանչյուրը: Իմ սրտում ես գիտեի դա և բարձրաձայն դավանում էի, երբ մեքենայով գնում էի արթնության հավաքույթների, որ Աստված ինձ համար կարող է դառնալ ավելի իրական, քան այն մեքենան, որը վարում էի: Սակայն ես գիտեի, որ Նա այդ աստիճան իրական չէր ինձ համար:

Դա տեղի չունեցավ մեկ օրում: Դա տեղի չունեցավ մեկ ամսում: Դա տեղի չունեցավ մեկ տարում: Բայց ես շարունակում էի անել այն, ինչ Աստվածաշունչը պատվիրում է՝ հաղորդակցվել Հոր հետ Խոսքի և աղոթքի միջոցով: Եվ աստիճանաբար Նա ավելի ու ավելի իրական դարձավ ինձ համար:

Եվ մեկ օր ես կարողացա ասել. «Նա ավելի իրական է ինձ համար, քան իմ կինը: Ես ավելի լավ եմ ճանաչում Նրան, քան իմ կնոջը: Ես ունեմ ավելի սերտ անձնական շփում իմ Հայր Աստծո հետ, քան իմ կնոջ հետ: Նա ավելի իրական է ինձ համար, քան իմ երեխաները: Նա ավելի իրական է ինձ համար, քան այն մեքենան, որը ես վարում եմ» (անկեղծ ասած՝ շատերը չէ, որ կարող են այսպես ասել, քանի որ բնական բաներն ավելի իրական են նրանց համար, քան հոգևորները): Ես հասա այնպիսի վիճակի, որ իմ արթուն կյանքի ամեն ակնթարթին և նույնիսկ այն ժամանակ, երբ արթնանում էի գիշերը, ես գիտակցում էի Նրա ներկայությունն ավելի իրական, քան իմ կնոջ ներկայությունը:

Ճանաչել Որդուն

Հոգևոր մարդը ճանաչել է Տեր Հիսուս Քրիստոսին՝ այն մեծ ծառայությամբ, որը Նա կատարում է՝ նստած Հայր Աստծո աջ կողմը: Յուրաքանչյուր վերստին ծնված հավատացյալ ճանաչում է Տեր

Հիսուս Քրիստոսին՝ որպես Փրկչի: Այնուամենայնիվ, դուք չեք ունենա հոգևոր աճ՝ միայն վերստին ծնվելով: Եվ դուք չեք հասունանա մանկության վիճակից՝ միայն ճանաչելով Նրան որպես Փրկչի: Հոգևոր աճի համար հավատացյալը պետք է իմանա, թե ով է ինքը Քրիստոսի մեջ, և ով է Քրիստոսն Իր մեջ: Նա պետք է իմանա Տեր Հիսուս Քրիստոսի ներկայիս ծառայությունը, որը Նա կատարում է՝ նստած Հոր աջ կողմը:

Գիտելիքը Հիսուսի ներկայիս ծառայության մասին խթանեց իմ հոգևոր աճն ավելի, քան ցանկացած այլ բան: Մենք պետք է ավելացնենք մեր գիտելիքն այն ծառայության մասին, որը Նա կատարում է այսօր՝ որպես Քահանայապետ (տե՛ս Եբր. 4.14-16), որպես Դատապաշտպան (հայ.՝ «Բարեխոս», տե՛ս Ա Հովհ. 2.1), որպես Բարեխոս (տե՛ս Հռոմ. 8.34, Եբր. 7.25), որպես Հովիվ (տե՛ս Սաղմ. 23.1, Հովհ. 10.14) և որպես Տեր:

Այն, որ մենք լսել ենք ուսմունքներ այս մասին, դեռ չի նշանակում, որ մենք վարվում ենք այդպես: Երբ մենք սնվենք այս իրողությամբ և ճանաչենք այս ճշմարտությունը, կհասնենք լիարժեք գիտելիքին Աստծո Որդու մասին և կատարյալ (հասուն) կլինենք:

Ճանաչել Սուրբ Հոգուն

Հոգևոր մարդը ճանաչել է երանելի մտերմությունը Սուրբ Հոգու հետ՝ ստանալով հայտնություն Նրա մասին Խոսքի մեջ: Դուք կարող եք լինել մկրտված Սուրբ Հոգով և խոսել այլ լեզուներով, սակայն այդպես էլ չվերապրել այդպիսի մտերմություն:

Եվ սա շատ ցավալի է: Մկրտությունը Սուրբ Հոգով քարոզվել է ոչ ճշգրիտ: Մարդիկ մտածում են. «Ես մկրտված եմ Սուրբ Հոգով», և որ դրանով ամեն ինչ ավարտվում է: Սակայն, իրականում, դրանով ամեն ինչ սկսվում է: Եվ այդ սխալ մտածելակերպի պատճառով նրանք այդպես էլ չեն սովորում մտերմորեն ճանաչել Սուրբ Հոգուն և դադարում են աճել:

Լինելով հոգևոր մանուկներ՝ նրանք ընդունել են Սուրբ Հոգու լեցունությունը, խոսել են այլ լեզուներով և կլանվել են այդ արտաքին դրսևորմամբ: Անկասկած, ես հավատում եմ այլ լեզուներով խոսելուն: Փա՛ռք Աստծուն դրա համար: Բայց նրանք մշտապես խոսում են այն մասին, թե ինչ են իրենք «զգացել», և փորձում են կրկին «զգալ» դա:

(Ինձ նույնիսկ մի փոքր չի հետաքրքրում՝ արդյո՞ք կրկին «կզգամ» այն, ինչ զգացել եմ: Ես չեմ հիմնավորում ոչինչ զգացմունքների վրա: Ես հիմնավորում եմ ամեն ինչ Խոսքի վրա):

Եվ երբ նրանք կորցնում են այն «զգացումը», որը, իրենց կարծիքով, ունեին, նրանք մտածում են, որ Նա հեռացել է: Բայց Նա չի հեռացել: Հիսուսն ասաց. *«Եվ Ես Հորը կաղաչեմ, և ուրիշ Մխիթարիչ կտա ձեզ, որ մնա ձեզ հետ հավիտյան»* (Հովհ. 14.16): Նա չասաց, որ Սուրբ Հոգին կմնա երկու շաբաթով: Նա չասաց, որ Սուրբ Հոգին արձակուրդի կգա: Նա ասաց, որ Սուրբ Հոգին կգա, *«որ մնա ձեզ հետ հավիտյան»:*

Ինչ-որ մեկն ասաց ինձ. «Բայց եղբա՛յր Հեգին, մի՞թե դուք չեք հավատում, որ երբ մարդը մեղանչում է, Սուրբ Հոգին թողնում է նրան»:

Իհարկե՝ ո՛չ: Եթե Նա թողներ մարդուն, այդ մարդը հավիտյան կդատապարտվեր և կկորսվեր: Նա այդպես էլ չէր կարողանա վերադառնալ Աստծուն: Սուրբ Հոգին չի գալիս և գնում: Ոչ մի աստվածաշնչյան հատված չի սովորեցնում այս մասին: Այն բանից հետո, երբ Դավիթը շնացավ մի կնոջ հետ և սպանեց նրա ամուսնուն, նա ասաց իր ապաշխարության աղոթքի մեջ. *«Քո Սուրբ Հոգին մի՛ վերցրու ինձնից»* (Սաղմ. 51.11): Եթե Սուրբ Հոգին թողներ նրան, նա այլևս չէր կարողանա ապաշխարել: Նա այլևս չէր կարողանա աղոթել: Նա այլևս չէր կարողանա վերադառնալ:

Եվ եթե Նա թողներ ձեզ, ձեզ համար նույնպես ամեն ինչ ավարտված կլիներ: Նա դեռ ձեզ հետ է և

ցույց է տալիս ձեզ ապաշխարության ճանապարհը: Եթե դուք մեղանչել եք և ընկել եք, Նա դեռ ձեզ հետ է՝ որպես Աստծո ներկայացուցիչ, որպեսզի ցույց տա ձեզ ելքը և վերադարձնի ձեզ:

Ես հասկացել եմ, որ երբ չեմ հնազանդվել Աստծուն և մեղանչել եմ, ինձ հանդիմանել է ոչ թե իմ ներսում գտնվող Սուրբ Հոգին, այլ հենց իմ հոգին: Հիսուսն ասաց, որ Ինքը չեկավ այս աշխարհ, որ հանդիմանի աշխարհը, այլ՝ որ աշխարհը փրկվի Իր միջոցով (տե՛ս Հովհ. 3.17):

Ես հասկացել եմ, որ Սուրբ Հոգին եղել է ինձ հետ, որպեսզի բացի Աստծո Խոսքն ինձ համար և ցույց տա այն ծառայությունը, որը Հիսուսը կատարում է ինձ համար այսօր: Եվ Նա մեղմորեն է անում դա: Նույնիսկ երբ ես անհնազանդ էի գտնվում և այնքա՜ն էի ամաչում, որ ատում էի իմ արարքն իմ էության ամեն մի բջիջով, Նա քաղցրությամբ և մեղմությամբ առաջնորդում էր ինձ՝ ցույց տալով ելքը և վերադարձի ճանապարհը:

... որպես Ներբնակվողի

Ա ՀՈՎՀԱՆՆԵՍ 4.4

«Դուք Աստծուց եք, որդյակնե՛ր, և հաղթեցիք նրանց, որովհետև ավելի մեծ է Նա, որ ձեզանում է, քան թե նա, որ աշխարհի մեջ է»:

Մենք պետք է գիտակցենք մեզանում բնակ-

վող Սուրբ Հոգու ներկայությունը և սովորենք վարվել դրանում՝ Խոսքի լույսի ներքո: Այդ դեպքում, ճգնաժամային պահերին մենք հանդարտ և զուսպ կլինենք, քանի որ կիմանանք, թե ինչ է ասում Աստվածաշունչը, անկախ այն բանից՝ մեզ այդպե՞ս է «թվում», թե՞ ոչ:

Եթե, բախվելով ճգնաժամի, դուք գիտեք, որ «Մեծ է Նա, որ իմ մեջ է, քան նա, որ այս աշխարհում է», դուք գլուխը կտրած հավի պես այսուայն կողմ չեք վազվզի ՝ փորձելով օգնություն գտնել: Դուք կիմանաք, որ օգնություն ունեք: Նա ձեր ներսում է. Ավելի Մեծը ձեր ներսում է: Դուք մտերմորեն հաղորդակցվում եք Նրա հետ, և Նա ցույց կտա ձեզ, թե ինչ պետք է անեք:

Կյանքի յուրաքանչյուր ճգնաժամին Նա ճշտորեն ցույց է տալիս, թե ինչ ես պետք է անեմ: Նա բարձրանում է իմ ներսում՝ լուսավորելով իմ միտքը և տալով առաջնորդություն իմ հոգուն: Բայց Նա չի կարող անել դա, եթե դուք բավականաչափ ծանոթ չեք Նրա հետ, որպեսզի հասկանաք դա:

Եթե դուք վերստին ծնված եք և լցված եք Սուրբ Հոգով, ձեր ներսում կա այն ամենը, ինչ երբևէ անհրաժեշտ կլինի ձեզ հաջողության հասնելու համար: Հիսուսն ասաց. *«Եվ Ես Հորը կաղաչեմ, և ուրիշ Մխիթարիչ կտա ձեզ»* (Հովհ. 14.16): Այն հունարեն բառը, որը այս խոսքում թարգմանվել է

«Մխիթարիչ» բառով, նույնպես նշանակում է Խորհրդական, Օգնական, Բարեխոս, Դատապաշտպան, Զորացնող և Կողքին կանգնող (ըստ Ընդլայնված թարգմանության):

Ծանոթացե՛ք Սուրբ Հոգու հետ Խոսքի միջոցով: Երբ իմանաք, թե ինչ է Խոսքն ասում Նրա մասին, դուք կիմանաք, թե ինչպես է Նա գործում և ինչպես է Նա հայտնում Իրեն: Դուք կիմանաք, թե ինչպես պետք է նվիրվեք Նրան և ինչպես պետք է վարվեք Նրա հետ: Եվ դուք կկարողանաք հոգևորապես աճել:

... որպես Ուսուցչի

Ահա մի հրավեր՝ Աստծո խորը իրողությունները ճանաչելու թանկ և երանելի մի հրավեր Հոգու կողմից.

> **Ա ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻ 2.12**
>
> «Եվ մենք ոչ թե այս աշխարհի հոգին առանք, այլ այն Հոգին, որ Աստծուց է, որ ճանաչենք այն բաները, որ Աստծուց տրվեցին մեզ»:

Մենք չստացանք այս աշխարհի հոգին, այլ Սուրբ Հոգին՝ այն Հոգին, որն Աստծուց է: Ինչո՞ւ: Ի՞նչ նպատակով. *որպեսզի մենք ինչ-որ բան իմանանք:*

Հիսուսն ասաց Նրա մասին. «Նա կսովորեցնի ձեզ: Նա կառաջնորդի ձեզ ամբողջ ճշմարտության մեջ: Նա ցույց կտա ձեզ գալիք բաները: Նա կհայտնի ձեզ այն, ինչ կվերցնի Ինձնից»:

Խոսելով *«այն բաների»* մասին, *«որ Աստծուց տրվեցին մեզ»*՝ Պողոսը նկատի ուներ Եփեսացիների 3.1-ը՝ *«ամեն հոգևոր օրհնություն երկնավոր բաներում Քրիստոսով»:*

Ա ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻ 2.13

«Որն էլ խոսում ենք, ոչ թե մարդկային իմաստության սովորած խոսքերով, այլ Սուրբ Հոգու սովորեցրածներով՝ հոգևորները հոգևորների հետ համեմատելով»:

Ուշադրություն դարձրեք մի պնդման վրա, որը Պողոսն արեց ավելի վաղ այս գլխում. *«Բայց իմաստություն ենք խոսում կատարյալների հետ* (հասունների՝ մանուկ քրիստոնյաները չեն հասկանա դա), *և ոչ թե այս աշխարհի իմաստությունը, և ՈՉ ԷԼ ԱՅՍ ԱՇԽԱՐՀԻ ԻՇԽԱՆՆԵՐԻՆԸ, ՈՐ ՊԻՏԻ ԽԱՓԱՆՎԵՆ»* (խոսք 6): Մեկ այլ թարգմանության մեջ գրված է. «Ոչ այս աշխարհի գահազուրկ իշխանությունների»: Սա այն ամենի մասն է, ինչ Նա կատարել է մեզ համար:

Իր մահվամբ, թաղմամբ և հարությամբ Հիսուսը գահընկեց արեց սատանային և բոլոր հոգևոր ուժերին, որոնք իշխում էին այս երկրում՝ սկսած այն պահից, երբ Ադամը հանձնեց սատանային իր իշխանությունը պարտեզում: Ադամն այս աշխարհի աստվածն էր: Աստված տվել էր նրան իշխանություն Իր ձեռքի բոլոր գործերի վրա: Բայց նա մեծ դավաճանություն գործեց՝ հանձնելով իր իշխանությունը

սատանային: Եվ սատանան դարձավ այս աշխարհի աստվածը (տե՛ս Բ Կորնթ. 4.4):

Եփեսացիների 6.12-ում գրված է. *«Որովհետև մեր պատերազմը արյան և մարմնի հետ չէ, այլ՝ իշխանությունների և պետությունների հետ, այս աշխարհի խավարի աշխարհակալների հետ, այն չար հոգիների հետ, որ երկնավորների մեջ են»:*

Հիսուսը գահընկեց արեց նրանց: Համաձայն այն մեծ փրկության ծրագրի, որը կատարելու համար Աստված ուղարկեց Հիսուսին, այս իշխանությունները գահընկեց են արվել: Նրանք այլևս չեն կարող իշխել մեզ, բայց մենք կարող ենք իշխել նրանց Հիսուսի անունով:

Այս իմաստությունը *«ոչ թե մարդկային իմաստության սովորած խոսքերով»* է, *«այլ Սուրբ Հոգու սովորեցրածներով»* (Ա Կորնթ. 2.13): Այն հոգևոր իրողությունների բացահայտում է: Բնականորեն դուք չէիք կարող իմանալ, որ Հիսուսը պարտության մատնեց սատանային՝ ձեր կյանքը փրկելու համար: Դուք չէիք կարող տեսնել, թե ինչպես Նա արեց դա: Աշակերտները տեսան, թե ինչպես Նա մահացավ Գողգոթայում, բայց նրանք չգիտեին, թե ինչու Նա մահացավ: Քանի դեռ Նա նրանց հետ էր, Նա փորձում էր ասել նրանց այդ մասին: Բայց երբ Հիսուսը մահացավ, նրանք չգիտեին դրա պատճառը: Եվ երբ Նա հայտնվեց նրանց, նրանք հարցրին. *«Տե՛ր,*

այս ժամանակո՞ւմ ես կանգնեցնում Իսրայելի թագավորությունը» (Գործք 1.6): Նրանք չհասկացան փրկության ծրագիրը և այն, թե ինչ Աստված արեց իրենց համար փրկության աշխատանքի միջոցով, մինչև որ Սուրբ Հոգին չեկավ և չսովորեցրեց նրանց: Սա անկարելի էր տեսնել բնական աչքերով: Բնական մարդը ոչ մի կերպ չէր կարող հասկանալ սա: Հոգևոր իրողությունները բացահայտվում են անձամբ Աստծո Հոգու օգնությամբ և ուժով:

Նրա ժառանգությունը

Հոգևոր մարդը գիտի, թե որն է իր ժառանգությունը:

ԿՈՂՈՍԱՑԻՆԵՐԻ 1.12-14

«Եվ գոհություն տաք Հորը, որ մեզ արժանացրեց մասնակից լինելու սուրբերի վիճակին (կամ՝ «ժառանգությանը») լույսում,

որ փրկեց մեզ խավարի իշխանությունից և փոխադրեց Իր սիրելի Որդու արքայության մեջ,

որի ձեռքով ունենք փրկություն, Նրա արյունով՝ մեղքերի թողություն»:

Մեկ այլ թարգմանության մեջ գրված է. «Գոհություն տանք Հորը, Ով կարողություն է տվել մեզ...»: Եթե Նա *«արժանացրել է մեզ»,* նշանակում է՝ Նա կարողություն է տվել մեզ: Ինչի՞ համար: Վայելելու սուրբերին տրված ժառանգության մեր բաժինը լույսի մեջ:

Հոգևոր մարդը կիմանա, թե որն է իր ժառանգությունը լույսի մեջ, որովհետև Աստծո Խոսքի լույսը կշողա և կհայտնի դա նրան: Նա կիմանա, որ ունի կարողություն այն վայելելու համար:

Նրա կարողությունը

Աստված է տվել մեզ մեր կարողությունը: Նա է մեր կարողությունը: Այդ կարողությունն ի հայտ է գալիս, երբ մենք բացահայտում ենք Աստծո շնորհքի գանձերը, որոնք պատկանում են մեզ:

Մեր մտածելակերպն այնքա՜ն մակերեսային է եղել որոշ բնագավառներում, որ Աստծո օրհնությունները գողացվել են մեզնից: Օրինակ, մենք մեջբերել ենք Գործք 1.8-ը. *«Բայց դուք զորություն կառնեք, երբ որ Հոգին ձեզ վրա գա, և Իմ վկաները կլինեք Երուսաղեմում և ամբողջ Հրեաստանի և Սամարիայի մեջ՝ մինչև երկրի ծայրերը»,* և առանց այն ուսումնասիրելու շեշտադրել ենք «զորություն» բառը՝ չհասկանալով, թե ինչ է նշանակում այս խոսքում:

Ես եկեղեցու հովիվ էի, երբ ընդունեցի մկրտությունը Սուրբ Հոգով և խոսեցի այլ լեզուներով: Լսելով, որ Ամբողջ Ավետարանի շարժման հավատացյալները խոսում էին «զորության» մասին՝ ես կարծում էի, որ դա պետք է ազդեցիկ ֆիզիկական և զգացմունքային վերապրում լիներ: Իսկ ես պարզապես

խոսում էի լեզուներով (սակայն երբ կարդացի Գործք Առաքելոց գիրքը, տեսա միայն լեզուներով խոսելու մասին: Այնպես որ, եթե լիներ այլ տեսակի վերապրում, որը կարևոր էր, Աստվածաշնչում գրված կլիներ): Ու թեև մեկուկես ժամ լեզուներով խոսում էի և երեք երգ էի երգում լեզուներով, ես մտածում էի ամբողջ ընթացքում. «Աստվա՛ծ իմ, շատ անգամներ, երբ ինքս էի աղոթում, ես շատ ավելի օրհնված էի, քան հիմա»:

Բայց բանն այն է, որ Սուրբ Հոգուն ընդունելը չի նշանակում օրհնություն ստանալ: Դուք կարող եք օրհնություններ ստանալ դրանից առաջ և դրանից հետո: Դա նշանակում է, որ դուք ընդունել եք Աստվածային Անձի, Ով մուտք է գործում ձեր մեջ և բնակվում է ձեր հոգում:

Ես չգիտեի այդ մասին: Ես փորձում էի ցնցվել, ինչ-որ բան զգալ, և մտածում էի. «Ես չեմ զգում ավելի շատ զորություն, քան նախկինում»:

Այնպես որ, վերադարձա իմ եկեղեցի և ոչինչ չասացի այդ մասին: Ես չէի զգում, որ ունեի ավելի շատ զորություն՝ քարոզելու համար, բայց մարդիկ եկեղեցում սկսեցին վկայել այդ մասին:

Նրանք ասում էին.

- Քեզանում կա այնպիսի բան, ինչ դու չես ունեցել:

- Ի՞նչ, - հարցնում էի ես:

- Ավելի մեծ կարողություն, քան նախկինում: Քո քարոզներն ավելի ազդեցիկ են:

Ես գտա Գործք 1.8-ում գտնվող *«զորություն»* բառը «Յանգի համաբարբառում» և պարզեցի, որ «զորություն» թարգմանված այս հունարեն բառը նույնպես նշանակում է «կարողություն»:

Իմ եկեղեցին նկատել էր, որ ես քարոզում էի ավելի մեծ կարողությամբ, քան անցյալում: Իսկ իմ միտքը կենտրոնացել էր «զորություն» բառի վրա: Աստված ասաց, որ մենք կարողություն կստանանք, իսկ մենք անտեսել ենք կարողությունը՝ փորձելով զորություն գտնել:

Հովհաննեսն այն անվանեց օծություն և ասաց, որ այն ձեզանում է: Երբ դուք գիտեք, որ Աստծո կարողությունը ձեզանում է, դուք հասկանում եք, թե ինչ Նա նկատի ուներ՝ ասելով. *«Ավելի մեծ է Նա, որ ձեզանում է»:*

Եթե դուք գիտեք այս մասին, դժվարությունների բախվելիս կապավինեք Նրան, փոխարենը պայքարեք և փորձեք այնքան աղոթել, մինչև որ զորություն իջեցնեք Երկնքից կամ բորբոքեք այն ձեզանում: Դուք կարող եք պարզապես հանդարտվել և ուրախ լինել: Դուք կարող եք ցնծալ ամբողջ ընթացքում, քանի որ գիտեք, որ Ավելի Մեծը ձեզանում է: Նա կբարձրացնի ձեզ: Նա հաջողություն կտա ձեզ: Նա կհանի ձեզ դժվարությունից:

Հոգևոր մարդը կհասկանա սա, բայց մանուկը չգիտի այս մասին: Մանուկը միայն կենտրոնացած է իր վերապրումների վրա:

Աստված արժանացրել է մեզ. Նա կարողություն է տվել մեզ: Այդ կարողությունը գալիս է Սուրբ Հոգու լեցունությամբ: Այո՛, այդ կարողությունը վկայելու համար է, բայց այն չի սահմանափակվում դրանով: Նա տվել է մեզ մեր ժառանգությունը վայելելու կարողություն:

Փրկությունը և մեղքերի թողությունը մեր ժառանգությունն են (տե՛ս Կողոս. 1.13,14): Մենք փրկվել ենք սատանայի իշխանությունից: Սատանան չունի իշխանություն ձեր կյանքում, իմ կյանքում և եկեղեցու կյանքում: Եկեք չտանք նրան ոչ մի իշխանություն: Մենք փրկվել ենք նրա իշխանությունից և փոխադրվել ենք Աստծո սիրելի Որդու թագավորության մեջ (խոսք 13):

Առաջնորդվել Նրա խոսքով

Դուք գտնվում եք Նրա պաշտպանության և հոգատարության ներքո: Դուք սնվում եք երկնային հացով: Այդ հացն Աստծո Խոսքն է: Հիսուսն ասաց. *«Ոչ միայն հացով կապրի մարդ, այլ ամեն խոսքով, որ դուրս է գալիս Աստծո բերանից»* (Մատթ. 4.4): Երկնքի մանանան Աստծո Խոսքն է: Սնվելով Նրա Խոսքով՝ դուք հոգևորապես կաճեք Աստծո Որդու պատկերով և հասակով:

Եվ դա միակ միջոցն է այդ վիճակին հասնելու համար: Որքան էլ աղոթքը կարևոր լինի, դուք չեք հասնի այդ վիճակին աղոթելով: Թեև ծոմապահությունն ունի իր տեղը, դուք չեք հասնի այդ վիճակին ծոմապահությամբ: Թեև սեփական անձի ուրացումն ունի իր տեղը քրիստոնեական կյանքում, դուք չեք հասնի այդ վիճակին՝ ուրանալով ձեր անձը: Փա՛ռք Աստծուն վերապրումների համար: Վերապրումներն ունեն իրենց տեղը քրիստոնեական կյանքում: Թեև դուք ունենաք բազմաթիվ հրաշալի վերապրումներ, տեսիլքներ և հայտնություններ, դրանք չեն հասցնի ձեզ այդ վիճակին: Այդ վիճակին ձեզ չեն հասցնի նաև հոգևոր պարգևները: Այդ ամենն ունի իր տեղը և նպատակը, բայց Աստվածաշունչը ճշտորեն ցույց է տալիս մեզ, թե ինչպես հասնել այդ վիճակին: Եվ տեղի է ունենում Խոսքը ճանաչելու միջոցով:

Հոգևոր մարդը նա է, ում կյանքում Խոսքը իշխանություն է ձեռք բերել նրա մտքի և մարմնի վրա: Խոսքը բերել է նրան Աստծո կամքի հետ ներդաշնակության, քանի որ Աստծո Խոսքը հենց Աստծո կամքն է:

ՄԱՍ V

Գլուխ 12

ՃԻՇՏ ՍՆՆԴԱԿԱՐԳ

Դուք պետք է ճիշտ սննդակարգ ունենաք, եթե ցանկանում եք աճել:

Ո՞րն է այդ սննդակարգը:

Իհարկե, Աստծո ամբողջական Խոսքը: Բայց մասնավորապես՝ Նոր կտակարանը: Պատճառն այն է, որ մենք ապրում ենք Նոր ուխտի ներքո, ոչ թե Հին ուխտի: Որոշ բաներ, որոնք ասվել են այն ժամանակ, չեն վերաբերում մեզ: Շատ սկզբունքներ վերաբերում են, բայց որոշ բաներ՝ ոչ: Դրանք վերաբերում են հրեաներին:

Նոր կտակարանի որոշ հատվածներ գրված են հատկապես ձեր օգտի համար (այլ հատվածներ, ինչպիսիք են չորս Ավետարանները, գրված են ոչ

միայն քրիստոնյաների (հավատացյալների), այլև աշխարհի (մեղավորների) օգտի համար): Նոր կտակարանի նամակներն անմիջապես հասցեագրված են եկեղեցուն: Անցկացրե՛ք ձեր ժամանակի մեծ մասը՝ սնվելով առաքյալների թղթերով:

Ոչ ոք չէր սովորեցրել ինձ այդ մասին, բայց ես հավատում եմ, որ իմ հիվանդության մահճին, որի վրա վերստին ծնվեցի 15 տարեկանում, ես անգիտակցաբար հետևեցի Աստծո Հոգու առաջնորդությանը: Առաջին անգամ, երբ ֆիզիկապես ի վիճակի էի Աստվածաշունչ կարդալ իմ անկողնում, կարդալով «Հին կտակարան» և «Նոր կտակարան» վերնագրերը՝ մտածեցի, որ նորը պետք է որ փոխարինած լինի հինին: Այնպես որ, ես սկսեցի կարդալ Աստվածաշունչը Մատթեոսի Ավետարանից:

Հետագայում հասկացա, որ առաքյալների թղթերն ուղղված էին եկեղեցիներին՝ սկսած հռոմեացիներին և կորնթացիներին ուղղված Պողոսի թղթերից մինչև Պետրոսի և Հովհաննեսի թղթերը: Տարիներ շարունակ իմ աստվածաշնչյան ուսումնասիրության 90%-ը ես նվիրել եմ հենց առաքյալների թղթերին: Սա այն սննդակարգն է, որը ես պետք է ունենամ: Սա այն ուղերձն է, որը գրված է ինձ համար: Այն, ինչ գրված է այստեղ, անկարելի է գտնել Աստվածաշնչի այլ հատվածներում: Պողոսը պարզորեն նշում է, որ Աստծո խորհուրդը հայտնվել է *«հիմա»* (տե՛ս Հռոմ. 16.25,26):

Թող ձեր սննդակարգը հիմնականում բաղկացած

լինի այն թղթերից կամ նամակներից, որոնք ուղղված են Եկեղեցուն: Թող այն մասնավորապես բաղկացած լինի Ա Կորնթացիների 13-րդ գլխից և Հովհաննեսի Առաջին թղթից:

Ունեցեք Ա Կորնթացիների 13-րդ գլխի *«Ընդլայնված թարգմանությունը»* և ուշադրությամբ կարդացե՛ք այն: Այս թարգմանությունը, իր անվան համեմատ, կընդլայնի այս գլխի խոսքերը և կօգնի ձեզ ավելի լավ հասկանալ դրանց իմաստը:

Սնվե՛ք Հովհաննեսի Առաջին թղթի բոլոր հինգ գլուխներով:

Դուք կբացահայտեք, որ այս երկու գրվածքները՝ Ա Կորնթացիների 13-րդ գլուխը և Հովհաննեսի առաջին թուղթը, բացահայտում և հայտնում են վեհ ուսմունքը սիրո մասին: Հովհաննեսը կրկին ու կրկին անդրադառնում է սրան:

Ա ՀՈՎՀԱՆՆԵՍ 3.14

«Մենք գիտենք, որ մահից ի կյանք փոխվեցինք, որովհետև եղբայրներին սիրում ենք»:

Ա ՀՈՎՀԱՆՆԵՍ 3.17

«Ով որ այս աշխարհի ապրանքն ունենա և տեսնի իր եղբորը կարոտ մի բանի և իր գութը փակի նրանից, ինչպե՞ս Աստծո սերը բնակված կլինի նրանում»:

Ա ՀՈՎՀԱՆՆԵՍ 2.5

«Բայց ով որ Նրա խոսքը պահի, իրավի Աստծո սերը նրանում կատարյալ է»:

Ա ՀՈՎՀԱՆՆԵՍ 4.18

«Վախ չկա սիրո մեջ, այլ կատարյալ սերը հեռացնում է վախը... նա, ով վախենում է, կատարյալ չէ սիրո մեջ»:

Ահա ընդամենը մի քանիսը այս թղթում եղող բազմաթիվ նման պնդումներից:

Աստծո բնությունը սերն է: Որպես Նրա զավակ՝ ձեզանում կա սիրո բնությունը: Այնուամենայնիվ, այդ բնությունը պետք է սնուցվի՝ աճելու համար: Եթե դուք չսնուցեք այն սկզբնաղբյուրից, այն չի աճի և չի զարգանա ձեր կյանքում:

Ես լիովին համոզված եմ, որ եթե յուրաքանչյուր քրիստոնյա խորապես ուսումնասիրի Ա Կորնթացիների 13-րդ գլուխը և Հովհաննեսի առաջին թուղթը և որոշ ժամանակ հարատևի դրանցում, կանցնի ընդամենը մի փոքր ժամանակ, և քրիստոնյաներն այնպե՜ս կփոխվեն, որ ստիպված կլինեն կսմթել իրենց՝ ասելով. «Սա ե՞ս եմ»:

Շատ ժամանակ չի անցնի, և նրանց ընտանիքներն այնպե՜ս կփոխվեն, որ նրանք կզարմանան: Քանի որ Ա Կորնթացիների 13-րդ գլխում գրված է, որ սերը *«իրենը չի որոնում»:* Մանուկները՝ թե՛ բնական, թե՛ հոգևոր, մշտապես որոնում են իրենցը: Մանուկը մշտապես ասում է. «Մայրի՛կ, Ձոնին վերցրել է իմ սայլակը», կամ «Իմ տիկնիկը Մերիի մոտ է»: Կռիվներ, վեճեր իրենց իրերի համար: Մեր ընտանիքներում գոյություն ունեցող վեճերը

և ամուսնալուծությունները պատկերում են ժամանակակից եկեղեցու մանուկ վիճակը: Այն մարդիկ, որոնք վարվում են սիրով և հասունացել են սիրո մեջ, այդպես չեն վարվի: Մանկությունը եկեղեցում կարող է բուժվել, միայն եթե հավատացյալներն ուսումնասիրեն Աստծո Խոսքը, սնվեն Աստծո Խոսքով և կիրառեն Աստծո Խոսքը:

Ուսումնասիրե՛ք փրկության ծրագիրը: Իմացե՛ք, թե ով եք դուք Քրիստոսում, և թե ով է Քրիստոսը ձեզանում: Իմացե՛ք, թե ինչ դիրք ունեք Աստծո առջև: Իմացե՛ք այն մասին, որ դուք Աստծո արդարությունն եք Քրիստոս Հիսուսում: Իմացե՛ք, թե ինչ արեց Հիսուսը ձեզ համար Իր մահվան, թաղման, հարության, համբարձման և Հոր աջ կողմը նստելու միջոցով: Իմացե՛ք, թե ինչ է Նա անում ձեզ համար հենց հիմա՝ Հոր աջ կողմը նստած՝ կատարելով Իր ներկա ծառայությունը, որում Նա հավիտյան ապրում է, որպեսզի բարեխոսի մեզ համար: Այս գիտելիքը կօգնի ձեզ աճել մանուկ վիճակից՝ դառնալով հասուն մարդ Քրիստոսում:

Ահա Աստծո մեկնությունն այս թեմայով.

Ա ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻ 4.7

«Որովհետև ո՞վ է քեզ որոշում. ի՞նչ ունես դու, որ չես առել, և եթե առել ես, ինչո՞ւ ես պարծենում չառածի պես»:

Այն ամենը, ինչ ունենք Աստծուց, մենք ստացել ենք շնորհքի միջոցով:

ԵՓԵՍԱՑԻՆԵՐԻ 4.7

«Բայց ամեն մեկիս տրված է շնորհքը՝ Քրիստոսի պարգևի չափով»:

Թեև յուրաքանչյուր հավատացյալ ծնվել է որպես մանուկ, նա ունի շնորհքի չափ և ավանդ, որը կհոգա ամեն կարիք նրա կյանքում:

Յուրաքանչյուր հավատացյալ ունի նույն վերստին ծնունդը, նույն հավիտենական կյանքը, նույն աստվածային սերը, նույն շնորհքը, նույն Սուրբ Հոգուն (մենք ճանաչում ենք Նրան որոշակի չափով, վերստին ծնվելու պահից, բայց վերստին ծնվելուց հետո կարող ենք ունենալ նաև Հոգու լիությունը), նույն Հավիտենական Բարեխոս Հիսուս Քրիստոսին և նույն անզուգական երկնային Հորը:

Եթե այս ամենը ճշմարիտ է, նշանակում է՝ կարիք չկա, որ մենք տկար լինենք և մանուկներ մնանք. նայելով ժամանակին, մենք պետք է արդեն հասունացած լինեինք:

Կրկին խոսենք հասուն հավատացյալ լինելու մասին՝ ըստ Եփեսացիների 4.13,14-ի. *«Մինչև որ ամենքս հասնենք հավատքի և Աստծո Որդուն ճանաչելու միությանը և կատարյալ մարդ լինենք՝ Քրիստոսի կատարյալ հասակի չափով, որ այլևս երեխա չլինենք»:*

Աստված ոչ մի դեպքում չի ծրագրել, որ դուք մնաք հոգևոր մանկության մեջ, ճիշտ այնպես, ինչ-

պես որ Նա չի ծրագրել, որ դուք մնաք մանկության մեջ մարմնով կամ մտքով:

Փոքրիկ երեխաները գրավում են մեզ: Նրանք հաճելի և հրաշալի են: Բայց մի՞թե ցավալի չի լինի, եթե երեխան ապրի 20-25 տարի, սակայն չունենա ֆիզիկական կամ մտավոր աճ: Ես տեսել եմ նման մարդու. նա 38 տարեկան էր և դեռ քնում էր օրորոցի մեջ: Նրա մայրը, որը գրեթե 70 տարեկան էր, տակդիր էր հագցնում նրան և կերակրում էր գդալով, ինչպես փոքրիկ մանկան: Մարդու սրտից արյուն է կաթում այդպիսի մարդկանց համար: Տարեց ծնողներ, որոնց մյուս երեխաները մեծացել և ամուսնացել են, իսկ նրանք դեռ ստիպված են հոգ տանել այդ մեկի մասին:

Բայց գիտեք, նույնքան ցավալի է, երբ քրիստոնյաներն են նման վիճակում: Շատերը հենց այսպիսին են: Եթե մենք կարողանայինք հոգևորապես նայել նրանց, կտեսնեինք, որ նրանք այդպես էլ չեն զարգացել: Նրանք դեռ մանուկներ են: Քառասուն տարեկան մարդ, որը դեռ մանուկ է, եսասեր, նեղացկոտ և հեշտորեն վիրավորվող, լցված է նախանձով և խանդով:

Մի տարեց սարկավագ, որը փրկվել էր և լցվել էր Սուրբ Հոգով 30 տարի առաջ, եկավ իմ տուն՝ լաց լինելով և փնթփնթալով երեխայի պես.

- Եղբա՛յր Հեգին, դու չես այցելում ինձ՝ ինչպես այլ մարդկանց: Անցած շաբաթ ես երեք անգամ տեսել եմ քո մեքենան այսինչ եղբոր տան մոտ:

- Ճիշտ է, և չեմ էլ պատրաստվում այցելել քեզ, - ասացի նրան: - Չէ՞ որ ինքդ վկայեցիր, որ փրկվել ես 30 տարի առաջ հոկտեմբեր ամսին և 30 տարի է՝ լցված ես Սուրբ Հոգով:

Նա մեծ երեսնամյա մանուկ էր:

Այն մարդը, որի տան մոտ նա տեսել էր իմ մեքենան, փրկվել էր մեր հավաքույթների ընթացքում մոտավորապես մեկ շաբաթ առաջ: Քանի որ նա դեռ նորածին մանուկ էր, սայթաքում էր և սխալներ էր գործում, Աստված խոսեց իմ սրտին և ուղարկեց նրա մոտ: Եվ ես գնացի՝ նրան օգնելու համար:

Ես ասացի այդ սարկավագին.

- Դու կարիք չունես, որ ինչ-որ մեկը վազի քեզ մոտ և շշով կերակրի: Ի՛նքդ պետք է այցելես մարդկանց:

Մեր եկեղեցիները լի են մանուկներով: Վերցրե՛ք նրանց շշերը, և նրանք կսկսեն լաց լինել: Փորձեք համոզել նրանց, որ վեր կենան ու հեռանան հոգևոր օրորոցից և զիջեն այն որևէ նորածնի. նրանք ոչ մի դեպքում չեն համաձայնի:

Մեկ այլ սարկավագ, որն առաջնորդ էր և պետք է օրինակ լիներ եկեղեցում, բարկացել էր և այլևս եկեղեցի չէր հաճախում: Ես գիտեի, որ ինչ-որ խնդիր կար, քանի որ նրա կինը շարունակում էր հաճախել հավաքույթներին (որոշ տղամարդիկ լիովին կկործանվեին, եթե լավ կանայք չունենային): Ես տեսա նրան քաղաքում, և նա հազիվ էր խոսում ինձ հետ:

Նա կոպիտ էր, սառն էր և փքված էր՝ դոդոշի պես:

Նրա կինը հրաշալի անձնավորություն էր, և ես հարցրի նրան.

- Ի՞նչ է պատահել ամուսնուդ:

- Նա բարկացել էր ինչ-որ բանի պատճառով և եկեղեցուց տուն հասնելուն պես պառկեց քնելու: Երեք օր չէր խոսում նույնիսկ ինձ հետ: Ի վերջո հարցրի նրան, թե ինչ է տեղի ունեցել: Ես մտածում էի, որ նա բարկացել էր ինձ վրա, բայց այդպես չէր: Ո՛չ էլ քեզ վրա էր բարկացել: Ինչ-որ մեկը նստել էր նրա աթոռին: Նա միշտ նստում է երկրորդ շարքում՝ վերջից երկրորդ աթոռին, և երբ եկեղեցի եկավ, ինչ-որ մեկն արդեն նստել էր այդտեղ. նա այնպե՛ս բարկացավ, որ կանգնած մնաց՝ չցանկանալով նստել ուրիշ ոչ մի տեղ:

Այդպիսի մարդը հարմար չէ սարկավագ լինելու համար:

Աստված ոչ մի դեպքում չէր ծրագրել, որ նա հոգևոր մանուկ մնար: Նա ցանկանում է, որ մենք հոգևորապես աճենք:

Հորդորներ հոգևոր աճի և հասունության մասին

ԵՓԵՍԱՑԻՆԵՐԻ 3.20

«Բայց Նրան, որ կարող է առատությամբ անել բոլոր բաներից ավելի, քան որ խնդրում ենք և իմանում, այն զորության չափով, որ մեզանում ներգործում է»:

Կարիք չկա, որ մնանք մանուկ վիճակում կամ թերաճ լինենք: Աստծո զորությունը գործում է մեզանում: Աստծո կարողությունը գործում է մեզանում: Այնուամենայնիվ, փոխարենը դրան տեղի տալը, մանուկները տեղի են տալիս մարմնին:

ՓԻԼԻՊԵՑԻՆԵՐԻ 4.13

«Ամեն բան կարող եմ ինձ զորացնող Քրիստոսով»:

Տեսե՛ք: Թերաճությունը տե՛ղ չունի մեզանում:

ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐԻ 5.11

«Որի համար շատ բան ունենք ասելու, և դժվար է մեկնել, որովհետև դուք դանդաղ եղաք լսելիքով»:

Եբրայեցիների թուղթն ուղղված չէ այս աշխարհին. այն ուղղված է քրիստոնյաներին՝ հավատացյալներին: Եթե հավատացյալը զգույշ չլինի, նրա լսողությունը կարող է ծանրանալ այնպես, որ նա անընկալունակ կդառնա Խոսքի հանդեպ: Դա կարող է պահել նրան մանկության մեջ և մարմնավոր վիճակում: Կարդանք հաջորդ խոսքը.

ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐԻ 5.12

«Որովհետև ժամանակին նայելով՝ պիտի վարդապետ լինեիք: Կրկին կարոտ եք սովորելու, թե ինչ են Աստծո խոսքերի առաջին նշանագիրները, և կարոտողներ եղաք կաթի, և ոչ թե հաստատ կերակուրի»:

Սա չի նշանակում, որ նրանցից յուրաքանչյուրը

պետք է վարդապետի կամ ուսուցչի պարգև ստանար: Սա նշանակում է, որ քանի որ նրանք անձամբ ճանաչել էին Խոսքը և սնվել էին դրանով, նրանք պետք է կարողանային սովորեցնել ինչ-որ մեկին: Յուրաքանչյուր հավատացյալ պետք է ձգտի սովորեցնել առնվազն մեկ մարդու: Բայց դուք չեք կարող սովորեցնել, եթե մանուկ եք և դեռ սնվում եք կաթով:

ԵԲՐԱՅԵՑԻՆԵՐԻ 5.13,14

«Որովհետև նա, ով կաթնակեր է, անհմուտ է արդարության խոսքին, որովհետև տղա է:

Բայց կատարյալների համար է հաստատ կերակուրը»:

Պողոսը խոսում է միևնույն բանի մասին Բ Տիմոթեոսի թղթում:

Բ ՏԻՄՈԹԵՈՍ 3.7

«Որ ամեն ժամանակ սովորում են և երբեք դեպի ճշմարտության գիտությանը չեն կարողանում գալ»:

Մի՞թե այսօր այս խոսքը չի նկարագրում որոշ հավատացյալների: Նրանք եկեղեցի են հաճախում ամեն կիրակի, շարունակ սովորում են, բայց այդպես էլ չեն հասունանում: Երբ լինում է փորձանք, հիվանդություն, ունեցվածքի կորուստ կամ սիրելի անձնավորության մահ, նրանք հայտնվում են կաթվածահար և անօգնական վիճակում թշնամու ներկայությամբ:

Նրանք ունեն Աստծո մատակարարումը, քանի որ

նրանք հավատացյալ են, և Աստված տվել է նրանց անհրաժեշտ ամեն ինչ: Նրանք ունեն Աստծո կարողությունը: Նրանք ունեն Աստծո սիրով լի Խոսքերը: Բայց երբեք չեն օգտվել այդ ամենից: Նրանք երբեք չեն օգտագործել իրենց պատկանող հարստությունը ճգնաժամերի բախվելիս:

Բոլորս ենք բախվում կյանքի ճգնաժամերին: Սակայն կա տարբերություն, երբ դուք մանկության մարմնավոր փուլում եք, և երբ դուք գոնե ինչ-որ չափով աճել եք:

Բախվելով ճգնաժամի՝ երեխաները, որոնք այդպես էլ չեն հասունացել, անկարող են օգտագործել այն, ինչ պատկանում է իրենց: Նրանք դեռ մանկության փուլում են: Այս համեմատությունն իսկապես դիպուկ է:

Եփեսացիների 5.1,2-ը ցույց է տալիս, թե ինչպիսին նրանք կարող էին լինել.

> **ԵՓԵՍԱՑԻՆԵՐԻ 5.1,2**
>
> «Արդ, նմանող եղե՛ք Աստծուն՝ ինչպես սիրելի որդիներ:
>
> Եվ սիրով գնացեք, ինչպես որ Քրիստոսն էլ մեզ սիրեց և Իր անձը մեզ համար մատնեց պատարագ և զոհ՝ Աստծո անուշ հոտ լինելու»:

Ինձ դուր է գալիս մեկ այլ թարգմանություն. «Ուրեմն, եղե՛ք Աստծուն նմանակողներ՝ ինչպես

սիրելի զավակներ»: Ի՞նչ նկատի ունի այս խոսքը՝ պատվիրելով մեզ նմանակել Աստծուն:

Հիշեք՝ Աստված սիրո Աստված է: Հովհաննեսի առաջին թղթում, որը ես ուզում էի, որ դուք որոշ ժամանակ ուսումնասիրեիք, Հովհաննեսն, ըստ էության, ասում է, որ եթե վարվում եք սիրով, դուք վարվում եք Աստծո մեջ. այդ դեպքում Աստված ձեզանում է, և դուք՝ Աստծո մեջ, որովհետև Աստված սեր է:

Նմանակե՛ք Աստծուն սիրով. *«Աստված այնպես սիրեց այս աշխարհը...»* (Հովհ. 3.16): Նա սիրեց մեզ, երբ մենք դեռ մեղավոր էինք: Ուրեմն, նմանակե՛ք Նրան սիրով վարվելու հարցում: Հեշտ է սիրել նրանց, ովքեր սիրում են ձեզ: Յուրաքանչյուրը կարող է անել դա: Բայց մենք պետք է վարվենք Աստծո պես. մենք պետք է նմանակենք Նրան՝ սիրելով տհաճ մարդկանց, սիրելով մեզ չսիրողներին, սիրելով մեր թշնամիներին:

Դուք չեք կարողանա այդպես վարվել, քանի դեռ ձեզանում չկա Աստծո սերը: Եվ դուք այդպես չեք վարվի, քանի դեռ չեք աճել սիրո մեջ:

Եթե դուք նեղացկոտ եք և հեշտորեն վիրավորվում եք, անպայման չէ, որ Քրիստոսի Մարմնից դուրս գտնվող թշնամիներն ինչ-որ բան անեն: Բավական է, որ պարզապես մի հավատացյալ՝ մի եղբայր Տիրոջ մեջ, անի աննշան մի բան, և դուք գրեթե պատրաստ կլինեք կտրել նրա գլուխը:

Նմանակե՛ք Աստծուն սիրով վարվելու մեջ: Սա մեր արտոնությունն է: Մենք պետք է ապրենք հենց այսպես, և մենք կարող ենք անել դա: Որպես եկեղեցի՝ մենք պետք է առաջնորդվենք Նոր ուխտի հետևյալ օրենքով.

> **ՀՈՎՀԱՆՆԵՍ 13.34,35**
>
> «Նոր պատվիրան եմ տալիս ձեզ, որ իրար սիրեք: Ինչպես Ես ձեզ սիրեցի, որ դուք էլ իրար սիրեք:
>
> Սրանով կգիտենան ամենը, թե Իմ աշակերտներն եք, եթե իրար հանդեպ սեր ունենաք»:

Մարդկային հոգու պտուղը

Երբ դուք վերստին ծնվում եք, սերը մարդկային հոգու առաջին պտուղն է: Այն Սուրբ Հոգու պտուղը չէ: Թարգմանիչները կոպիտ սխալ են թույլ տվել՝ «Հ» տառը մեծատառ գրելով Գաղատացիների 5.22-ում: Այս խոսքում գրված է մարդկային հոգու մասին:

Հիսուսն ասաց. *«Ես որթն եմ, դուք՝ ճյուղերը»* (Հովհ. 15.5):

Ինչի՞ վրա է աճում պտուղը: Ճյուղերի վրա:

Մի՞թե Սուրբ Հոգին է ճյուղերը:

Ո՛չ: Մենք ենք ճյուղերը:

Հոգու պտուղը (Գաղատ. 5.22) այն պտուղն է, որը հասունանում է ձեր կյանքում՝ ձեր մեջ բնակվող Քրիստոսի կյանքի շնորհիվ:

Որտեղի՞ց գիտեք և ինչի՞ց կարող եք որոշել, որ դուք փրկված եք:

«Մենք գիտենք, որ մահից ի կյանք փոխվեցինք, որովհետև եղբայրներին սիրում ենք» (Ա Հովհ. 3.14):

Սա վերստեղծված, վերածնված մարդկային հոգու պտուղն է (տե՛ս Գաղատ. 5.22,23): (Դուք կարող եք ընտրել հոգու յուրաքանչյուր պտուղը և ապացուցել ըստ Աստվածաշնչի, որ եթե փրկված եք, դուք ունեք այն: Օրինակ՝ խաղաղությունը: Հռոմեացիների 5.1-ում գրված է. *«Արդ մենք, հավատքով արդարացած լինելով, Աստծո հետ խաղաղություն ունենք մեր Տեր Հիսուս Քրիստոսի ձեռքով»):*

Եթե դուք վերստին ծնված եք, այս սերը ձեզանում է: Միգուցե դուք չեք գործածում այն: Բայց այն ձեր ներսի մարդու՝ ձեր հոգու մեջ է:

Եթե դուք ցանկանում եք աճել և հասունանալ մանկության վիճակից, պետք է սովորեք սնուցել այս սիրո բնությունն Աստծո Խոսքով և գործածել այն ձեր կյանքում: Այդ կերպով դուք կաճեք սիրո մեջ:

Դուք չեք աճի սիրո մեջ որևէ այլ կերպով: Դուք կարող եք նստել և աղոթել. «Աստվա՛ծ, սե՛ր տուր ինձ: Աստվա՛ծ, օգնի՛ր ինձ սիրել իմ եղբորը: Աստվա՛ծ, օգնի՛ր ինձ սիրել այս աշխարհը», և դա նույնքանով օգուտ կբերի ձեզ, որքանով՝ եթե պտտեք

ձեր բութ մատները և մանկական երգեր երգեք:

Դուք պետք է հասկանաք հետևյալը. Աստվածաշունչը սովորեցնում է, որ քանի որ դուք ծնված եք Աստծուց, դուք ծնված եք սիրուց: Դուք հաղորդակից եք դարձել աստվածային բնությանը՝ Աստծո բնությանը, Ով սեր է, և դուք ունեք այն, առնվազն մի փոքր չափով: Եվ երբ պատրաստ լինեք սնուցել այս սիրո չափն Աստծո Խոսքով և գործածել, դուք կսկսեք ձեր հոգևոր զարգացումը և աճը: Հակառակ դեպքում դա տեղի չի ունենա:

Սերը պետք է լիակատար իշխի Եկեղեցու սրտում:

Ա ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻ 10.24

«Ոչ ոք միայն իր անձի օգուտը չորոնի, այլ ամեն մեկն իր ընկերոջինն էլ»:

Քանի՞սն են մեզնից ձգտում սեփական օգտին. մեծ մասը: Երբ սերը չի իշխում, կյանքի դրդապատճառները խեղաթյուրվում են, վարքն անբնական է դառնում, և մարմինն իշխում է հոգուն՝ դարձնելով միտքը երկրային իրողությունների գերին:

ՀՌՈՄԵԱՑԻՆԵՐԻ 12.2

«Եվ մի՛ կերպարանվեք այս աշխարհի կերպարանքով, այլ նորոգվե՛ք ձեր մտքի նորոգությամբ, որ դուք քննեք, թե ինչ է Աստծո կամքը՝ բարին, հաճելին և կատարյալը»:

Մարդու գլխավոր կարիքն իր միտքը նորոգելն է:

«Եվ մի՛ կերպարանվեք այս աշխարհի կերպարանքով...» (այլ թարգմանության մեջ գրված է. «Մի՛ կերպարանվեք այս դարաշրջանի կերպարանքով»): Մի՛ մտածեք այնպես, ինչպես մտածում է այս դարաշրջանը: Մի՛ մտածեք այնպես, ինչպես մտածում է այս սերունդը: Մի՛ մտածեք այնպես, ինչպես մտածում է այս աշխարհը: Մի՛ նմանվեք այս աշխարհին կամ այս դարաշրջանին:

«...այլ նորոգվե՛ք ձեր մտքի նորոգությամբ, որ դուք քննեք, թե ինչ է Աստծո կամքը՝ բարին, հաճելին և կատարյալը»: Սա նշանակում է, որ եթե ձեր միտքը նորոգվի, իսկ այն նորոգվում է Աստծո Խոսքով, դուք կիմանաք, թե որն է Աստծո բարի, հաճելի (այլ թարգմանությունների մեջ՝ «ընդունելի» կամ «թույլատրելի») և կատարյալ կամքը: Բայց քանի դեռ ձեր միտքը նորոգված չէ, դուք կմնաք մանուկ վիճակում:

ԿՈՂՈՍԱՑԻՆԵՐԻ 3.10

«Եվ հագե՛ք նոր մարդուն, որ նորոգված է գիտությամբ՝ իր Ստեղծողի պատկերի պես»:

Անչափ կարևոր է, որ հավատացյալի միտքը նորոգվի Հիսուսի պատկերով: Սա այն նպատակներից մեկն է, որոնց համար Նա ուղարկեց Սուրբ Հոգուն՝ բնակվելու մեզանում և լինելու մեր Ուսուցիչը և Առաջնորդը: Նա ասաց. *«Բայց երբ որ Նա՝ ճշմարտության Հոգին գա, Նա կառաջնորդի ձեզ ամեն ճշմարտութ-*

յան մեջ (սա կարող է տեղի ունենալ միայն՝ երբ Հոգին Խոսքի միջոցով առաջնորդի մեզ Քրիստոսում մեր փրկության իրողության մեջ), *որովհետև Իր անձից չի խոսի, այլ ինչ որ կլսի, կխոսի, և գալու բաները կպատմի ձեզ»* (Հովհ. 16.13):

ԵՓԵՍԱՑԻՆԵՐԻ 4.23,24

«Եվ ձեր մտքի հոգով նորոգվե՛ք:

Եվ նոր մարդուն հագե՛ք, որ Աստծո պատկերի պես ստեղծված է՝ ճշմարտության արդարությամբ և սրբությամբ»:

Դուք գիտեք, ինչպես և ես, որ երբ հագնեք նոր մարդուն, որը ստեղծված է Աստծո մեջ ճշմարիտ արդարությամբ և սրբությամբ, ձեր կյանքում վերջ կդնեք նախանձին, կռիվներին և բաժանություններին, այնպես չէ՞: Եվ դուք այլևս մանուկ չեք լինի և չեք մնա այդ մարմնավոր վիճակում:

ՀՌՈՄԵԱՑԻՆԵՐԻ 12.1,2

«Արդ աղաչում եմ ձեզ, եղբայրնե՛ր, Աստծո ողորմությամբ, որ ձեր մարմինները ներկայացնեք կենդանի, սուրբ և Աստծո ընդունելի պատարագ, որ է ձեր բանավոր պաշտոնը:

Եվ մի՛ կերպարանվեք այս աշխարհի կերպարանքով, այլ նորոգվե՛ք ձեր մտքի նորոգությամբ»:

Պողոսը չէր գրում սա չփրկված մարդկանց: Տասնհինգ տարի ծառայության մեջ լինելուց հետո ես

ցնցվեցի՝ հասկանալով, որ Պողոսը գրում էր վերստին ծնված և Սուրբ Հոգով լցված մարդկանց, որ այս երկու փորձառություններն ազդեցություն չէին թողել նրանց մարմնի և մտքի վրա:

Այսպիսով, վերստին ծնունդը և մկրտությունը Սուրբ Հոգով ոչ թե մտավոր կամ ֆիզիկական փորձառություններ են, այլ՝ հոգևոր:

Վերստին ծնվելուց և Սուրբ Հոգով լցվելուց հետո ինքներդ պետք է որոշեք գործի դնել ձեր մարմինը: Ինքներդ պետք է որոշեք գործի դնել ձեր միտքը:

Ձեր իրական անձը՝ ձեր ներսի մարդն է, ձեր հոգևոր մարդը: Դուք պետք է ներկայացնեք ձեր մարմինն Աստծուն (Նա չի ցանկանում վերափոխված մարմին): Եվ դուք պետք է նորոգեք ձեր միտքը: Ինչպե՞ս. Աստծո Խոսքով, մտորելով Աստծո Խոսքի շուրջ և կիրառելով այն:

Գլուխ 13

ԽՐԱԽՈՒՍԱԿԱՆ ԽՈՍՔ

Մի՛ վիատվեք այն պատճառով, որ չեք դարձել հասուն քրիստոնյա մեկ օրում: Դուք նույնպես չեք դարձել հասուն մարդ մեկ օրում:

Աստվածաշունչը պատվիրում է ստուգել ինքներս մեզ: Այն չի պատվիրում ինձ ստուգել ձեզ, կամ ձեզ՝ ստուգել ինձ, այլ՝ ստուգել ինքներս մեզ: Ստուգելով ինձ՝ ես տեսնում եմ, որ որոշ բնագավառներում բարեհաջող կերպով աճում և հասունանում եմ: Այնուամենայնիվ, նայելով այլ բնագավառների՝ թվում է, թե դեռ մանուկ եմ: Եվ այլ բնագավառներում ես կարծես դեռ երեխա լինեմ: Կհամարձակվեմ ասել, որ դուք նույն վիճակում եք:

Կա՞ արդյոք այնպիսի մարդ, որը լիովին հասունա-

ցել է, լիովին հոգևոր է, արդեն կատարյալ է սիրո մեջ: Չե՛մ կարծում: Բայց փա՛ռք Աստծուն, մենք ձգտում ենք դրան:

Մի՛ վհատվեք այն պատճառով, որ չեք դարձել այդ-պիսին մեկ օրում: Չէ՞ որ դուք չվհատվեցիք, որ մեկ շաբաթ դպրոց գնալուց հետո ձեզ չտեղափոխեցին հաջորդ դասարան: Ո՛չ, դուք մնացիք առաջին դասա-րանում և անցաք երկրորդ դասարան մեկ տարի անց:

Մեկ օրում դուք հոգևորապես չեք աճի ճիշտ այն-պես, ինչպես որ մեկ օրում չաճեցիք մտքով կամ մարմնով: Այնուամենայնիվ, մենք պետք է հիշենք մեկ բան. դուք չպետք է դադարեք աճել:

Ես մշտապես հարցնում եմ ինձ՝ արդյո՞ք գիտեմ ավելին Աստծո մասին և ավելի եմ հասունացել այս տարի՝ նախորդ տարվա համեմատ:

Ես հավատում եմ կատարելությանը ձգտելուն: Ես դեռ կատարյալ չեմ, իսկ դո՞ւք: Բաց ես շարունակում եմ առաջ գնալ: Ես կանգ չեմ առնի և չեմ հանձնվի այն պատճառով, որ չունեցա աճ անցյալ շաբաթվա ընթացքում, կամ՝ որ ես սխալվեցի կամ ձախողվեցի:

Լիովին հասուն քրիստոնյան նույնպես չի հանձն-վի, քանի որ նա գիտի, որ Հիսուսը նստած է Հոր աջ կողմը և բարեխոսում է իր համար:

Առանց սիրո արված յուրաքանչյուր քայլ մեղք է: Շատ հաճախ մենք մտածում ենք, որ չենք մեղանչել,

եթե չենք խախտել Տասը Պատվիրաններից մեկը: Բայց դա Հին ուխտի օրենքն էր: Նոր ուխտի օրենքն այն է, որ մենք սիրենք միմյանց: Այնպես որ, ամեն խոսք՝ ասված առանց սիրո, մեղք է: Ամեն գործ՝ արված առանց սիրո, մեղք է:

Բայց Եկեղեցուն հասցեագրված նամակներից մեկում գրված է. *«Իմ որդյակնե՛ր, սա գրում եմ ձեզ, որ չմեղանչեք, և եթե մեկը մեղանչի, Բարեխոս ունենք Հոր մոտ՝ Հիսուս Քրիստոս Արդարին»* (Ա Հովհ. 2.1):

Ետ նայելով (և կարծում եմ՝ յուրաքանչյուրը, ով թեկուզ ինչ-որ չափով հոգևոր աճ է ունեցել, կասի նույնը), երբ մենք մանկության փուլերից մեկում էինք, կարծում էինք, թե շատ լավ հոգևոր վիճակում էինք: Մենք կարծում էինք, թե ապրում էինք գրեթե անմեղ կյանքով և համապատասխանում էինք մեզ համար սահմանված բոլոր չափանիշներին: Բայց երբ մի փոքր հոգևոր աճ ու զարգացում ապրեցինք, ետ նայելով՝ մենք հասկացանք, որ ավելի շատ էինք մեղանչում, քան մեզ թվում էր: Մենք պարզեցինք, որ ավելի շատ էինք սխալվում, քան գիտակցում էինք: Մենք չէինք վարվում սիրո մեջ:

Այնուամենայնիվ, մենք չմնացինք այդ վիճակում պարզապես այն պատճառով, որ ձախողվել էինք: Մենք վեր կացանք և շարունակեցինք առաջ գնալ:

Աստծո Խոսքի ճանաչողությունն է, որ օգնում է մեզ աճել: Խոսքը հոգևոր կերակուր է՝ կերակուր մեր հոգու համար:

Rhema Europe

Ինչո՞ւ արժե մտածել

«Ռեմա»
Աստվածաշնչյան ուսուցման կենտրոն ընդունվելու մասին

Սիա մի քանի հիմնավոր պատճառ.

- Ուսուցում աշխարհի առաջատար Հոգով լցված Աստվածաշնչյան դպրոցներից մեկում
- Ուսմունք, որի հիմքն Աստծո Խոսքի հանդեպ հաստատուն հավատքն է
- Աճ ձեր հոգևոր ընթացքի մեջ և արդյունավետ ծառայության գործնական ուսուցում
- Ընտրովի երրորդ և չորրորդ տարվա ինտենսիվ ծրագրեր. Երկրպագության դպրոց, Հովվական ծառայության դպրոց, Համաշխարհային միսիոներության դպրոց, Աստվածաշնչի ուսումնասիրության դպրոց և Ընդհանուր երկարացված ուսուցում

Ավելին իմանալու համար այցելե՛ք մեր կայքը.

www.rhema.eu
www.rbtc.org

«Ռեմա» Աստվածաշնչյան ուսուցման կենտրոնն ընդունում է ցանկացած ռասա, մաշկի գույն և ազգային պատկանելություն ունեցող ուսանողների:

ՈՐՏԵՂ ԵՔ ԴՈՒՔ ՁԵՐ ՀՈԳԵՎՈՐ ԸՆԹԱՑՔԻ ՄԵՋ

Քրիստոսի մարմնին անհրաժեշտ են հոգևորապես հասուն անդամներ: Երբ մենք վերստին ծնվում ենք, սկսում ենք մեր ընթացքը՝ որպես հոգևոր մանուկներ Քրիստոսում: Այնուամենայնիվ, Աստված չի նախատեսել, որ մնանք այդ վիճակում: Նա ցանկանում է, որ մենք հոգևորապես աճենք՝ դառնալով հասուն քրիստոնյա:

«Հոգևոր աճ» գրքում Քենեթ Է. Հեգինը հոգևոր աճի փուլերը համեմատում է ֆիզիկական աճի հետ:

Այս կարևոր գրքում դուք կսովորեք.

- Որոշել ձեր հոգևոր աճի ներկա փուլը:
- Աճել՝ հասնելով հոգևոր զարգացման հաջորդ փուլին:
- Մտերմորեն հաղորդակցվել Հոր, Որդու և Սուրբ Հոգու հետ:
- Նորոգել ձեր միտքն Աստծո խոսքի սննդակարգով:
- Հասկանալ տարբերությունը շնչավոր մարդու, մարմնավոր մարդու և հոգևոր մարդու միջև:

«Հոգևոր աճ» գրքի ուղերձը կարդալուց և ընդունելուց հետո այլևս նույնը չեք լինի: Դուք կզորացնեք Քրիստոսի մարմինը՝ աճելով և հասունանալով Աստծո մեջ:

Քենեթ Հեգինը ծառայեց մոտավորապես յոթանասուն տարի այն բանից հետո, երբ Աստված հրաշքով բժշկեց նրան սրտի արատից և արյան անբուժելի հիվանդությունից տասնյոթ տարեկանում: Թեև վերապատվելի Հեգինը գնացել է տուն՝ Տիրոջ մոտ, 2003 թվականին, այն ծառայությունը, որ նա հիմնադրել է, շարունակում է օրհնել բազում մարդկանց աշխարհով մեկ:

Քենեթ Հեգինի ծառայությունն ընդգրկում է. «Հավատքի խոսք» անվճար ամսագիրը, «ՌԵՄԱ» Աստվածաշնչյան ուսուցման կենտրոնը, «ՌԵՄԱ»-յի Սաների միությունը, «ՌԵՄԱ» Ծառայողական միջազգային միությունը, «Հավատքի գրադարան» հրատարակչությունը, «ՌԵՄԱ» Փոստային Աստվածաշնչյան դպրոցը և «ՌԵՄԱ» Բանտերի ծառայությունը: Վերապատվելի Հեգինի որդին և հարսը՝ Քենեթ Վ. և Լինեթ Հեգինները, միասին վարում են «Ռեմա փառաբանություն» շաբաթական հեռուստահաղորդումը, «Ռեմա՝ այսօրվա համար» ռադիոհաղորդումը, որը հեռարձակվում է աշխատանքային օրերին, ինչպես նաև անցկացնում են «Կենդանի հավատքի հավաքույթներ» աշխարհով մեկ: